ՄԵՐ ՀԱՎԱՏԱՄՔԸ

16 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Մաս Ա

1-18 դասեր

ԵՐԵՎԱՆ
«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ»
2011

ՀՏԴ 23/28(07)
ԳՄԴ 86.37գ 7
Մ662

Մ662 ՄԵՐ ՀԱՎԱՏԱՄՔԸ: 16 տարեկան երեխաների
քրիստոնեական ուսուցման ձեռնարկ. - Եր.:
«Տիգրան Մեծ», 2011.
Մաս Ա: 1-18 դասեր: - 128 էջ

ՀՏԴ 23/28(07)
ԳՄԴ 86.37գ 7

ISBN 978-99941-0-417-8

© World Vision, 2011
© Wordirect, 2011

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԱՑՆՈՂ՝ ԱՐԺ. ՏԵՐ ՊԱՐՈՒՅՐ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ **WORLD VISION**
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵՎ WORDIRECT ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՆԿԱՐԻՉ՝ ԼԵՎՈՆ ՋԱՔՅԱՆ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄ՝ ԱՐԱՄ ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ Ա **Ինչպե՞ս օգտագործել Աստվածաշունչը** 7

1. Աստվածաշունչը 9
2. Օգտագործենք Սուրբ Գիրքը 15

Գլուխ Բ **Հավատում ենք մեկ Աստծո՝ Ամենակալ Հորը** 21

3. Հավատում ենք մեկ Աստծո՝ Ամենակալ Հորը 23
4. Աստված՝ մեր Արարիչը 29
5. Աստված ստեղծում է մարդուն 35
6. Ադամն ու Եվան ստեղծվեցին իրար համար 41

Գլուխ Գ **Հավատում ենք մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն** . . . 47

7. Տեր Հիսուս Քրիստոս 49
8. Աստծո Որդին 55
9. Հիսուսը և Հայրը մեկ են 61
10. Հիսուս Քրիստոսը՝ Արարիչ 67

Գլուխ Դ **Ով մեզ՝ մարդկանցս, և մեր փրկության համար երկնքից իջնելով** . . 73

11. Ադամի ու Եվայի անհնազանդությունը 75
12. Աստված կամենում է փրկել 81
13. Ծնվեց Հիսուսը՝ Էմմանուել 87
14. Հիսուս Քրիստոսը՝ ճշմարիտ մարդ 93

Գլուխ Ե **Չարչարվեց, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ** . . . 99

15. Չարչարվեց 101

16. Խաչվեց և թաղվեց 107

17. Երրորդ օրը հարություն առավ 113

18. Համբարձվեց առ Հայր 119

Աղոթքներ 16 տարեկանների համար 123

Գլուխ Ա

ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

Այս տարի պիտի խորացնես քո իմացությունը քրիստոնեական մեր ուղղափառ հավատքի մասին, ինչպես այն արտահայտված է Նիկիական հանգանակում: Պիտի օգտագործես Աստվածաշունչը որպես Սուրբ Ավանդության հինգ աղբյուրներից հիմնականը, որպեսզի լավ հասկանաս Նիկիական հանգանակի՝ քրիստոնեական մեր հավատքի խոստովանության սահմանումները:

Ա գլխի երկու դասերի ընթացքում կսովորես Սուրբ Գրքի մասին, թե ինչպե՞ս է այն առաջացել, ո՞վ է հեղինակել, ի՞նչ բովանդակություն ունի և ինչպե՞ս կարելի է այն հեշտությամբ օգտագործել: Սա կօգնի քեզ առավել ինքնավստահ գործածելու Աստվածաշունչը, մինչ կշարունակենք ուսումնասիրել Նիկիական հանգանակի սուրբգրային հիմունքները:

Ծնողների համար

Այս տարի ձեր զավակը պիտի խորացնի իր գիտելիքները քրիստոնեական ուղղափառ մեր հավատքի մասին, ինչպես այն սահմանված է Նիկիական հանգանակում: Նրանք կօգտագործեն Աստվածաշունչը որպես Սուրբ Ավանդության հինգ աղբյուրներից հիմնականը, որպեսզի հասկանան Նիկիական հանգանակի՝ քրիստոնեական մեր հավատքի խոստովանության դրույթները:

Քաջալերե՛ք և աջակցե՛ք ձեր որդուն կամ դստերը հոգևոր այս ճամփորդությանը ձեռնամուխ լինելիս, որի նպատակն է խորացնել այն հավատքը, որը մեր հայրերից մեզ է ավանդվել և մեր միջոցով փոխանցվում է մեր զավակներին վաղ տարիքից ի վեր: Որպես հասուն պատանիներ, որ կանգնած են արդեն չափահասության նախաշեմին, նրանց հարկավոր են հմտություններ, որոնցով կկարողանան օգտագործել Սուրբ Գիրքը՝ Եկեղեցու Սուրբ Ավանդության կարևորագույն հինգ աղբյուրներից մեկը, որի վրա հիմնված է մեր դավանանքը:

1· ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

«Ես ցնծացի քո խոսքերով ինչպես մեկը, որ մեծ ավար է գտնում»:

Սաղմոս 118.162

Հայտնագործենք

■ Ի՞նչ գիտես Աստվածաշնչի մասին: Ստուգի՛ր գիտելիքներդ:

Ընտրի՛ր ճիշտ պատասխանները բառացանկից: Որոշները կարելի է օգտագործել մեկից ավելի անգամ:

1. Աստվածաշունչը գրվել է ..... կողմից:
2. Սուրբ Գիրքը բաժանված է ..... հիմնական մասերից: Առաջին մասը կոչվում է ..... , իսկ երկրորդը՝ ..... :
3. ..... գրվել է եբրայերեն լեզվով:
4. ..... գրվել է հունարեն լեզվով:
5. Սուրբ Գիրքը միշտ չէ, որ ..... մեկ հատորում:
6. Երբ Նազարեթի ժողովարանում Հիսուսին տվեցին Եսայի մարգարեի գիրքը կարդալու՝ նրան փոխանցեցին մի ..... :
7. ..... նշանակում է նամակ:
8. ..... ցույց է տալիս ..... գրքերի քանակը:
9. Ո՞ր ժանրի գրվածքներ հնարավոր չէ գտնել Աստվածաշնչում.
   - *պատմություն*
   - *իմաստասիրություն*
   - *բանաստեղծություն*
   - *պատգամների հավաքածու*
   - *երգեր,*
   - *գիտական թեզեր*
   - *նամակներ*
   - *ավետարաններ*

բազում մարդիկ	Հին Կտակարան	կարված լինել	փաթույթ
թուղթ	քսանյոթ	երկու	Նոր Կտակարան

Հաջորդ էջերում տես՝ արդյոք ճի՞շտ էին քո պատասխանները, և սովորի՛ր ավելին Սուրբ Գրքի մասին:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ՝ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ

Աստված միշտ շփվել է իր ժողովրդի հետ: Տերը դարեր ի վեր «խոսակցել» է նրանց հետ՝ ինքն իրեն ճանաչելի դարձնելով նրանց: Սրա մասին խոսում է Պողոս առաքյալը եբրայեցիներին ուղղված իր նամակի սկզբում.

Անցյալում բազում անգամներ և բազում ձևերով Աստված մեր հայրերի հետ խոսեց մարգարեների միջոցով, իսկ այս վերջին օրերին մեզ հետ խոսեց իր Որդու միջոցով: Աստված ամեն ինչի ժառանգ կարգեց նրան և նրա միջոցով ստեղծեց տիեզերքը:

Եբրայեցիներին 1.1-2

Սուրբ Գիրքը

Աստծո ժողովուրդը գրի է առել և սերնդե-սերունդ փոխանցել իր փորձառությունն Աստծո ինքնահայտնության առնչությամբ: Սկսած Աբրահամից և նրա ժառանգներից, որոնց Աստված ընտրեց հայտնելու ինքն իրեն, շատերը մխիթարություն գտան կարդալով Աստծո գրավոր խոսքը: Սերունդներն սպասում էին խոստացված Փրկչի գալստյանը, և Հիսուս Քրիստոսի ծնունդով մարդիկ արժանացան Աստծո լիարժեք ինքնահայտությանը: Աստվածաշունչը, հետևաբար, Աստծո ժողովրդի սուրբ գրքերն են՝ կազմված Հին և Նոր Կտակարաններից:

Ինչպե՞ս է գրվել Աստվածաշունչը

Աստվածաշունչը գրվել է շատ մարդկանց կողմից, բայց իրականում այն ունի միայն մեկ հեղինակ՝ Աստված: Սա չի նշանակում, որ Աստված մեկ առ մեկ թելադրել է Սուրբ Գրքի բոլոր բառերը, և մարդիկ գրի են առել: Այլ՝ Աստված ներշնչել է մարդկանց: Տերը լցրել է նրանց Սուրբ Հոգով, որով նրանք ի զորու են եղել գրել այնպես, ինչպես Տեր կամեցել է, որ մարդիկ Իրեն ճանաչեն:

Մե՞կ, թե՞ շատ Գրքեր

Դու սովոր ես տեսնել Սուրբ Գիրքը մեկ հատորի մեջ: Գուցե սա մտածել տա քեզ, թե այն միայն մեկ գիրք է: Իրականում Սուրբ Գիրքը շատ գրքերի հավաքածու է: Այն բաժանված է երկու հիմնական մասերի՝ Հին Կտակարան և Նոր Կտակարան: Հին Կտակարանը կազմված է Իսրայելի ժողովրդի սրբազան գրվածքներից, իսկ Նորը պարունակում է Աստծո ժողովրդի սրբազան գրվածքները, որոնք վկայում են Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու մասին: Համարվում է, որ դրանք երկուսն էլ Աստծո ներշնչած Խոսքն են:

Մինչ տպագիր մամուլի հայտնագործումը, Աստվածաշունչը գրվել է մագաղաթե կամ թղթե փաթույթների վրա: Դրանք իրենց մեջ ամփոփում էին պատմական, բանաստեղծական, քնարական գրքերը, իմաստության գրքերը և պատմվածքների հավաքածուներ: Նոր Կտակարանի մեջ մտնում են ավետարանները, Գործք առաքելոցը և Առաքելական թղթերը, որոնք գրվել են եկեղեցու վաղ տարիներին:

Բառարան

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ՝ այսպես է հայ ժողովուրդը կոչել Սուրբ Գիրքը:

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ՝ ի հայտ գալ: Աստված հայտնեց ինքն իրեն մարդկանց:

ՀԱՅՏՆՎԱԾ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՎԱԾ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՄԻՑ

Ներշնչված Սուրբ Հոգուց՝ Աստծո ժողովուրդն ստեղծեց Սուրբ Գիրքը, որպեսզի Աստծո մասին հայտնի մարդկանց: Սուրբ Գիրքը Աստծո և իր ընտրյալ ժողովրդի հետ հարաբերության պատմությունն է: Հայտնությունը չի ավարտվել: Աստված շարունակում է իր Խոսքի միջոցով հայտնել ինքն իրեն իր արարածներից յուրաքանչյուրին: Նույն Սուրբ Հոգին է, որ գործում է մարդկանց մեջ, երբ վերջիններս ձգտում են ճանաչել Աստծուն և պատասխանել Տիրոջ սիրուն: Ահա թե ինչու է անհրաժեշտ, որ Սուրբ Գիրքը մեկնաբանվի և ըմբռնվի Եկեղեցու կողմից, որն ստացավ մեր Տիրոջ խոստումը Պենտեկոստեի օրը՝ Սուրբ Հոգու գալստյամբ:

- Կարդա՛ Հիսուսի խոսքերն ուղղված ընտրյալ առաքյալներին: Ինչպե՞ս ես դա հասկանում: Գտի՛ր երկու կամ երեք բառեր, որոնք նկարագրում են Սուրբ Հոգու ներգործությունը Եկեղեցում, և դո՛ւրս գրիր դրանք:

Եթե սիրում եք ինձ, պիտի գործադրեք իմ պատվիրանները: Եվ ես պիտի աղաչեմ իմ Հորը, որ մի ուրիշ Մխիթարիչ տա ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ լինի: Դա Սուրբ Հոգին է, որ ճշմարտությունն է հայտնում: Աշխարհը չի կարող նրան ընդունել, որովհետև ո՛չ տեսնում է նրան, ո՛չ էլ ճանաչում: Բայց դուք ճանաչում եք նրան, որովհետև ձեր մեջ պիտի մնա և ձեզ հետ պիտի լինի: ... Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին իմ Հայրը կուղարկի ձեզ մոտ իմ անունով, նա ձեզ ամեն ինչ կսովորեցնի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ ես ասացի ձեզ:

Հովհաննես 14.15-17, 26

Աստվածաշնչի Գրքերը

Հին Կտակարան

Հնգամատյան
Ծննդոց
Ելք
Ղևտական
Թվեր
Երկրորդ Օրենք

Պատմական Գրքեր
Հեսու
Դատավորներ
Հռութ
Թագավորություններ Ա
Թագավորություններ Բ
Թագավորություններ Գ
Թագավորություններ Դ
Ա Մնացորդաց
Բ Մնացորդաց
Ա Եզրաս
Բ Եզրաս
Նեեմի
Եսթեր
Հուդիթ
Տոբիթ
Ա Մակաբայեցիներ
Բ Մակաբայեցիներ
Գ Մակաբայեցիներ

Իմաստության Գրքեր
Հոբ
Սաղմոսներ
Առակներ
Ժողովող
Երգ Երգոց
Իմաստություն Սողոմոնի
Սիրաքի Իմաստություն

Մարգարեական Գրքեր
Եսայի
Երեմիա
Երեմիայի ողբը
Բարուք
Եզեկիել
Դանիել
Օսեե
Հովել
Ամոս
Աբդիու
Հովնան
Միքիա
Նավում
Ամբակում
Սոփոնիա
Անգե
Զաքարիա
Մաղաքիա

Մանասեի Աղոթքը

Նոր Կտակարան

Ավետարանները
Մատթեոս
Մարկոս
Ղուկաս
Հովհաննես

Գործք Առաքելոց

Սբ Պողոսի Թղթերը
Հռոմեացիներին
Ա Կորնթացիներին
Բ Կորնթացիներին
Գաղատացիներին
Եփեսացիներին
Փիլիպեցիներին
Կողոսացիներին
Ա Թեսաղոնիկեցիներին
Բ Թեսաղոնիկեցիներին
Ա Տիմոթեոսին
Բ Տիմոթեոսին
Տիտոսին
Փիլիմոնին
Եբրայեցիներին

Ընդհանրական Թղթեր
Հակոբոս
Ա Պետրոս
Բ Պետրոս
Ա Հովհաննես
Բ Հովհաննես
Գ Հովհաննես
Հուդա

Հայտնություն

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՄԵՆՔ ՊԱՏՎՈՒՄ ԵՆՔ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

Աստվածաշունչը հատուկ տեղ է գրավում Եկեղեցու կյանքում: Սուրբ Գիրքը լայնորեն օգտագործվում է հոգևոր-եկեղեցական արարողությունների ընթացքում: Մենք լսում ենք Սուրբ Գրքի ընթերցումը տարբեր ծիսակատարությունների ժամանակ, Ավետարանը վերաբերվում է Սուրբ Պատարագի, ժամերգությունների, անդաստանի և այլ թափորների ընթացքում և կարդացվում: Սարկավագը նախապատրաստում է հավատացյալներին՝ ուշադրությամբ և երկյուղածությամբ լսելու Ավետարանի խոսքը:

Սարկավագ. Ալելուիա, օրթի (ոտքի):
Քահանա. Խաղաղություն բոլորին:
Ժողովուրդ. Եվ քո հոգուն:
Սարկավագ. Երկյուղածությամբ լսենք:
Սարկավագ. Սրբո Ավետարանիս Հիսուսի Քրիստոսի, որ ըստ...
Ժողովուրդ. Փառք քեզ Տեր Աստված մեր:
Սարկավագ. Պռոսխումե (ուշադիր):
Ժողովուրդ. Ասում է Աստված:

Աստծո Խոսքը լսելուն լավ պատրաստվելու համար մենք պետք է ժամանակ հատկացնենք շաբաթվա ընթացքում ուսումնասիրելու Սուրբ Գիրքը: Ահա թե ինչ է ուսուցանում մեզ Եկեղեցու հայրերից Սբ Հովհան Ոսկեբերանը Աստվածաշունչը սերտելու կարևորության մասին:

Սբ Հովհան Ոսկեբերան

Հապա ի՞նչ անել, ասում եմ ձեզ: Թող ձեզնից յուրաքանչյուրն իր ձեռքն առնի Ավետարանի այն հատվածը, որը պիտի ընթերցվի առաջիկա շաբաթ կամ կիրակի օրը. և մինչ այդ օրը գա, նստե՛ք տանը և կարդացե՛ք այն: Հաճախակի և զգուշությամբ ուշադրությո՛ւն դարձրեք բովանդակությանը և լա՛վ քննեք բոլոր մասերը՝ նշելով, թե ո՞րն է հստակ և որը՝ անորոշ, ո՞ր հատվածներն են թվում հակասական, որոնք, սակայն, իրականում այդպիսին չեն: Մի խոսքով՝ եթե բաց չեք թողել ասածս բոլոր կետերը, և կատարել եք, ուրեմն գնացե՛ք ունկնդրելու դրա ընթերցումը: Եվ այսպիսի բաներին նախանձախնդիր լինելը քիչ օգուտ չի լինի թե ձեզ և թե՛ ինձ համար:

Սբ. Հովհան Ոսկեբերան, 5-րդ դար:

Մտորե՛նք կիրակնօրյա Ավետարանի ընթերցման շուրջ

1. *Գտի՛ր առաջիկա կիրակիի Սուրբ Պատարագին ընթերցվելիք Ավետարանի հատվածը: Դիմի՛ր քո ուսուցչի կամ քահանայի օգնությանը:*
2. *Ցածրաձայն կարդա՛ ավետարանական հատվածը, ապա հետևիր Սբ Հովհան Ոսկեբերանի խորհրդին:*
5. *Քո խմբի անդամների հետ զրուցի՛ր դրա բովանդակության շուրջ, թե ի՞նչ հասկացար, և թե ի՞նչը հստակեցվելու կարիք ուներ:*
6. *Ներկա՛ եղիր Սուրբ Պատարագին՝ լսելու Ավետարանի ընթերցումը: Ունկնդրի՛ր ուշադրությամբ: Պարզապես թո՛ւյլ տուր, որ Աստծո Խոսքը լցվի քո ականջները և հասնի մինչև սիրտդ:*
7. *Ուշադրությո՛ւն դարձրու և նշմարի՛ր, թե ինչպե՞ս ես լսում Աստծո Խոսքը: Ի՞նչ ես զգում քո սրտում: Ունե՞ս նոր գաղափարներ: Ո՞րն է Աստծո պատգամը քեզ համար:*
8. *Տուն վերադառնալուց հետո գրառի՛ր քո տպավորությունները: Ըստ ցանկության՝ կարող ես կիսել այն քո դասընկերների հետ հաջորդ դասի ընթացքում:*

Աղոթել Սուրբ Գրքով

Տղամարդիկ և կանայք, ովքեր ձգտել են սերտացնել իրենց հարաբերությունն Աստծո հետ, աղոթքով դարձել են դեպի Աստվածաշունչը, քանի որ այնտեղ կարող էին հանդիպել մեր գթասիրտ Տիրոջը, ով սպասում է մեզ: Աստված խոսում է մեզ հետ անձնապես իր Խոսքի միջոցով, որպեսզի կատարի այն, ինչ հավիտյան կամեցել է մեր փրկության համար: Ահա թե ինչ է ասում Եսայի մարգարեն.

> Ինչպես որ, ասենք, երբ անձրև կամ ձյուն է իջնում երկնքից և կըրկին այնտեղ չի վերադառնում, քանի դեռ չի ոռոգել երկիրը, չի ծլեցրել ու պտղաբերել այն, սերմանողին սերմ և ուտելու հաց չի տվել, այդպես էլ պիտի լինի իմ խոսքը, որ ելնում է իմ բերանից. նա դատարկ չի վերադառնալու, մինչև որ չկատարի այն, ինչ կամենում եմ ես:
>
> Եսայի 55.10-11

Հայրերի հորդորները Սուրբ Գրքով աղոթելու մասին

Սուրբ Գրքի խորախորհուրդ խոսքերին մի՛ մոտեցիր առանց աղոթելու և Աստծուց օգնություն հայցելու, այլ ասա՛. «Տո՛ւր ինձ, Տե՛ր, զգայաբար ընկալել նրանցում ամփոփված գորությունը»: Համարի՛ր աղոթքը Սուրբ Գրքում արտահայտված ճշմարիտ իմաստի բանալի:

Սբ Իսահակ Ասորի

Երբ կարդում ես աստվածային Գրվածքների խոսքերը, նախ աղոթի՛ր Աստծուն, որ բացի սրտիդ աչքերը, որպեսզի չբավարարվես գրված բառերը կրկնելով, այլ կարողանաս նաև գործադրել դրանք երկյուղով. գուցե թե քո իսկ դատապարտության համար ես ընթերցում Աստվածաշնչի կենարար խոսքերը:

Սբ Հովհաննես Ոսկեբերան

- Եսայի մարգարեի խոսքը, ինչպես նաև Եկեղեցու հայրերի խրատները կարդալով և դրանց շուրջ մտածելով ինչպե՞ս դու ձեռնամուխ կլինես ինքնուրույն աղոթքով կարդալու Սուրբ Գիրքը: Կա՞ն արդյոք բաներ, որ կանեիր այլ կերպ, կամ միգուցե արդեն անում ես առաջարկված ձևով: Գրի՛ր քո մտածումները:

Աստծո Խոսքը՝ հայտնված արվեստի միջոցով

Մինչ տպագրական մեքենայի հայտնագործումը, Աստվածունչն ստեղծվում էր վանական գրիչների կողմից, ովքեր ձեռագիր կրկօրինակում էին Սուրբ Գիրքը: Ձեռագրերից շատերը պատկերազարդվում էին մանրակարներով, որոնք զետեղվում էին ձեռագրի էջերի լուսանցքներում կա՛մ էլ առանձին էջերի վրա: Դրանք պատկերի միջոցով հաղորդում էին սուրբգրային հատվածի պատգամը: Մանրանկարների նպատակը ոչ միայն ձեռագրի սոսկ զարդարանքն էր, այլև դրանցով փորձվում էր ներգրավել մարդկային բոլոր զգայարանները՝ Աստծո հայտնությանը հաղորդակից դարձնելու համար:

- Ուշադի՛ր նայիր մանրանկարին, ապա գրի՛ր, թե ինչ առնչություններ է այն ներկայացնում: Ավարտելուց հետո օգտագործի՛ր քո «համաբարբառը» և Աստվածաշնչում գտի՛ր այն հատվածը, որը համապատասխանում է մանրանկարին և կարդա՛ այն: Որքա՞ն մոտիկ կարողացար գուշակել պատգամը:



ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս տարի ձեր տղան կամ աղջիկը խորացնելու է իր գիտելիքները քրիստոնեական հավատքի մասին, ինչպես այն արտահայտված է Նիկիական հանգանակում: Ձեր զավակն ուսումնասիրելու է Աստվածաշունչը՝ քրիստոնեական Ավանդության հինգ աղբյուրներից հիմնականը, հասկանալու Նիկիական հանգանակի՝ քրիստոնեական մեր հավատքի խոստովանության սահմանումները:

Այս երկու դասերից առաջինը՝ Գլուխ Ա-ն աշակերտներին ներկայացնում է, թե ինչպե՞ս է առաջացել Սուրբ Գիրքը, ովքեր են հեղինակել, ինչպես նաև եկեղեցական մեկնությունները և Հին ու Նոր Կտակարանների գրքերի ընդհանուր ներածությունը:

Աշակերտները նաև սովորեցին, թե ինչպես է օգտագործվում Աստվածաշունչը եկեղեցական արարողությունների մեջ, և թե ինչպիսի՞ պատիվ են ընծայում Սուրբ Գրքին՝ որպես Աստծո Խոսքի: Այնուհետև նրանց ներկայացվեցին եկեղեցու հայրերի մտքերը Աստվածաշունչը որպես աղոթք օգտագործելու մասին:

Ընտանիքով առիթներ ստեղծե՛ք հաճախակի աղոթելու և խոսելու Աստծո Խոսքի մասին՝ օգտագործելով ձեր ընտանեկան Աստվածաշունչը:

2. ՕԳՏԱԳՈՐԾԵՆՔ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

«Երիտասարդն ի՞նչ միջոցով ուղղի ճանապարհն իր,
եթե ոչ քո խոսքերը պահելով»:

Սաղմոս 118.9

Հայտնագործենք

Կարդալ սովորելուց ի վեր դու ընթերցել ես տարբեր տեսակի գրվածքներ: Գրականության դասերին թերևս կարդացել ես բանաստեղծություններ, նովելներ ու վեպեր: Պատմության դասերին քեզ հանձնարարվել են ընթերցումներ, որոնք ավելի շատ պարունակում են պատմական փաստեր ու իրադարձություններ: Գիտության և մաթեմատիկայի դասերին անցել ես բանաձևեր և վարկածներ: Ո՞ր ոլորտի ընթերցանությունն ես ամենաշատը նախընտրում: Եվ ո՞րը՝ ոչ:

- Ըստ քո նախընտրելի տեսակի գրականության պատմի՛ր, թե ինչո՞ւ է այն քեզ այդքան հետաքրքրում: Ապա գրի՛ր ինքնուրույն ձևով: Եթե բանաստեղծություն է, գրի՛ր մեկ-երկու տող, եթե պատմություն է՝ համառոտ պատմական ակնարկ, եթե վեպ՝ մի պարբերություն քո նախընտրած թեմայով: Կիսի՛ր գրածներդ կողքիդ նստող ընկերոջդ հետ:

Աստվածաշնչում գտի՛ր գրականության զանազան ժանրեր Հին և Նոր Կտակարանների բովանդակությունն ուսումնասիրելիս:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Աստվածաշնչի Գրքերը

Ուսումնասիրի՛ր Հին Կտակարանի գրքերը և դրանց համառոտ նկարագրությունը: Աչքի՛ անցկացրու քո խմբին հանձնարարված գրքերի գլուխները՝ պատկերացում կազմելու, թե դրանք ինչի մասին են: Գրի՛ր քո հարցերը տետրակիդ մեջ, որոնք գուցե առաջանան դրանց հետ ծանոթանալիս:

Հին Կտակարան

ՀՆԳԱՄԱՏՅԱՆ

Ծննդոց

Ներկայացնում է Աստծո արարչագործությունը, Ադամի և Եվայի անկումը, ինչպես նաև Աբրահամին և Սառային՝ իբրև սկիզբ Աստծո ընտրյալ ժողովրդի և Աստծո խոստման:

Ելք

Եբրայեցի (հրեա) ժողովրդի ելքի պատմությունն է Եգիպտոսի գերությունից:

Ղևտական

Գիրքը նկարագրում է եբրայեցիների պաշտամունքը Ղևիի ցեղից սերվող քահանաների առաջնորդությամբ:

Թվեր

Սկսվում է Իսրայելի ժողովրդի մարդահամարով:

Երկրորդ Օրենք

Վերաբերում է լրացուցիչ օրենքներին, որոնք Մովսեսի միջոցով տրվեցին Աստծուց:

Նոյյան Տապանը

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐՔԵՐ

Հեսու

Մովսեսի մահից հետո Իսրայելի ժողովուրդը առաջնորդվում է դեպի խոստացված երկիր:

Դատավորներ

Ներկայացվում է եբրայական ցեղերի և դատավորների կյանքը, որոնք կառավարում էին երկիրը:

Հռութ

Պատմություն հեթանոս մի կնոջ մասին, ով ընդունեց միակ ճշմարիտ Աստծուն և դարձավ Դավիթ թագավորի նախնին:

Թագավորություններ Ա
Թագավորություններ Բ

Խոսվում է Սավուղ արքայի իշխանության և նրան հաջորդած գահաժառանգ Դավիթ թագավորի մասին:

Թագավորություններ Գ
Թագավորություններ Դ

Սկսվում է Դավթի որդի Սողոմոնի իշխանությամբ և ավարտվում թագավորության անկումով:

Ա Մնացորդաց
Բ Մնացորդաց

Ընդլայնված ներկայացվում է Գ և Դ Թագավորությունների գրքերում արձանագրված պատմությունները:

Ա Եզրաս
Բ Եզրաս
Նեեմիա

Շարունակում է Աստծո ժողովրդի պատմությունը Բաբելոնի գերությունից վերադառնալուց հետո:

Եսթեր
Հուդիթ
Տոբիթ
Ա Մակաբայեցիներ
Բ Մակաբայեցիներ
Գ Մակաբայեցիներ

Պատմական բաժնի վերջին գրքերը, որոնք պատմում են գերության մեջ և օտար տիրապետության լծի տակ ապրող հրեա ժողովրդի հերոսական և Աստծուց առաջնորդվող կյանքի մասին:

Սամվելն օծում է Դավթին

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԳՐՔԵՐ

Հոբ

Պատմություն ողբերգություն և անմեղ տանջանքներ կրած մարդու անսասան հավատքի մասին:

Սաղմոսներ /թվով 151/

Հինավուրց Իսրայելի շարակնոց, որոնք օգտագործվում են նաև Եկեղեցում:

Սողոմոնի Առակներ

Բարոյական և հոգևոր խրատների ժողովածու երիտասարդների համար:

Ժողովող

Խորհրդածությունների ժողովածու, որն անդրադառնում է Աստծո պատվիրանները պահելու իմաստությանը:

Երգ Երգոց

Քանանացիների հարսանեկան տաղ, որը Եկեղեցին դիտարկում է որպես խորհրդավոր սիրո երգ Աստծո և մարդու միջև:

Իմաստություն Սողոմոնի

Խոստանում է անմահություն աստվածավախ անձին:

Սիրաքի Իմաստություն

Երջանկությունը հնարավոր է միայն մեկ ճշմարիտ Աստծուն հնազանդվելու միջոցով:

Սողոմոն թագավոր

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳՐՔԵՐ

Եսայի

Մեկն է չորս մեծ մարգարեներից: Կանխասում է Աստծո ողորմությունը հանդեպ իր ժողովուրդը:

Երեմիա

Չորս մեծ մարգարեներից մեկը, ով Իսրայելի ժողովրդին ապաշխարության է կոչում:

Ողբ Երեմիայի

Բարուք

Այս երկուսը առանձին գրքեր են ըստ մեր Եկեղեցու Սուրբ Գրքի կանոնի:

Եզեկիել

Քահանա և մարգարե Բաբելոնի գերության շրջանում:

Դանիել

Սուրբ Ծննդյան և Հարության Ճրագալույցին Եկեղեցում կարդացվող երեք երիտասարդների պատմությունը քաղված է այս մարգարեի գրքից:

ՓՈՔՐ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

Օսեե

Հաղորդում է Աստծո փրկավետ սիրո պատգամը:

Հովել

Կանխասում է Սուրբ Հոգու՝ բոլոր մարդկանց վրա իջնելու մասին:

Ամոս

Հովիվ մարգարե, ով Իսրայելի ժողովրդին կոչում է ազնվության և արդարության հանդեպ աղքատը:

Աբդիու

Մարգարեանում է Բաբելոնից գերեդարձության մասին:

Հովնան

Մարգարե, որ չէր ուզում գնալ Նինվե:

Միքիա

Խոսում է խաղաղության մասին բոլոր նրանց, ովքեր ապրում են արդարությամբ:

Նավում

Մարգարեանում է Ասորեստանի պարտության մասին:

Ամբակում

Սոփոնիա

Անգե

Այս երեքն արձագանքում են Երեմիայի մարգարեությանը:

Զաքարիա

Հայտնի է Փրկիչ Թագավորի հայտնության մարգարեությամբ:

Մաղաքիա

Մարգարեներից վերջինը մինչև Հովհաննես Մկրտիչ:

Մանասեի աղոթքը

Երեք երիտասարդները հնոցի բոցերի վրա

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԸ

Նոր Կտակարանը կազմված է չորս ավետարաններից, որոնք ներկայացնում են Հիսուս Քրիստոսի առաքելությունը, ուսուցումները, մահը և հարությունը: Ավետարաններին հաջորդում են Գործք առաքելոցը, Առաքելական թղթերը և Հայտնության գիրքը:

- Ուսումնասիրի՛ր քո խմբին հանձնարարված գրքերը և նշի՛ր, թե ո՞ւմ է այն ուղղված և ըստ քեզ ի՞նչ նպատակով է այն գրվել: Գրի՛ առ այն ամենը, ինչ կգրավի քո ուշադրությունը, և ընթացքում ծագած հարցերը:

ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԸ

Մատթեոս
Մարկոս
Ղուկաս
Հովհաննես

Մատթեոս Ավետարանիչ

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

ՍԲ ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԹՂԹԵՐԸ

Հռոմեացիներին
Ա Կորնթացիներին
Բ Կորնթացիներին
Գաղատացիներին
Եփեսացիներին
Փիլիպեցիներին
Կողոսացիներին
Ա Թեսաղոնիկեցիներին
Բ Թեսաղոնիկեցիներին
Ա Տիմոթեոսին
Բ Տիմոթեոսին
Տիտոսին
Փիլիմոնին
Եբրայեցիներին

Մարկոս Ավետարանիչ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՂԹԵՐ

Հակոբոս
Ա Պետրոս
Բ Պետրոս
Ա Հովհաննես
Բ Հովհաննես
Գ Հովհաննես
Հուդա

Մատթեոս Ավետարանիչ

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Ավետարանիչ

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ուղղափառ Եկեղեցիների Սուրբ Գրքի Կանոնը

Քրիստոսից շուրջ 300 տարի առաջ հրեական բոլոր 12 ցեղերից ընտրված 72 հմուտ գիտնականներ թարգմանեցին Սուրբ Գիրքը հունարենի: Դա կատարվեց ժամանակի ազդեցիկ հունախոս հրեա ազգաբնակչության համար և դարձավ Հին Կտակարանի համընդհանուր ընդունված տարբերակը: Հենց այս տարբերակը հայտնի դարձավ «Սեպտուագինտա» անունով, հայերեն՝ Յոթանասնից, որը Հիսուսը և ավետարանիչներն օգտագործեցին, որը նաև վաղ եկեղեցու կողմից ընդունվեց որպես Հին Կտակարանի պաշտոնական կանոն:

Չնայած ավելի ուշ հրեական ռաբբիները վերատեսության ենթարկեցին իրենց գրքերը և իրենց կանոնից դուրս հանեցին որոշ գրքեր, որոնք կային Յոթանասնից թարգմանության մեջ, այսուհանդերձ Եկեղեցին մինչև այսօր շարունակում է օգտագործել Յոթանասնիցը՝ որպես Հին Կտակարանի ընդունված կանոն:

Հայ Եկեղեցու Հին Կտակարանի կանոնը պարունակում է 48 գիրք՝ հետևյալ չորս դասակարգումներով՝ Հնգամատյան, պատմական գրքեր, իմաստության գրքեր և մարգարեներ: Իսկ Նոր Կտակարանը կազմված է 27 գրքից: Սուրբ Գրքի Յոթանասնից կանոնը տարբերվում է Եբրայական կանոնով սահմանված Հին Կտակարանի գրքերի ցանկից, մինչդեռ երկուսն էլ կիսում են Նոր Կտակարանի գրքերի ցուցակը:

Կրկնություններ և Տարընթերցումներ

Մեր այսօրվա Աստվածաշունչը ենթարկվել է զանազան խմբագրումների: Սուրբ Գրքի գիտնականները պարզել են, որ Աստվածաշնչի շատ գրքեր, հատկապես Հին Կտակարանում, գրված են համատեղ խմբագրված վավերագրերից կամ աղբյուրներից: Աստվածաշնչի՝ հատկապես Հին Կտակարանի շատ գրքերում երբեմն հանդիպում ենք կրկնությունների, և երբեմն էլ՝ տարընթերցվող հատվածների: Դրանք հետևանք են բազում խմբագրումների, որ գրքերն անցել են տարիներով ու դարերով: Սակայն հիշյալ տարբերակումները որևիցե կերպով չեն աղճատում Աստվածաշնչի պատգամը: Սուրբ Գրքի յուրաքանչյուր ներշնչված հեղինակ ստացել է Աստծո ինքնահայտնությունը և այն արտահայտել ժամանակի լեզվին, մարդու աշխարհընկալմանը, ինքնաճանաչողությանը և աստվածճանաչողությանը պատշաճող ձևերով, որոնք ըստ այդմ գրի են առնվել, ապա խմբագրվել և ի վերջո ի մի բերվել մեկ գրքում:

- Կարդա՛ **Ծննդոց 1.26-31 և 2.4-25** հատվածները: Ինչպե՞ս է մարդու արարչագործությունը նկարագրվում յուրաքանչյուր հատվածում: Ի՞նչ կարող ես եզրակացնել քո դիտարկումներից:

Եվայի ստեղծումը

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳԼՈՒԽՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱՐՆԵՐԸ

Աստվածաշունչը միշտ չի ունեցել այսօրվա գլխաբաժանումներն ու համարազատումները: Դրանք կատարվել են ավելի ուշ շրջանում, որի օգնությամբ մարդիկ հեշտությամբ են սկսել գտնել Սուրբ Գրքի որոշակի հատվածները: Ամենավաղ շրջանի ենթաբաժանումները կատարվել են հին հրեաների կողմից, ովքեր այդպիսով բաժանել են Հին Կտակարանի ձեռագիր փաթույթները: Վաղ քրիստոնյաները նույնպես բաժանել են Նոր Կտակարանը պարբերությունների:

Հայ միջնադարյան ձեռագրերն ունեցել են զարդանախշված խորաններ, որոնցում ցանկագրվել են այդ պարբերությունները կամ հատվածները: Դրանց միջոցով մարդիկ կարողացել են գտնել իրենց հետաքրքրող ավետարանական հրաշքը, Քրիստոսի խոսքերը կամ որևէ այլ պատում:

Այժմեական Աստվածաշունչն ունի հետևյալ ենթաբաժանումները.

Հին Կտակարան և Նոր Կտակարան

- Յուրաքանչյուր կտակարան բաժանված է գրքերի:
- Ամեն գիրք բաժանված է գլուխների:
- Գլուխները բաժանված են համարակալված տողերի:

Աստվածաշնչյան որոշակի հատված գտնելու համար պետք է նախ գտնել գիրքը, ապա գլուխը և համարները: Դա ներկայացվում է հետևյալ կերպ.

Ծննդոց 6.1-22

Երբ հարկ է լինում նշել գլխի որոշակի համարներ կամ մեկից ավելի գլուխներ, գրվում է հետևյալ կերպ.

Ծննդոց 1.26-31, 2.1-3

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Առաջին գլխի 2-րդ դասը ձեր զավակին սովորեցրեց գրականության տարբեր ժանրեր, որոնցից կազմված է Աստվածաշունչը: Աշակերտները հնարավորություն ունեցան ծանոթանալու Հին և Նոր Կտակարանների յուրաքանչյուր գրքի ընդհանուր բովանդակությանը: Նաև ծանոթացան Սուրբ Գրքի հայկական կանոնին, որն օգտագործվում է ավանդական բոլոր եկեղեցիների՝ Ուղղափառների և Կաթոլիկների կողմից ևս: Միաժամանակ նրանց ուշադրության ներկայացվեց Սուրբ Գրքի կազմավորումը և առաջացումը: Աշակերտները սովորեցին, որ Աստվածաշնչի կազմումը որպես գիրք, գլուխ, համար, ինչպիսին մենք ունենք հիմա, ի հայտ է եկել այն ժամանակվանից, երբ գրքի հրատարակությունը հեշտացավ տպագիր մամուլի հայտնագործման շնորհիվ:

Սուրբ Գրքի բովանդակության անմիջական սերտումը կնախապատրաստի մեր աշակերտներին ավելի ինքնավստահ գործածելու Աստվածաշունչը, մանավանդ որ պիտի շարունակենք ուսումնասիրել Նիկիական հանգանակի սուրբգրային հիմունքները:

Տանը ձեռքի տակ ունեցե՛ք Աստվածաշունչ, որպեսզի դուք և ձեր երեխան կարողանաք հաճախակի այն օգտագործել:

Գլուխ Բ

ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵԿ ԱՍՏԾՈ՝ ԱՄԵՆԱԿԱԼ ՀՈՐԸ

Նիկիական հանգանակը՝ Հավատամքը, քրիստոնեական եկեղեցու հավատքի խորհրդանիշն է: Այն հստակ սահմանում է, թե ինչին ենք մենք հավատում կապված Աստծո և Նրա հարաբերությունը մարդկության և ամբողջ արարչության հետ, ինչպես նաև փրկագործությունն Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեր Տիրոջ միջոցով: Հավատամքն սկսվում է հետևյալ սահմանումով.

Հավատում ենք մեկ Աստծո՝ Ամենակալ Հորը, երկնքի և երկրի, երևելի և աներևույթ էակների Արարչին:

Այս գլխի չորս դասերին խոսվում է Աստծո մասին՝ որպես Ամենակալ Հոր և մեր գոյության աղբյուրի:

Դաս 3 ներկայացվում է սուրբգրային ըմբռնումն Աստծո մասին որպես սիրող Հոր, ով հոգ է տանում և պահպանում իր ստեղծած արարածներին:

Դաս 4 դիտարկվում է Աստծո արարչությունը և ցույց տրվում սերը, նպատակը, ներդաշնակությունը և դրանց բարի լինելը:

Դաս 5 արծարծվում է մարդկության ստեղծումը՝ որպես աստվածային անսահման սիրո արտահայտություն:

Դաս 6 քննվում է առաջին զույգի հարաբերությունը, որոնք ստեղծվեցին արտացոլելու Աստծո սերը և ստեղծագործությունը:

Ծնողների համար

Կարևոր է, որ մեր պատանիները առողջ և ճիշտ պատկերացում կազմեն աշխարհի և իրենք իրենց մասին՝ որպես Աստծո սիրո պտուղներ, քանզի Տերը կամեցավ այս ամենը գոյության կոչել սիրուց: Մեր ժամանակներում երիտասարդները ռմբակոծվում են տարբեր պատկերներով ու գաղափարներով, թե ինչպես է աշխարհը և նրանում գոյություն ունեցող ամեն ինչ առաջացել: Այս համայնապատկերում ամենաշատը պակասում է հենց ամենաէական իրողությունը, այն, որ Աստված է հիմնական շարժիչը և ամեն ինչի գոյության պատճառը:

Ձեր զավակն առիթ կունենա հստակ հասկանալու սուրբգրային հատվածները, որոնց վրա խարսխված է մեր հավատը, ծիսական շարականներն ու աղոթքները և մեր Եկեղեցու հայրերի գրվածքները, թե որն ենք մենք համարում ճշմարիտ աշխարհի և մարդկության ստեղծման վերաբերյալ և թե ինչպիսին է մեր հարաբերությունը մեր Արարչի՝ Ամենակալ Հոր հետ:

Պատանի ձեր զավակի հետ ժամանակ տրամադրե՛ք կարդալու և քննարկելու առաջիկա դասերում ներկայացված նյութերը:

3. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵԿ ԱՍՏԾՈ՝ ԱՄԵՆԱԿԱԼ ՀՈՐԸ

«Քո Տեր Աստծուն պիտի սիրես քո ամբողջ հոգով, քո ամբողջ էությամբ ու քո ամբողջ ուժով»:

Երկրորդ օրենք 6.5

Հայտնագործենք

Մենք գիտենք, թե ինչպիսին են մեր հայրն ու մայրը: Հայրության մասին մենք նաև պատկերացումներ ենք կազմում մեր կարդացած գրքերից և դիտած ֆիլմերից: Հետևյալ հարցումների օգնությամբ նկարագրի՛ր քո հորը, ինչպիսին նրան հիշում ես մեծանալիս:

- Մանուկ տարիքում հայրդ որքա՞ն բարձրահասակ, ուժեղ կամ խոշորամարմին էր թվում քեզ:
- Ո՞վ էր օգնության հասնում, երբ դրա կարիքն էիր զգում:
- Երբ որևէ բան դժվարանում էիր անել, ո՞ւմ էիր օգնության համար դիմում:
- Երբ տխրում էիր, վախենում և մենակ մնում, ո՞վ էր գալիս քեզ մոտ և մխիթարում:
- Ո՞ւմ էիր դիմում, երբ որևէ բանի կարիք ունեիր՝ լինի դա ուտելիք, հագուստ կամ դպրոցական պիտույքներ:

.....

.....

.....

.....

.....

- Գրավոր աշխատանքն ավարտելուց հետո գրի՛ր որոշ բառեր, որոնք կնկարագրեն քո հորը կամ մորը:

Հայր և մայր բառերը բնորոշում են մեզ մեր ծնողներին, ովքեր սիրում են մեզ, խնամում, հոգում մեր կարիքները և պաշտպանում մեզ:

Ընթերցի՛ր հաջորդ էջի սուրբգրային հատվածները և տե՛ս, թե ինչպե՞ս է Աստված նկարագրվում դրանցից յուրաքանչյուրում:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵԿ ԱՍՏՑՈ՝ ԱՄԵՆԱԿԱԼ ՀՈՐԸ

Ամեն անգամ, երբ արտասանում ենք Նիկիական հանգանակը՝ Հավատամքը, մենք դավանում ենք, թե ինչին է հավատում Եկեղեցին կապված Աստծո և մեզ հետ Նրա հարաբերության հետ: Սկըսվում է այսպես. «Հավատում ենք մեկ Աստծո՝ Ամենակալ Հորը»: Կարդա՛ ներքևի սուրբգրային հատվածները և տե՛ս, թե ինչպե՞ս է Աստծո ժողովուրդն արտահայտել իր պատկերացումները, թե ով է Աստված իրենց համար:



Տերը հայտնեց հետևյալ բոլոր պատգամները՝ ասելով. «Ես եմ քո Տեր Աստվածը, որ քեզ հանեց եգիպտացիների երկրից՝ ստրկության տնից: Ինձնից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար»:

Ելք 20.1-3

Այսպես է ասում Տերը՝ Իսրայելի սուրբը, որ փրկեց քեզ. «Ես եմ քո Աստվածը, ես քեզ ճանապարհ ցույց տվի, որով դու գնացիր»:

Եսայի 48.17

Ուրախացի՛ր, Երուսաղե՛մ, և դուք էլ հավաքվեցե՛ք, որպեսզի ցնծաք նրա մեջ. ամենքդ էլ, որ սիրում եք նրան և սուգ եք մտել նրա համար, խնդացե՛ք և ուրախացե՛ք միասին: Պիտի սնվեք ու հագենաք նրա մխիթարող ստինքներից և կուշտ ու պինդ վայելք պիտի առնեք նրա գալիք փառքից: Այսպես է ասում Տերը. «Ահա ես դեպի նրանց պիտի դարձնեմ խաղաղությունը՝ ինչպես գետ և հեթանոսների փառքը՝ ինչպես հորդահոս հեղեղ. իրենց ուսերին առած՝ նրանք պիտի բերեն դրանց մանուկներին և, իրենց ծնկներին դրած, պիտի գգվեն նրանց: Ինչպես որ մայրն է գգվում իր մանկանը, այնպես էլ ես պիտի գգվեմ ձեզ, և դուք պիտի մխիթարվեք Երուսաղեմում:

Եսայի 66.10-13

Որքան մեծ են գործերը քո, Տե՛ր, ամեն ինչ իմաստու թյամբ ստեղծեցիր դու, և աշխարհը լցվեց քո ստեղծածներով: Ահա ծովը՝ մեծ և լայնատարած, որի մեջ վխտացող կենդանիներին թիվ չկա. այնտեղ կան մեծամեծ ու փոքր գազաններ. այնտեղ նաև նավերն են լողում: Այնտեղ է վիշապը, որ դու ստեղծեցիր, որ խաղ անի ծովի հետ: Բոլորը քեզ են սպասում, որ նրանց ուտելիքը ժամանակին տաս: Տալիս ես նրանց, ու նրանք կերակրվում են, բացում ես ձեռքդ և քո հաճությամբ սնում բոլորին: Երբ շրջում ես երեսդ նրանցից, խռովվում են նրանք, երբ նրանցից հանում ես նրանց շունչը, սպառվում և հող են դառնում: Ուղարկում ես քո շունչը և վերստեղծում նրանց, ու նորոգում երեսն երկրի:

Սաղմոս 103.24-30

Արդ ես, որ բանտում եմ գտնվում Տիրոջ համար, աղաչում եմ ձեզ, ապրեցե՛ք այնպես, ինչպես վայել է ձեր կոչումին, որին հրավիրեց ձեզ Աստված: Միշտ խոնարհ, հեզ ու համբերատա՛ր եղեք և ցո՛ւյց տվեք ձեր սերը՝ հանդուրժելով միմյանց: Ջանացե՛ք պահել Սուրբ Հոգու շնորհած միությունը խաղաղության շաղկապով: Մեկ է մարմինը և մեկ՝ Սուրբ Հոգին, ինչպես մեկ է հույսը, որի համար Աստված կանչեց ձեզ: Մեկ է Տերը, մեկ՝ հավատը, մեկ է և մկրտությունը: Մեկ է Աստված՝ Հայրն ամենքի, որ տիրում է բոլորին, որ գործում է բոլորի միջոցով և մնում է բոլորի մեջ:

Եփեսացիներին 4.1-6

ԱՍՏՎԱԾ ՀԱՅՏՆՈՒՄ Է ԻՐԵՆ

Մենք կարող ճանաչել Աստծուն միայն մեր սահմանափակ մարդկային իմացությամբ, որովհետև Աստված շատ ավելի մեծ է մեզանից և չի կարող պարփակվել մեր ընկալման սահմաններում: Բայց Աստված սիրահոժար հայտնեց ինքն իրեն կամ ինքն իրեն ցույց տվեց մեզ այնպիսի պատկերների միջոցով, որոնցով մարդիկ կարող են ըմբռնել:

- Նայի՛ր սուրբգրային հատվածները, մեկ անգամ ևս կարդա՛ և յուրաքանչյուր հողումի կողքին գրի՛ր ցանկում տրված բառերից մեկը, որը կնկարագրեր Աստծուն: Որոշ համարներ կարող են ունենալ մեկից ավելի բառեր:

Ելք 20.1-3 .....

Եսայի 48.17 .....

Եսայի 66.10-13 .....

Սաղմոս 103.24-30 .....

Եփեսացիներին 4.1-6 .....

մեկ
հոգատար
խնամող
պաշտպան
ամենակալ
հայր/մայր
(ծնող)

Եթե քեզ խնդրեին բացատրել քո հավատը առ մեկ Աստված, ինչպե՞ս կարտահայտվեիր: Օգտագործելով վերևում գրածդ պատկերներն ու բառերը՝ գրի՛ր մի էլ. նամակ ընկերոջդ՝ խոսելով առ Աստված քո հավատի մասին:



ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՀԻՍՈՒՍԸ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ Է ՄԵԶ ԱՍՏՑՈՒՆ ՀԱՅՐ ԿՈՉԵԼ

Մենք արտասանում ենք Հիսուսի սովորեցրած աղոթքը ամեն օր հոգևոր արարողությունների և հատկապես Սուրբ Պատարագի ընթացքում: Կարդա՛ Տիրոջ խոսքերը **Մատթեոսի Ավետարանի 6.6-13** հատվածում:

Այլ երբ դու աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր դուռը և ծածո՛ւկ աղոթիր քո երկնավոր Հորը: Եվ քո Հայրը, որ անտեսանելի է և տեսնում է կատարածդ, քեզ կհատուցի հայտնապես:

Աղոթք անելիս մի՛ շատախոսեք հեթանոսների նման, որոնք կարծում են, որ եթե երկար աղոթեն, լսելի կլինեն: Արդ, նրանց չնմանվե՛ք, որովհետև ձեր Հայրը գիտի, թե ինչ է ձեզ պետք, նույնիսկ երբ դեռ բան չեք խնդրել նրանից: Ուրեմն այսպե՛ս աղոթեցեք.

Հա՛յր մեր երկնավոր, թող սրբաբանվի քո անունը: Թող գա՛ քո արքայությունը, թող կատարվի՛ քո կամքը, ինչպես որ երկնքում, այնպես էլ երկրի վրա: Ամենօրյա մեր հացը այսօր և՛ս տուր մեզ: Ների՛ր մեր հանցանքները, ինչպես որ մենք ենք ներում նրանց, ովքեր հանցանք են գործել մեր դեմ: Եվ թույլ մի՛ տուր, որ ընկնենք փորձության մեջ, այլ ազատի՛ր մեզ չարից. քանզի քո՛նն են միշտ արքայությունը, զորությունը և փառքը. ամեն:

Սուրբ Պատարագի ընթացքում Տերունական աղոթքից առաջ պատարագիչ քահանան ասում է հետևյալ աղոթքը.

Եվ տո՛ւր մեզ, Տե՛ր, համարձակաձայն բարբառով բացել մեր բերանը, աղոթել Քեզ՝ Երկնավոր Հորդ, երգել և ասել:

Մենք նույնիսկ համարձակ կարող ենք Աստծուն «Հայր» կոչել, որով խոստովանում ենք, որ մենք մեկ ենք իր Միածին Որդու հետ: Սա նաև կոչում է մեզ որոշակի կենսակերպի, ինչպես որ նկարագրված է Եփեսացիներին ուղղված Սբ Պողոսի նամակում:

- Վերընթերցի՛ր սուրբգրային այս հատվածը և գտի՛ր այն երկու բառերը, որոնք բնութագրում են քրիստոնյայի ապրելակերպը.

Բառարան

ՀԱՎԱՏԱԼ՝ վստահել մի բանի և ապրել այնպես, որ իրապես ապավինում ես դրան:

ԽՈՍՏՈՎԱՆԵԼ՝ բացահայտ հռչակել կամ հաստատել հավատը:

«Աստված մեկ է, որով մենք պետք է Քրիստոսով մեկ լինենք մեր եղբայրների ու քույրերի հետ: Միմյանց հետ խաղաղություն և միություն պահելով կարող ենք Աստծուն կոչել Հայր Քրիստոսի հետ»:

ԿՈՉՎԱԾ ԵՆՔ ԱՊՐԵԼՈՒ ՄԵՐ ԽՈՍՏՈՎԱՆԱԾԸ

Կորնթոսի քրիստոնյաներն ապրում էին այնպիսի հասարակության մեջ, որտեղ մարդիկ պաշտում էին բազում կուռքերի և կենդանիներ զոհաբերում նրանց: Կորնթոսի քրիստոնյաները երկընտրանքի առաջ էին՝ ուտել կուռքերին զոհաբերված մսից, թե՝ ոչ: Այսպիսով, նրանք խնդրում են Սբ Պողոսի խորհուրդը: Նրա պատասխանի մեջ մենք գտնում ենք շատ տեղեկություններ կուռքերի պաշտամունքի մասին:

Արդ, ինչ վերաբերում է կուռքերին զոհաբերված կերակուրներ ուտելուն, գիտենք, որ կուռքերն աշխարհում ոչ մի բան չեն ներկայացնում, և որ միայն մեկ Աստված կա, որովհետև թեև անվանապես կան երկնային և երկրային աստվածներ, ինչպես որ մեր շուրջը տեսնում ենք, թե կան բազմաթիվ «աստվածներ» և բազմաթիվ «տերեր», բայց մեզ համար կա միայն մեկ Աստված՝ Հայրը, որից սկիզբ է առել ամեն բան, և մենք կանք նրա համար. և կա միայն մեկ Տեր՝ Հիսուս Քրիստոսը, որի միջոցով ստեղծվեց ամեն ինչ, և մենք կանք նրա միջոցով:

Ա Կորնթացիներին 8.4-6

- Արդյոք դու ունե՞ս կուռքեր քո կյանքում, որոնց պաշտում ես: Հավանաբար կպատասխանես, թե՝ ոչ: Բայց նախ կարդա՛ հետևյալը, ապա որոշի՛ր: Կա՞ արդյոք որևէ բան քո կյանքում, որն այնքան կարևոր ես համարում, որ «անպայման» պիտի ունենաս և կտխրես առանց դրա: Կա՞ որևէ բան քո կյանքում, որ մղում է քեզ բացառել այլ բաներ՝ ներառյալ Աստծուն:
  Դրանցից մի քանիսը գրի՛ր ներքևի տողերին, ապա ներկայացրո՛ւ քո խմբի անդամներին:

  .....

  .....

Եթե քո պատասխանը «այո» է, ապա դու կուռքեր կամ չաստվածներ ես ստեղծել քեզ համար «անպայման»-ներից:

- Մտածի՛ր վերևում նշված Սբ Պողոսի խոսքերի շուրջ և գտի՛ր պատճառը, թե ինչո՞ւ քրիստոնյաները կարիք չունեն և չպետք է կուռքեր ունենան: Նրա խոսքերն ի՞նչ են ասում Աստծո մասին և ինչպե՞ս մենք պետք է վերաբերվենք Տիրոջը: Վերաշարադրի՛ր Սբ Պողոսի խոսքերը՝ անձնականացնելով դրանք քո սեփական կյանքի պարագաներով:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

ԱՂՈԹԵՆՔ

Օրվա վերջում, երբ ամենքս ավարտում ենք մեր գործերը և գնում եկեղեցի Երեկոյան ժամերգությանը մասնակցելու համար, լսում ենք քահանայի հետևյալ աղոթքը: Կարդա՛ աղոթքի հատվածը և մտածի՛ր դրա պատգամի շուրջ:

Գթասե՛ր, Բարեխնամո՛ղ Հայր, Արարի՛չ բոլոր արարածների. ընդունի՛ր քո ծառաների պաղատանքները երեկոյան այս ժամին, քանի որ Քո բարերարության պարգևներն առատորեն բաշխում ես ամենքին: Ողորմի՛ր, Տե՛ր, ամբողջ աշխարհին և Քո Սուրբ Եկեղեցուն, այլև հիվանդներին, վշտացածներին, ճանապարհորդներին, խոսքովանողներին, ապաշխարողներին և հանգուցյալ հոգիներին: Քանզի Դո՛ւ, Տե՛ր Ամենակալ, գիտես մեր պեպքերն ու կարիքները ավելի, քան մենք կարող են խնդրել և իմանալ. և Քեզ Որդուդ և Ամենասուրբ Հոգուդ հետ վայել են փառքը, իշխանությունը և պատիվը. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ժամագիրք

ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Այս աղոթքն ինչպե՞ս է արտացոլում սուրբգրային հայտնությունը, թե ով է Աստված մեզ համար: Գրի՛ր քո մտածումները:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասին ձեր զավակը ծանոթացավ աստվածաշնչային որոշ հատվածների, որոնցով ներկայացվում է Աստծո Հայրությունը, որպես ամեն ինչի Ամենակալ Արարչի, ինչպես արտահայտված է Նիկիական հանգանակում: Սուրբ Գիրքը Աստծուն հայտնում և պատկերում է որպես սիրող, հոգատար Հայր, ով ոչ միայն գոյություն է տվել մեզ, այլև շարունակում է մնալ մեր կյանքի հարատևման աղբյուրը:

Պատանիները սովորեցին գնահատել, թե ինչպես է Աստված հայտնել ինքն իրեն իր ժողովրդի հետ հարաբերվելու, բայց մանավանդ իր Միածին Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով, ով իր աղոթքով մեզ սովորեցրեց Աստծուն կոչել մեր Հայր:

Աստծուց տրված այսպիսի մեծ սիրուն միայն արժանի է, որ մենք պատասխանենք ամբողջ սիրով և իր կամքին՝ հնազանդությամբ: Ձեր զավակին առիթներ տրվեցին նախ Աստծուն ընդունելու իրենց կյանքում՝ վերացնելով կուռքերին և այն ամենը, որոնք կարող են հեռացնել նրան Մեկ Ճշմարիտ Աստծուց:

Թող ձեր պատանի զավակը կիսի իր ընկալումներն Աստծո ստեղծարար սիրո մասին, և խոսե՛ք նրա հետ, թե ինչպես է ձեր ընտանիքը պատվո և նվիրումի բարձրագույն տեղը վերապահում Աստծուն, ով կյանք է տվել մեզ և շարունակում է խնամել մեզ և հոգալ մեր մարմնական, հոգևոր և զգայական կարիքները:

4. ԱՍՏՎԱԾ՝ ՄԵՐ ԱՐԱՐԻՉԸ

«Օրհնեցե՛ք անունը Տիրոջ, քանզի նա ասաց՝ և դրանք ստեղծվեցին, նա հրամայեց՝ և հաստատվեցին»:

Սաղմոս 148.5

Հայտնագործենք

Աստված ստեղծագործելու ուժ տվեց իր ժողովրդին: Շատ մարդիկ զարգացրին իրենց աստվածատուր շնորհները և իրենց աշխատասիրությամբ հորինեցին նոր առարկաներ, որոնք մարդկանց համար պիտանի համարեցին: Յուրաքանչյուր հեղինակ իր մտքում ուներ յուրահատուկ նպատակ իր գյուտի համար:



- Ներքևի տողերի վրա գրի՛ր հետևյալ հարցերի պատասխանները.
  1. Գյուտարարն ի՞նչ էր ակնկալում իր հորինած գյուտից:
  2. Ինչպե՞ս այդ գյուտը պիտի ծառայեր մարդկանց:

➲ **Ալեքսանդր Գրահամ Բելլը հնարել է հեռախոսը:**

1. .....
2. .....

➲ **Թոմաս Էդիսոնը հայտնի է էլեկտրալամպի և էլեկտրականության հայտնագործմամբ:**

1. .....
2. .....

➲ **Էլի Վիթնին ստեղծել է բամբակը սերմերից զտող մեքենան:**

1. .....
2. .....

- Գրի՛ր քո մտածումները, թե հիշյալ գյուտարարներն ի՞նչ զգացած կլինեին գյուտերը հայտնագործելիս և դրանց արդյունքը տեսնելիս:

.....

.....

.....

.....

.....

Կարդա՛ հաջորդ էջի նյութը՝ պարզելու մեր աշխարհի ստեղծման մասին:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ԱՍՏՎԱԾ՝ ՄԵՐ ԱՐԱՐԻՉԸ

Ծննդոց 1.1-25

Հիշի՛ր Նիկիական հանգանակի հետևյալ խոսքերը. *«...երկնքի ու երկրի, երևելի և աներևույթ էակների Արարչին»:* Արարչագործության պատմությունն ընթերցելիս մտքով հետևի՛ր դեպքերի ընթացքին և զարգացմանը, նշմարի՛ր այն խոսքերն ու արտահայտությունները, որոնք նշում են, թե Աստված ստեղծեց ամեն ինչ կարգով և ներդաշնակությամբ և գոյություն ունեցող ամեն բան՝ նպատակով:

Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը: Երկիրն անձև ու անկազմ էր, խավար էր տիրում անհունի վրա, և Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա: Եվ Աստված ասաց. «Թող լույս լինի»: Եվ լույս եղավ: Աստված տեսավ, որ լույսը լավ է, և Աստված լույսը բաժանեց խավարից: Աստված լույսը կոչեց ցերեկ, իսկ խավարը կոչեց գիշեր: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր առաջին:

Աստված ասաց. «Թող տարածություն առաջանա ջրերի միջև, և ջրերը թող բաժանվեն ջրերից»: Եվ եղավ այդպես: Աստված ստեղծեց տարածությունը, որով Աստված տարածության ներքևում եղած ջրերը անջրպետեց տարածության վրա եղած ջրերից: Աստված տարածությունը կոչեց երկինք: Աստված տեսավ, որ լավ է: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր երկրորդ:

Աստված ասաց. «Թող երկնքի տակ գտնվող ջրերը հավաքվեն մի տեղ, և երևա ցամաքը»: Եվ եղավ այդպես. երկնքի տակի ջրերը հավաքվեցին մի տեղ, ու երևաց ցամաքը: Աստված ցամաքը կոչեց երկիր, իսկ հավաքված ջրերը կոչեց ծով: Աստված տեսավ, որ լավ է: Աստված ասաց. «Թող երկիրն իր տեսակի ու իր նմանության սերմը պարունակող դալար բույս և իր տեսակի ու իր նմանության սերմը պարունակող, իր տեսակի միրգ տվող պտղաբեր ծառ աճեցնի երկրի վրա»: Եվ եղավ այդպես. հողը ամբողջ երկրի վրա ցանելու սերմը իր մեջ պարունակող դալար բույս և իր տեսակի սերմը իր մեջ պարունակող, միրգ տվող ծառ աճեցրեց: Աստված տեսավ, որ լավ է: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր երրորդ:

Աստված ասաց. «Թող լուսատուներ լինեն երկնքի տարածության մեջ, որպեսզի լուսավորեն երկիրը և իրարից բաժանեն ցերեկն ու գիշերը: Դրանք թող լինեն, որպեսզի ցույց տան տարվա եղանակները, տոնական օրերն ու տարիները, թող լինեն, ծագեն երկնքի տարածության մեջ՝ երկիրը լուսավորելու համար»: Եվ եղավ այդպես: Աստված ստեղծեց երկու մեծ լուսատուներ. մեծ լուսատուն՝ ցերեկն իշխելու, իսկ փոքր լուսատուն՝ գիշերն իշխելու համար, ինչպես նաև աստղեր: Աստված դրանք դրեց երկնքի տարածության մեջ՝ երկիրը լուսավորելու համար, ինչպես նաև ցերեկվա ու գիշերվա վրա իշխելու և լույսն ու խավարը իրարից բաժանելու համար: Աստված տեսավ, որ լավ է: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր չորրորդ:

Աստված ասաց. «Թող ջրերն արտադրեն կենդանության շունչ ունեցող զեռուններ, երկրի վրա ու երկնքի տարածության մեջ թող թևավոր թռչուններ լինեն»: Եվ եղավ այդպես: Աստված ստեղծեց խոշոր կետեր, կենդանության շունչ ունեցող ամեն տեսակ զեռուններ, որ արտադրեցին ջրերն ըստ տեսակների, և ամեն տեսակ թևավոր թռչուններ՝ ըստ տեսակների: Աստված տեսավ, որ լավ է: Աստված օրհնեց դրանց ու ասաց. «Ամեցե՛ք, բազմացե՛ք և լցրե՛ք ծովերի ջրերը, իսկ թռչունները թող բազմանան երկրի վրա»: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր հինգերորդ:

Աստված ասաց. «Թող երկիրն արտադրի չորքոտանի կենդանիներ իրենց տեսակներով, սողուններ և գազաններ իրենց տեսակներով»: Եվ եղավ այդպես: Աստված ստեղծեց երկրի գազաններն իրենց տեսակներով, անասուններն իրենց տեսակներով և երկրի բոլոր սողուններն իրենց տեսակներով: Աստված տեսավ, որ դրանք լավ են:

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ

Ծննդոց առաջին գլուխը մի ակնարկ է տալիս մեզ աշխարհի ստեղծման մասին: Աստվածաշնչի այլ շատ հատվածներում ևս խոսվում է արարչագործության մասին: Կարդա՛ և տե՛ս, թե դրանք ինչպե՞ս են արտացոլում Ծննդոց գրքի խոսքերը:

Տիրոջ խոսքով ստեղծվեց երկինքը և իր բերանի շնչով՝ նրա բոլոր զորությունները:

Սաղմոս 32.6

Տերը, որ փրկեց քեզ, ստեղծեց քեզ որովայնից, այսպես է ասում. «Ես եմ Տերը, որ անում, կատարում եմ ամեն ինչ, միայնակ տարածեցի երկինքը և հաստատեցի երկիրը»:

Եսայի 44.24

Սկզբից էր Բանը, և Բանը Աստծո մոտ էր, և Բանը Աստված էր: Նա սկզբից Աստծո մոտ էր: Ամեն ինչ նրանով եղավ, և առանց նրան չեղավ ոչինչ, որ եղել է:

Հովհաննես 1.1-3

- Լրացրո՛ւ աղյուսակն ըստ Ծննդոց գրքի հատվածի: Գրի՛ր Աստծո խոսքերն ըստ արարչագործության յուրաքանչյուր օրվա և արձանագրի՛ր, թե ինչ ստեղծվեց Աստծո Խոսքի և նախախնամության համաձայն: Դասընկերոջդ հետ ստուգի՛ր աղյուսակը և հետևի՛ր Աստծո արարչագործության կարգին: Ի՞նչ պատկեր է ներկայանում:

Օր	Աստծո Խոսքը	Ստեղծագործությունը	Աստծո դիտարկումը
1			
2			
3			
4			
5			
6			

- Անդրադարձի՛ր այս դասին ներկայացված սուրբգրային խոսքերին և վերանայի՛ր քո լրացրած աղյուսակը: Դրանց հիման վրա գրի՛ր քո ինքնուրույն մտքերը Աստծո և նրա արարչագործության վերաբերյալ:

.....

.....

.....

.....

Տե՛ս, թե քո մտածումները որքանո|վ են համընկնում Եկեղեցու հայրերի ուսուցումների հետ, և թե ինչի՞ն է Եկեղեցին հավատում:

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՆԵՐԴԱՇՆԱԿ, ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ԵՎ ԲԱՐԻ ԱՐԱՐՈՒՄ

Աշխարհի արարման վերաբերյալ ուղղափառ քրիստոնեական տեսակետը հիմնված չէ գիտական բացատրությունների վրա: Առանցքային հաստատումն այն է, որ Աստված Արարիչն է, հիմնական Պատճառը և Ստեղծիչը գոյություն ունեցող ամեն ինչի: Եկեղեցին ուսուցանում է նաև, որ Աստծո արարչությունը կարգավորված էր, նպատակամետ և ներդաշնակ: Աստված ստեղծեց ամեն ինչ ոչնչից, որովհետև նա Սեր է և ուրախանում է իր ստեղծածով:

Դարեր շարունակ մարդիկ տարբեր կարծիքներ են ունեցել տիեզերքի առաջացման մասին: Սակայն բոլորն էլ փոքր-ինչ շեղվել են կենտրոնական և էական այն հաստատումից, որ Աստված է ամբողջ գոյության պատճառը և շարժիչը: Սբ Աթանասը և Սբ Բարսեղն ուսումնասիրում են արարչության մասին հիշյալ տեսակետների թերությունները և հաստատում Աստծո՝ տիեզերքի Արարիչը լինելու կենտրոնական գաղափարը: Սբ Հովհան Ոսկեբերանը մատնանշում է իմաստությունը և սերը, որոնցով Աստված ստեղծում է:

Տիեզերքի արարման և ամեն ինչի ստեղծման առնչությամբ... ոմանք ասում են, որ բոլոր էակներն ինքնագո են, այսինքն՝ իրենք իրենց են առաջացել... այս տեսակետը հակառակ է փորձառության բոլոր փաստերին... որովհետև, եթե բոլոր արարածները ծնունդ առած լինեին ինքնաբերաբար՝ Բանականության արդյունք լինելու փոխարեն, չնայած գոյություն ունեն, բայց և բոլորը կլինեին միաձև և միմյանցից չտարբերվող... Իրերի զանազանությունը փաստում է ոչ թե ինքնանպատակ արարչության, այլ կանխակալ Պատճառի մասին, և հենց այդ Պատճառից մենք կարող ենք կռահել Աստծուն՝ ամեն ինչի ճարտարապետ Արարչին:

Սբ Աթանաս, «Մարդեղության մասին»

Ճիշտ է, որ աշխարհի ստեղծման մասին ճառել ցանկացող որևէ մեկը պետք է սկսի այն բարի կարգավորությունից, որը տիրում է երևելի էակների մեջ: Ես ուզում եմ խոսել երկնքի ու երկրի ստեղծման մասին, որը պատահական չէ, ինչպես ոմանք երևակայում են, այլ իրենց ծնունդն առնում են Աստծուց: Ո՞վ կհավատա այս հեքիաթին: Որքան ջերմեռանդությամբ մարդը պետք է պատրաստի ինքն իրեն, որպեսզի ընկալի այս բարձրագույն դասերը:

Սբ Բարսեղ, «Վեցօրեք»

Ով կարող է ասել, թե ինչո՞ւ Տերն ստեղծեց կետածկներին: Դրանք ինչո՞վ են օգտակար մեզ: Ո՞րն է դրանց ստեղծման առավելությունը... Մովսեսը նախ ասաց. «Աստված ստեղծեց հսկա կետերին...» և ապա շարունակում. «Աստված տեսավ, որ դրանք բարի են»: Այլ խոսքով, նա ասում էր, որ չնայած դու անտեսում ես ստեղծված էակների պատճառին, մի՛ փորձիր անտեղի համարել դրանց ստեղծումը: Իմանալով հանդերձ, որ Տերը տվել է իր հավանությունը և դրանց բարի հռչակել, ինչպե՞ս կարող ես այդքան թեթևամիտ լինել՝ համարձակվելով հարցնել, թե ինչո՞ւ են դրանք ստեղծվել: Արդյոք ծաղրանքո՞վ ես վերաբերվում նրանց ստեղծմանն իբրև աննպատակ արարածների: Ես նկատի ունեմ, որ եթե ուղղամիտ լինես, կկարողանաս դրանց ստեղծումից գաղափար կազմել քո Տիրոջ զորության և անճառելի սիրո մասին:



Սբ Հովհան Ոսկեբերան

ՉԱՐԼԶ ԴԱՐՎԻՆԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Էվոլյուցիայի տեսությունը վերաբերում է ժամանակի մեջ տեսակների փոփոխությանը: Աշխարհը և նրա վիճակը, իհարկե, շարունակում են զարգանալ, հարմարվել և փոփոխվել: Հայտնագործումների և գիտական հետազոտությունների միջոցով մարդկությունը շարունակում է բացահայտել արարչագործության պատկառելի հրաշքները: Զանազան տեսակներ են հայտնաբերվում, և մարդիկ և մյուս տեսակները շարունակում են ֆիզիկապես զարգանալ ժամանակի մեջ:

- Եկեղեցու վարդապետության և սուրբ հայրերի ուսուցումների լույսի տակ, քո կարծիքով, ի՞նչն է բացակայում Չարլզ Դարվինի Էվոլյուցիայի տեսության մեջ, որն այն ընդունելի կդարձներ ուղղափառ քրիստոնեական տեսակետից: Վերաշարադրի՛ր Էվոլյուցիայի տեսությունն այնպես, որ այն ընդունելի լիներ ուղղափառ քրիստոնյաների համար:

ՍՈՒՐԲԵՐԸ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Սբ Բարսեղ Կեսարացին իր ճառում գրում է Արարչագործության մասին: Մենք կոչված ենք ներդաշնակությամբ, սիրով և երախտագիտությամբ վերաբերվելու կենդանիներին, քանի որ նրանք մշտապես օգնություն են տալիս մեզ: Գերասիմոսի և առյուծի մասին պատմությունը ցույց է տալիս մարդկանց և կենդանիների և, ըստ էության, բոլոր էակների խաղաղ համակեցությունը:

5-րդ դարում Գերասիմոսը վանահայրն էր 70 վանականներից կազմված մի համայնքի, ովքեր ապրում էին Երիքովի արևելյան անապատում, Հորդանան գետից մի մղոն հեռավորությամբ: Նրանք քնում էին ծղոտե ներքնակների վրա, իցերը չունեին դռներ և բացի ընդհանրական աղոթքից, մեծ մասամբ լռակյաց էին: Մի օր Հորդանան գետի ափով քայլելիս Գերասիմոսը նկատեց մոտեցող առյուծին, որը ցավից մռնչում էր, որովհետև մի մեծ փուշ մխրճվել էր նրա թաթերից մեկի մեջ: Տառապող գազանին կարեկցելու մղումով Գերասիմոսը հանեց փուշը, մաքրեց վերքը և կապեց՝ սպասելով, որ առյուծը կվերադառնա իր որջը: Փոխարենը վայրի գազանը հետևեց նրան մինչև վանք և դարձավ վանահոր հավատարիմ ընկերի կենդանին: Ամբողջ համայնքը զարմացել էր առյուծի՝ բացահայտ խաղաղ կյանքի դառնալու և վանահորը հավատարիմ գտնվելու վրա. նա այժմ ապրում էր հացով և բանջարեղենով: Նրան վստահել էին հատուկ մի հանձնարարություն՝ հսկել վանքի էշին, որն արածում էր Հորդանանի ափամերձ դաշտում: Մի օր, երբ առյուծը պառկած հանգստանում է, էշին գողանում է մի անցորդ վաճառական: Նրան չգտնելու անհաջող փորձերից հետո առյուծը վերադառնում է վանք՝ գլուխը կախ գցած: Վանականները եզրակացնում են, որ առյուծն ախորժակից ընկել է միս չուտելու պատճառով: Որպես պատիժ նրան են հանձնում էշի գործը, որով նա պետք է մեջքին ամրացված չորս կավե կճուճներով գետից ջուր կրեր վանք: Ամիսներ անց պատահեց, որ վաճառականը գողացած էշի և երեք ուղտերի հետ անցնում էր Հորդանանի մոտով: Առյուծը ճանաչեց էշին և այնքան բարձր մռնչաց, որ վաճառականը վախից փախավ: Ատամներով էշի պարանից բռնած առյուծը նրան երեք ուղտերի հետ բերեց վանք: Վանականները հասկացան և ամաչեցին առյուծին սխալ պատժելու համար: Նույն օրը Գերասիմոսն առյուծի անունը դրեց Հորդանես՝ Հորդանան գետի անունով: Հինգ տարի ևս Հորդանեսն ապրեց վանքից ներս: Երբ վանահայրը մահացավ և թաղվեց, Հորդանեսն ամեն օր պառկում էր նրա գերեզմանին, ողբաչայն մռնչում էր և գլուխը խփում գետին: Ի վերջո Հորդանեսը վշտից շունչը փչեց և սատկեց Գերասիմոսի շիրիմի վրա:

- Արդի հասարակությունները գլոբալ առումով բախվում են միջավայրի պահպանության խնդիրներին, ինչն սպառնում է երկրի վրա կյանքի անվտանգ գոյությանը: Ի՞նչ կարող ենք սովորել Գերասիմոսի և առյուծի պատմությունից, որպեսզի դիմակայենք բնությունն ախտոտելու և բնական պաշարները վատնելու գլոբալ հարցերին: Գրի՛ր քո մտածումները և առաջարկները:

ԴԱՆԻԵԼԻ ԹՈՒՂԹԸ

Դանիելի թուղթը, որը հանդիսավոր կերպով երգվում է եկեղեցում Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության տոների նախօրեի երեկոյան Ճրագալույցի սրբազան արարողության ընթացքում, ներկայացնում է Դանիելի մարգարեության 3-րդ գլուխը: Եկեղեցու դասում Հին Կտակարանի ընթերցվածներից հետո Դանիելի թղթերով, իբրև թագավորական հրովարտակներ, մեկական մոմ բռնած չորս սարկավագներ դուրս են գալիս վարագույրով ծածկված խորանից և բարձր ձայնով սաղմոսերգում մարգարեությունը:

Կարդա՛ մարգարեության օրհնության հատվածը և այն համեմատի՛ր 135-րդ Սաղմոսի հետ:

Օրհնյալ ես դու Տե՛ր, Աստվա՛ծ մեր հայրերի, գովյալ ես և առաքվել պանծալի հավիտյան: Օրհնյալ է քո փառավոր սուրբ անունը, գովյալ ես և առաքվել պանծալի հավիտյան:

Օրհնեցե՛ք Տիրոջ բոլոր գործերը, օրհնեցե՛ք և առաքվել պանծացրե՛ք նրան հավիտյան:

Արև՛ և լուսի՛ն, օրհնեցե՛ք Տիրոջը, օրհնեցե՛ք և պանծացրե՛ք նրան հավիտյան:

Երկնքի բոլո՛ր աստղեր, օրհնեցե՛ք Տիրոջը, օրհնեցե՛ք և պանծացրե՛ք նրան հավիտյան:

Թող երկիրն օրհնի՛ Տիրոջը, օրհնի և պանծացնի հավիտյան:

Լեռնե՛ր, բարձունքնե՛ր, օրհնեցե՛ք Տիրոջը, օրհնեցե՛ք և պանծացրե՛ք նրան հավիտյան:

Ծովե՛ր ու գետե՛ր, օրհնեցե՛ք Տիրոջը, օրհնեցե՛ք և պանծացրե՛ք նրան հավիտյան:

Բոլոր գազաններ և անասուններ, օրհնեցե՛ք Տիրոջը և պանծացրե՛ք նրան հավիտյան:

Մարդո՛ւ որդիներ, օրհնեցե՛ք Տիրոջը և պանծացրե՛ք նրան հավիտյան:

Գոհությունս մատուցենք Տիրոջը, քանզի քաղցր է նա, քանզի հավիտյան է ողորմությունը նրա:

Տիրոջ բոլո՛ր պաշտոնյաներ, գոհությո՛ւն մատուցեցեք և օրհնեցե՛ք աստվածների Աստծուն, քանզի հավիտյան է ողորմությունը նրա:

ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Գրի՛ր քո ինքնուրույն գոհաբանությունն Աստծուն՝ քեզ շնորհած բազում ողորմությունների համար:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասը քո զավակին տվեց շատ հնարքներ՝ այս աշխարհը անարատ սիրուց ստեղծելու համար Աստծուն ճանաչելու և շնորհակալ լինելու: Սուրբգրային տարբեր հատվածների միջոցով աշակերտներին ցույց տրվեց Աստծո արարչության ներդաշնակությունն ու նպատակը: Ամեն օր այս ամենը լավագույնս հիշելու ձևերից մեկը մեր ստեղծագործ լինելը դրսևորելն է: Քաջալերե՛ք ձեր երեխային՝ օգտագործելու իր շնորհները Աստծո տված սիրո պարգևները երախտագիտությամբ Տիրոջը վերադարձնելու համար:

- *Ձեր զավակին մասնակի՛ց դարձրեք ընտանիքի վայելքի և խնամքի ամենօրյա կարիքների հոգացմանը՝ լինի ուտելիքի պատրաստություն, հողի, ջրի և մեր շնչած օդի նպատակային և պատասխանատու գործածում: Ցո՛ւյց տվեք նրան Աստծո ստեղծագործ զորությունը գործնականում զգալու հաճույքը՝ տան պարտեզի կամ փողոցի ծառերը խնամելու և ջրելու գործին մասնակից դարձնելով:*
- *Միասի՛ն արտասանեք առավոտյան և երեկոյան աղոթքները՝ ճանաչելու Աստծո Սուրբ Աջի օրհնությունը ձեր ընտանիքի առողջության և երջանկության համար:*
- *Ամենակարևորը՝ գոհություն և փառք տվեք Աստծուն այն բարիքների համար, որ Տերը պարգևում է ձեր և ձեր երեխաների աշխատանքով՝ միշտ հիշելով Հակոբոս 1.17 խոսքերը. «...ամեն կատարյալ բարիք ի վերուստ է տրվում»:*

5· ԱՍՏՎԱԾ ՍՏԵՂԾՈՒՄ Է ՄԱՐԴՈՒՆ

«Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ...»:

Ծննդոց 1.26

Հայտնագործենք

Ե՞րբ ես վերջին անգամ լուռ նստել ու մտածել: Արի՛ ստեղծենք այդ պահը հիմա:

- Հանգի՛ստ նստիր մի քանի րոպե, մի՛ շեղվիր՝ թեկուզ փակելով աչքերդ: Խորհրդածի՛ր քո ով լինելու կամ ինքնության, քո սիրելի ու ոչ-սիրելի բաների, քո կարողությունների, ընկերային հարաբերությունների, հավատի և այլնի մասին: Այնուհետև պատասխանի՛ր հետևյալ հարցումներին

- **Եթե ընկերներիդ հարցնեին քո մասին, նրանք ի՞նչ կասեին:**

.....

.....

- **Եթե Աստծուն հարցնեին քո մասին, ի՞նչ կասեր:**

.....

.....

- **Դո՞ւ ինչ կասեիր ինքդ քո մասին:**

.....

.....

- **Քո պատասխանները նմա՞ն էին իրար, թե՝ տարբե՞ր: Ինչո՞ւ ես այդպես կարծում:**

.....

.....

Հիմա, երբ դու արդեն առիթ ունեցար մտածելու քո ով լինելու մասին, եկեք տեսնենք, թե Ծննդոց գիրքն ինչ է պատմում մեր ստեղծման մասին:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ԱՍՏՎԱԾ ՍՏԵՂԾՈՒՄ Է ՄԱՐԴՈՒՆ

Ծննդոց 1.26-31, 2.1-3

Աստծո արարչագործության ամբողջացման մասին կարդալիս նշմարի՛ր, թե ինչպես է մարդու ստեղծումը, որպես արարչագործության բարձրակետ, տարբերվում մնացյալ արարածների ստեղծումից:

*Ասաց Աստված. «**Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»:** Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց: Աստված օրհնեց նրանց ու ասաց. «**Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրան, իշխեցե՛ք ծովի ձկներին, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»:***

*Ասաց Աստված. «**Ահա ձեզ տվեցի ողջ երկրի վրա տարածված սերմանելի բոլոր բույսերի սերմերը և իրենց մեջ պարունակող սերմ պտղատվող բոլոր ծառերը: Դրանք թող ձեզ սնունդ լինեն, իսկ բոլոր կանաչ խոտերը երկրի բոլոր գազանների, երկնքի բոլոր թռչունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների՝ բոլոր կենդանիների հատար թող լինեն կեր»:* Եվ եղավ այդպես: Աստված տեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել էր, շատ բարի է: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր վեցերորդ: Այսպիսով Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը և կարգավորեց դրանք: Աստված վեցերորդ օրն ավարտեց ստեղծագործությունը և իր կատարած բոլոր գործերից հետո՝ յոթներորդ օրը, հանգստացավ: Աստված օրհնեց յոթներորդ օրը և սրբագործեց այն, որովհետև այդ օրը Աստված հանգստացավ իր այն բոլոր գործերից, որ սկսել էր անել:*

Վարժություն

- Գտի՛ր բանալի բառերը Աստվածաշնչի ընթերցվածից, որոնք կօգնեն քեզ պարզել, թե ինչի համար Աստված ստեղծեց մարդուն: Օգնության համար կարող ես օգտվել ներքևում ցանկագրված ձևակերպումներից: Փնտրի՛ր դրանք և շրջագծի՛ր բառատախտակի վրա, ապա գրի՛ր յուրաքանչյուր բառը համապատասխան ձևակերպման առջևի գծիկներին: 2-րդ և 3-րդ կետերի համար պահանջվում է երկու բառ: Բառատախտակում բառերը շարադրված են հորիզոնական, ուղղահայաց, անկյունային կամ հակադարձ կարգով:

1. ..... նշում է, որ մարդն ստեղծվել է Աստծուն նմանվելու շնորհով:

2. ..... , ... նշում է, որ մարդն օժտված է Աստծո ստեղծագործելու զորությամբ:

3. ..... , ... Աստծուց մարդուն տրված հրավեր՝ սիրով տնօրինելու արարչագործությունը:

4. ..... Աստված ինչ ասաց, երբ տեսավ իր ստեղծագործությունը:

Ք	Ե	Ց	Ա	Մ	Զ	Ա	Բ	Պ	Թ
Վ	Ծ	Տ	ՈՒ	Յ	Ց	Վ	Ր	Բ	Ե
Ա	Զ	Ե	Ի	Հ	Գ	Տ	Է	Ա	Կ
Ս	Ֆ	Ր	Ռ	Ր	Ս	Ը	Թ	Ր	Ֆ
Ո	Տ	Ք	Ջ	Ց	Ե	Խ	Շ	Ի	Ղ
Տ	Օ	Ե	Ը	Ճ	Ա	Ց	Փ	Ո	Յ
Վ	Կ	Ց	Գ	Ղ	Տ	Ս	Ե	Օ	Տ
Բ	Ն	Ե	Պ	Մ	Ռ	Լ	Ջ	Ք	Ի
Ի	Զ	Ճ	Տ	Բ	Ղ	Դ	Պ	Ա	Թ
Ք	Ն	Ա	Ր	Ա	Պ	Ր	Ե	Կ	Շ

- Հիմք ընդունելով հիշյալ բառերը՝ գրի՛ր համառոտ շարադրություն և նկարագրի՛ր, թե Աստված ինչ նպատակով ստեղծեց մարդուն:



ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԿԵՐՊԱՐԱՆՔ ԵՎ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր կիրառմամբ *«կերպարանք»* և *«նմանություն»* բառերը հոմանիշներ են: Սուրբ Գրքի գրաբար բնագրում կերպարանքի փոխարեն գործածվում է պատկեր բառը: Բառարանը սահմանում է դրանց որպես առարկայի տեսողական տպավորություն՝ առաջացած հայելու արտացոլումից. իրար շատ նման անձ կամ իր, կրկնօրինակ, նմանություն, մեջտեղից կիսված խնձոր՝ ինչպես իրար շատ նման մարդկանց համար ասում է ժողովրդական ասույթը:

«Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ» աստվածային խոսքերը գուցե թվան, թե այդ երկու բառերը նույնիմաստ են: Եկեղեցին, սակայն, առանձնացրել է փոքրիկ, բայց շատ կարևոր տարբերություն դրանց իմաստների մեջ:

■ Ահա Սբ Կղեմես Հռոմեացու գրվածքից մի հատված: Կարդա՛ և պարզի՛ր, թե ինչպես են տարբերակվում կերպարանք և նմանություն բառերը, ապա գրի՛ր յուրաքանչյուր բառը համապատասխան սահմանման վերևում:

Դուք եք պատկերը անտեսանելի Աստծո: Ուստի թույլ մի՛ տվեք բարեպաշտ համարվող մարդկանց կարծել, թե կուռքերն են Աստծո պատկերը, որով և ճիշտ է նրանց պաշտամունք մատուցելը: Սակայն Աստծո պատկերը մարդն է: Ով ուզում է բարեպաշտ լինել Աստծո առաջ, բարիք է գործում մարդու հանդեպ, որովհետև մարդու մարմինը կրում է Աստծո պատկերը: Բայց բոլորը չէ, որ կրում են Տիրոջ նմանությունը, այլ նրանք, ովքեր ունեն անարատ միտք և բարի հոգի: Ինչևէ, քանի որ գիտենք, որ մարդն ստեղծվել է Աստծո կերպարանքով ու նմանությամբ, հորդորում ենք քեզ բարի գտնվել նրա հանդեպ, ինչպես որ Աստծո հանդեպ, որի պատկերն է նա: Արդ, դա մղում է մեզ պատիվ մատուցել Աստծո պատկերի նկատմամբ, որը մարդն է՝ հետևյալ կերպով. ուտելիք տալով քաղցածին, խմելիք՝ ծարավին, հագուստ՝ մերկին, խնամք՝ հիվանդին, օթևան՝ պանդուխտին, այցելություն՝ բանտարկյալին օգնելու որևէ կերպով: Կարճ ասած, որևէ բարի բան, որ մեկը կցանկանա իր համար, թող անի կարիքավորի համար, և դրանից հետո բարի պարգևի արժանի կլինի, քանի որ բարի գործ կատարեց Աստծո պատկերի հանդեպ:

օժտված Աստծուն նմանվելու շնորհով:

իրագործել այդ շնորհը՝ կյանքում մեր կատարած ազատ ընտրություններով և թե ինչպես ենք նախընտրում ապրել միասնաբար մյուս արարածների հետ:

Արարչագործության պատմությունը բացահայտում է մեր Աստծուն, Ով կամեցավ ստեղծել և ստեղծեց սիրով: Տերը հրավիրում է մեզանից յուրաքանչյուրին մասնակից լինելու ազատ կամքի, ստեղծագործելու զորության և սիրո իր հատկանիշներին:

■ Ձեր խմբով քննարկե՛ք, թե ինչպե՞ս կիրագործեք այս հրավերը անձնական կյանքում: Նկատի՛ առեք հետևյալ կետերը.

1. Ինչպիսի՞ ընտրություն եմ կատարում ես ամեն օր կապված իմ, իմ համայնքի, դասընկերների և ուսուցիչների, շրջապատի և աշխարհում ապրող ամեն ինչի հետ:
2. Ինչպե՞ս եմ օգտագործում ստեղծագործելու ունակությունները:
3. Ինչպե՞ս եմ սիրում, սեր ցուցաբերում իմ և ուրիշների հանդեպ:
4. Կա՞ արդյոք որևէ բան, որ կարիք ունես փոխելու, որպեսզի արտացոլես Աստծո կերպարանքը քո մեջ: Եթե այո, ապա ո՞րն է դա և ինչպե՞ս դա կանեիր:

ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Գրի՛ր մեկ-երկու պարբերություն քո տետրակում՝ արտահայտելով քո մտածումները խմբում քննարկված հարցերի շուրջ:

ՄԱՐԴԸ ՈՐՊԵՍ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍ

Արարչագործության պատմությունը բավական պարզ և հստակ ներկայացնում է մարդու և մնացյալ արարածների հարաբերությունը: Աստված պատվիրեց մարդուն իշխել կամ կառավարել արարածներին, մշակել և պահպանել Եդեմի պարտեզը: Այս պատկառելի պատասխանատվությունը հանձնվեց մարդուն: Ինչպես որ Աստված սիրառատ բարիքներով ապահովեց իր ստեղծածների կյանքը, նույն կերպ և իր կերպարանքով ստեղծվածները պետք է լինեն սիրող ու հոգատար բարի տնտեսներ:

Այսպիսի պատասխանատվությունը հնարավոր է միայն իրականացնել լիարժեք նվիրումով և երախտագիտությամբ առ Աստված՝ իր տված պարգևների համար: Եկեղեցին արտահայտում է այս երախտագիտությունը և գոհաբանությունն ամենօրյա աղոթքների, անդաստանի և օրհնության արարողությունների միջոցով: Խաղողօրհնեքը, որպես առաջին պտղի օրհնության արարողություն և գոհություն Աստծուն, բոլորիս ամենասիրված տոնախմբություններից է: Քաղաքակրթության և տեխնիկայի առաջընթացի մեջ մենք հաճախ մոռանում ենք, թե ինչպես է գյուղացին ճակատի քրտինքով մշակում իր հողն ու այգին, իսկ եկեղեցին օրհնում է բերքի առաջին պտուղները՝ Բարձրյալ Տիրոջ օրհնությունը փոխանցելով այգեգործ մշակներին:

Կարդա՛ Մաշտոցից քաղված հետևյալ աղոթքը, որը քահանան մատուցում է Աստծուն արտերի օրհնության կարգը կատարելիս:

Աղաչում ենք Քեզ, գոհությունների՛ թագավոր Ստեղծած մեր, որ Քո խնամքով դաշտերն ու լեռները լցնում ես պտղաբերությամբ, Քո հոգատար հայացքի ներքո պահի՛ր մեր սերմերը, որ կարող ես առանց սերմի հասկեր շնորհել և առանց կերակրի քաղցածներին կշտացնել: Տո՛ւր, Տե՛ր, Քո առատ ողորմությունը և աճեցրո՛ւ Քո ծառաների աշխատանքի պտղությունը այս կյանքի կարիքները հոգալու համար: Քանզի բոլորն իրենց աչքերը հույսով Քեզ են ուղղել, և Դու ես ժամանակին տալիս նրանց կերակուրը: Օրհնի՛ր, Տե՛ր, երկնքի անձրևները, որպեսզի քաղցրաջուր անձրևներով ցողեն մեր անդաստանները: Օրհնի՛ր, Տե՛ր, նաև մեր պտղերը, որպեսզի ամեն տեսակ վնասների հետև մնան և հասունացնեն իրենց պտղունները: Օրհնի՛ր, Տե՛ր, մշակներին ու նրանց եզները, որպեսզի առողջությամբ հասնեն իրենց պտղաբեր վաստակի պտղությունը: Օրհնի՛ր, Տե՛ր, նաև տարեվերջը, որպեսզի այն լիությամբ և խաղաղությամբ պսակվի:

Վարժություն

Ձեր խմբով բացահայտե՛ք որոշ մարտահրավերներ, որոնց հանդիպում են 21-րդ դարի քրիստոնյաները երկրի բարի տնտեսներ կամ մշակներ դառնալու համար:

- Նկատի՛ առեք շրջակա միջավայրի պահպանման խնդիրները, լինեն կապված մթնոլորտի, ջրի, հողի, կենդանական աշխարհի և մարդկային կյանքի հետ:
- Մտածե՛ք մարդկանց վերաբերմունքի մասին հանդեպ ստեղծված աշխարհը, և թե ինչպես են դա շահագործվում:
- Գնահատե՛ք իրավիճակը «Եդեմի պահապանները» լինելու Աստծո հրավերի տեսանկյունից:
- Գրի՛ր մի նամակ Աստծուն՝ արտահայտելով քո մտածումները հիշյալ խնդիրների շուրջ:

Բառարան

ՏՆՏԵՍ՝ խնամատար

ՀԻՇԵԼ ՇԱԲԱԹԸ



- Շաբաթը սուրբ պահելու պատվիրանին Սուրբ Գրքում հանդիպում ենք **Ելք 20.8-11** և **Երկրորդ օրենք 5.12-15** հատվածներում: Ընթերցի՛ր Ելքի գրքից ստորև բերված հատվածը: Ապա գտի՛ր **Երկրորդ օրենքի 5.12-15** հատվածը Աստվածաշնչում և համեմատի՛ր Շաբաթը սուրբ պահելու պատճառները երկու տեղում: Ինքնուրույն բառերով գրի՛ր պատճառը համապատասխան հղումի կողքի գծերի վրա:

Հիշի՛ր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն: Վեց օր պիտի աշխատես և պիտի կատարես քո սուրբ բոլոր գործերը: Յոթներորդ օրը քո Տեր Աստծո շաբաթ օրն է: Այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես, ոչ էլ քո տղան ու աղջիկը, քո ծառան ու քո աղախինը, քո էշն ու քո եզը, քո բոլոր անասունները, քեզ մոտ գտնվող օտարականն ու քեզ մոտ բնակվող պանդուխտը, որովհետև Տեր Աստված վեց օրում ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովն ու այն ամենը, ինչ դրանց մեջ է, իսկ յոթներորդ օրը հանգստացավ: Դրա համար էլ Տերն օրհնեց յոթներորդ օրը և այն սուրբ հռչակեց:

Ելք 20.8-11

Ելք 20.8-11 .....

.....

Երկ. Օրենք 5.12-15 .....

.....

Աստծուն գոհություն մատուցելիս ես սուրբ կպահեմ Շաբաթը .....

- Նկարագրի՛ր, թե ինչպե՞ս և ինչո՞ւ պիտի սուրբ պահես Շաբաթը: Գրի՛ր նաև, եթե գըտնում ես, որ պետք է փոփոխություն կատարես Շաբաթը պահելու կամ չպահելու ընթացքիդ մեջ:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասի միջոցով ձեր երեխային տեղեկություն տրվեց այն մեծ պարգևի մասին, որ Աստված տվել է մարդուն իր կերպարանքով ստեղծելիս: Օգնե՛ք ձեր զավակին հիշելու այս շնորհը՝ նրան հնարավորություններ տալով սիրելու աշխարհը:

- Համոզվե՛ք, որ տանը ունեք վերամշակվող աղբի համար նախատեսված տարրաներ:
- Տանն օգտագործե՛ք շրջակա միջավայրը չապականող արտադրանքներ:
- Ձեր զավակին հանձնարարե՛ք խնամելու ձեր բակի ծառերն ու ծաղիկները կամ ձեր ընտանի կենդանիներին, եթե ունեք:
- Ամենակարևորը ամրապնդե՛ք այն գիտակցությունը, որ մեզ այդ պատասխանատվությունը տրված է Աստծուց՝ հոգատարելու այն ամենը, որ Տերը ստեղծել է: Սա անշուշտ պարզապես միայն էկոլոգիական նպատակներ չի հետապնդում, որ երկարացնենք մեր կյանքը երկրի վրա, այլ որպեսզի պահենք Տիրոջ պատվիրանը՝ երկնքի արքայությանն արժանանալու համար:

6. ԱԴԱՄՆ ՈՒ ԵՎԱՆ ՍՏԵՂԾՎԵՑԻՆ ԻՐԱՐ ՀԱՄԱՐ

«Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը, և երկուսը պետք է լինեն մեկ մարմին»:

Ծննդոց 2.24

Հայտնագործենք

Երբևէ տեսե՞լ ես զուգապար:

Ի՞նչն է դարձնում պարին գեղեցիկ: Ի՞նչն է նրան դարձնում դժվար փորձառություն զույգի և հանդիսատեսի համար:

- Ուսուցիչը զույգերի կբաժանի ամբողջ դասարանը, և նվագարկիչով կհնչի մի քանի տեսակի երաժշտություն: Երգի փոխվելու ժամանակ պարի՛ր քո զույգի հետ, ինչպես որ կարծում ես պետք է պարել տվյալ երաժշտության տակ: Ապա դասարանով անդրադարձեք հետևյալ հարցումներին:

Հարցեր քննարկման համար

1. ***Այս վարժությունը հե՞շտ էր, թե՞ դժվար: Ինչո՞ւ:***
2. ***Ավելի դժվար էր աշխատել թիմո՞վ, թե՞ այն անել քո ուզած ձևով:***
3. ***Կայի՞ն պահեր, երբ դու և քո զույգը պարում էիք համաչափ և իրոք վայելում էիք ձեր պարը:***

- Քո պարի փորձառության և խմբակային քննարկման հիման վրա գրի՛ր, թե ի՞նչն է մեկին դարձնում լավ զուգընկեր:

.....

.....

.....

.....

.....

.....

Աստվածաշնչի դասում պարզի՛ր, թե ինչո՞ւ Աստված անհրաժեշտ տեսավ օգնական զուգընկեր ստեղծելու մարդու համար:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ԱԴԱՄՆ ՈՒ ԵՎԱՆ ՍՏԵՂԾՎԵՑԻՆ ԻՐԱՐ ՀԱՄԱՐ

Ծննդոց 2.4-25

Այս հատվածը կարդալիս վերհիշի՛ր 4-րդ դասում անցած **Ծննդոց 1.1-25** հատվածը արարչագործության մասին: Ի՞նչ ես նկատում արարչագործության կարգի մեջ: Ինչպե՞ս է մարդու ստեղծումը նկարագրվում յուրաքանչյուրում:

Այս է երկնքի ու երկրի արարչության պատմությունը:

Այն օրը, երբ Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը, երկրի վրա դեռ ոչ մի փունկ չէր բուսել, դեռ ոչ մի դաշտային բույս չէր աճել, որովհետև Տեր Աստված անձրև չէր տեղացրել երկրի վրա, և մարդ չկար, որ մշակեր հողը, բայց աղբյուր էր բխում երկրից և ոռոգում ողջ երկիրը: Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդն եղավ կենդանի էակ: Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմը, և այնտեղ դրեց իր ստեղծած մարդուն: Տեր Աստված երկրից բուսցրեց նաև ամեն տեսակի գեղեցկատեսիլ ու համեղ մրգեր տվող ծառեր, իսկ կենաց ծառը՝ բարու և չարի գիտության ծառը, տնկեց դրախտի մեջտեղում:

Գետ էր բխում Եդեմից, որպեսզի ոռոգեր դրախտը, և այնտեղից բաժանվում էր չորս ճյուղերի: Մեկի անունը Փիսոն էր: Նա է, որ պատում է ամբողջ Եվիլատ երկիրը, այնտեղ. ուր ոսկի կա: Այդ երկրի ոսկին ազնիվ է: Այնտեղ կա նաև սուտակ և դահանակ ակնաքարը:

Երկրորդ գետի անունը Գեհոն է: Նա պատում է Եթովպացվոց երկիրը: Երրորդ գետը Տիգրիսն է: Սա հոսում է դեպի Ասորեստան: Չորրորդ գետը Եփրատն է:

Տեր Աստված իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկրության դրախտում, որպեսզի սա մշակի ու պահպանի այն: Տեր Աստված պատվիրեց Ադամին ու ասաց. «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կերեք, որովհետև այն օրը, երբ ուտեք դրանից, մահկանացու կդառնաք«:

Տեր Աստված ասաց. «Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությամբ մի օգնական ստեղծենք նրա համար»: Տեր Աստված ստեղծեց նաև դաշտային բոլոր գազաններին, երկնքի բոլոր թռչուններին և բերեց Ադամի մոտ, որ տեսնի, թե Ադամն ինչ անուն կտա դրանց: Եվ Ադամն ինչ անուն որ տար ամեն մի կենդանուն, այն էլ կլիներ դրա անունը: Ադամը բոլոր անասուններին, երկնքի բոլոր թռչուններին և դաշտային բոլոր գազաններին տվեց անուններ, բայց Ադամը չգտավ իր նմանությունն ունեցող մի օգնական: Տեր Աստված թմրություն բերեց Ադամի վրա, և սա քնեց: Աստված հանեց նրա կողոսկրերից մեկը և այդ տեղը մաշկով ծածկեց: Տեր Աստված Ադամից վերցրած կողոսկրից կին արարեց և նրան բերեց Ադամի մոտ: Ադամն ասաց.

«Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից և մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչվի կին, որովհետև իր ամուսնուց ստեղծվեց»:

«Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը, և երկուսը պետք է լինեն մեկ մարմին: Եվ երկուսն էլ՝ Ադամն ու իր կինը, մերկ էին ու չէին ամաչում»:

ԱԴԱՄՆ ՈՒ ԵՎԱՆ. ՄԵԿ ԶՈՒՅԳ, ՄԵԿ ՆՊԱՏԱԿ

Ծննդոց 1-ին և 2-րդ գլուխներում պատմվող արարչության հատվածները թեպետ տարբեր են մանրամասներով ու կարգով, բայց չեն հակադրվում այն հիմնարար ճշմարտությանը, որ Աստվածն է Արարիչը ամեն ինչի, և սիրուց ստեղծեց տղամարդուն և կնոջը՝ որպես իր արարչության պսակների և որպես այդ ամենի հոգատարների:

Մտածի՛ր, թե ինչպե՞ս ստեղծվեց մարդն ըստ Ծննդոց 1-ին և 2-րդ գլուխների: Կազմի՛ր երկու հարցումներ, որոց պատասխանը կարտահայտի յուրաքանչյուր գլխի պատգամը Աստծո և տղամարդու և կնոջ հարաբերությունների մասին միմյանց հանդեպ: Քննարկի՛ր հարցերը դասարանի հետ:

■ Գրի՛ր մի նախադասություն յուրաքանչյուր գլխի վերաբերյալ՝ օգտվելով աջ կողմի սյունակի բառացանկից արտահայտելու հիշյալ պատգամները:

Ծննդոց 1 .....

.....

.....

Ծննդոց 2 .....

.....

.....

տղամարդ

կին

կերպարանք

ԳՏԻ՛Ր ՄԻ ԶՈՒԳԸՆԿԵՐ

■ Մտքումդ կազմի՛ր ձևական ամուսնացող մի զույգ և նկարագրի՛ր, թե ինչպե՞ս նրանք կարտացոլեն Աստծո դրած նպատակն իրենց հարաբերություններում:

- Ինչպե՞ս կլուծեն խնդիրները:
- Ինչպե՞ս որոշումներ կկայացնեն ընտանեկան հարցերում:
- Ինչպե՞ս կկազմակերպեն տնային գործերը:
- Ինչպե՞ս հոգ կտանեն իրենց երեխաների մասին:
- Ինչպե՞ս կվերաբերվեն միմյանց աշխատանքներին ու ձիրքերին:

.....

.....

.....

.....

.....

.....

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր Եկեղեցու ուղղափառ հավատքի համաձայն, ամուսնությունը համարվում է խորհուրդ, որովհետև քրիստոնեական ամուսնությունը հիմնված է Հիսուս Քրիստոսի փոխակերպող սիրո վրա: Սուրբ Պսակի ծեսի շարականներն ու աղոթքները, փեսայի և հարսի՝ միևնույն գինու բաժակից խմելը և մյուս պարագաները ցույց են տալիս, որ Հիսուս Քրիստոսը կենտրոնական տեղ է գրավում փեսայի և հարսի կյանքում:

Փեսայի և Հարսի՝ օրհնված գինու ըմպումը վկայակոչում է Քրիստոսի առաջին հրաշքը Կանա քաղաքի հարսանիքի ընթացքում, որտեղ Հիսուսը ջուրը գինու փոխակերպելով լիարժեք դարձրեց տոնվող ուրախությունը: Նա հաստատեց տղամարդու և կնոջ միությունը՝ վերհիշեցնելով արարչագործության ժամանակ ասված Աստվածային Խոսքը.

Սուրբ գրքերում դուք չէ՞ք կարդացել, թե Ասված սկզբից «արու և էգ ստեղծեց մարդկանց» և ասաց նրանց. «Դրա համար տղամարդը պիտի թողնի իր հորն ու մորը և միանա իր կնոջը, և երկուսը մեկ մարմին պիտի լինեն»: Հետևաբար, այլևս երկու չեն, այլ մեկ մարմին: Ուրեմն որևէ մեկը թող չբաժանի նրանց, ում Ասված միացրեց:

Մատթեոս 19.4-6

Հենց որ փեսան և հարսը մոտենում են խորանին պսակվելու համար երգվում է «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի» շարականը: Թագերը նորապսակների գլուխներին դրվելուց հետո խաչեղբայրը կամ քավորը խաչը բռնում է նրանց գլխավերևում: Հետևյալ շարականը փառաբանում է Քրիստոսի՝ Երկնավոր Թագավորի հարաբերությունը իր հարսի՝ Եկեղեցու հետ:

Ուրախացի՛ր, Սո՛ւրբ Եկեղեցի, քանզի Քրիստոսը՝ Երկնքի Արքան, այսօր պսակեց քեզ իր խաչով և զարդարեց տաճարն իր սքանչելի փառքով:

Ուրախացի՛ր, Սիոնի՛ դուստր, քանզի այսօր երկիրը վերստին երկինք դարձավ քո նորոգմամբ, և Թագավորն Երկնավոր հաճեցավ բնակվել քո մեջ:

Երկնավոր զորքի դասերի հետ այսօր տոնում ենք և անդադար փառաբանում, ուրախացի՛ր անարատ հարս անճառելի քո խորհրդով:

Փեսան ու հարսը նստում են գահերի վրա ի նշան նրանց «փոքրիկ» թագավորության՝ քրիստոնեական ընտանիքի, որը երկուսով պիտի կազմեն: Այս «փոքրիկ եկեղեցին» կոչված է արտացոլելու կյանքը Աստծո արքայության մեջ, որի սկիզբը Քրիստոսն ինքը դրեց իր մահվամբ և հարությամբ:

Բառարան

ՍԻՈՆ՝մի հղում Աստծո ժողովրդի՝ եկեղեցու մասին:

ԱՆՃԱՌԵԼԻ՝ խոսքով անպատմելի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեական ամուսնությունը դիտվում է խաչի վրա Քրիստոսի զոհաբերության խորհրդի և մահվան դեմ Տիրոջ տարած հաղթանակի լույսի ներքո: Իբրև այդպիսին՝ խաչը, չնայած չարչարանքի գործիք լինելու, դարձել է քրիստոնյաների պսակը: Սուրբերը, ովքեր պայքարել են քրիստոսակերպ ապրելու համար, պսակվել են խաչի փառքով:

- Կարդա՛ Սբ Պողոսի խոսքերը **Եփեսացիներին 5.25-33** հատվածում և համեմատի՛ր «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի» շարականի տողերի հետ: Ձեր խմբով մտածե՛ք հետևյալ հարցերի շուրջ: Ապա գրե՛ք ձեր ինքնուրույն ըմբռնումները, թե ինչպիսի՞ն պետք է լինի քրիստոնյա տղամարդու և կնոջ հարաբերությունն ընտանիքում և եկեղեցական համայնքում:

1. **Ըստ Սբ Պողոսի՝ ինչպե՞ս Քրիստոսն արտահայտեց իր սերը եկեղեցու հանդեպ:**
2. **Ո՞րը եղավ Քրիստոսի սիրո արդյունքը հանուն եկեղեցու:**
3. **Շարականում երգվում է, որ խաչի վրա Քրիստոսի զոհաբերության շնորհիվ երկիրը փոխակերպվեց երկնքի: Եփեսացիներին 5-րդ գլխում Սբ Պողոսի ո՞ր խոսքերն են հիշեցնում ձեզ այս փոխակերպության մասին:**
4. **Ինչպե՞ս կարող են ամուսինները ցուցաբերել այդ նույն փոխակերպող սերը միմյանց հանդեպ ի նպաստ ընտանիքի և նրանց առօրյա կյանքի:**

.....

.....

.....

.....

.....

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԸ՝ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

- Եկեղեցու հայրերը մեծ խրատներ են տալիս մեզ, թե ինչպես պետք է ապրի ամուսնացյալ զույգը: Ընթերցի՛ր յուրաքանչյուր խոսքը և տե՛ս, թե դրանք որքանով են համընկնում քո մտածումների հետ: Մեկ նախադասությամբ գրավոր ամփոփի՛ր նրանց խրատները:

«Տունը նման է մի փոքր եկեղեցու... թող քո աղոթքները լինեն ընդհանուրի համար: Թող յուրաքանչյուրը գնա Եկեղեցի, և թող ամուսինը տանը հարցնի իր կնոջը, իսկ կինը՝ ամուսնուն այն ամենի մասին, ինչ որ ասվեց և խոսվեց այնտեղ... Սովորեցրո՛ւ կնոջդ, որ կյանքում ոչ մի բանից չպետք է վախենալ՝ բացի Աստծուն վիրավորելուց: Արդ, եթե մեկն ամուսնանում է այսպիսի ըմբռնումներով, նա կլինի մի աստիճան ներքև վանականներից»:

Սբ Հովհան Ոսկեբերան

«Բարեհաջող է ամուսնությունը, եթե ամուսինները միմյանց հանդեպ հավատարիմ են և միմյանց սիրում են ինչպես սեփական անձը, մինչև որ այր ու կին չեն երևում իբրև երկու տարբեր անձ, այլ մի հոգի՝ բնակված երկու մարմնի մեջ: Նաև ողջամիտ են ու աշխատասեր, ուրախ, հանդարտ, ընտանիքի փոխնիփոխ հոգածուներ, տղամարդը՝ դրսի գործերով զբաղված, կինը՝ տան կարգավորությամբ, միմյանց միխիթարող և օգնող, այնպես, որ ապրում են ոչ այլ բանի, եթե ոչ միմյանց օգտակարության ու հաճելի լինելու համար»:

Պողոս Պատրիարք (18-19-րդ դար)

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՏԻՊԱՐ ԶՈՒՅԳ

Տրդատ թագավորը և Աշխեն թագուհին մեր Եկեղեցու կողմից ընդունվում են որպես առաքինի քրիստոնյա ամուսնացյալ զույգ: Աշխեն թագուհին, ով իր տալի՝ իշխանուհի Խոսրովադուխտի շնորհիվ ընդունեց ի Հիսուս Քրիստոս հավատքը, կարևոր դեր կատարեց Սբ Գրիգոր Լուսավորչի օգնությամբ իր ամուսնուն բուժելու գործում: Քրիստոսի հավատքով բուժվելու շնորհով սկսվեց հայոց մեծ դարձը և Հայաստանի քրիստոնեացումը: Քրիստոնյա դարձած թագավորն ու թագուհին սկսեցին ապրել աստվածահաճո կյանքով՝ միաժամանակ շարունակելով հովանավորել և սատարել Ավետարանի քարոզությանը Հայաստանի բոլոր կողմերում:

Սուրբ Պսակի խորհրդակատարությանը, երբ փեսան և հարսը բազմում են իրենց գահերին եկեղեցում, երգվում է քրիստոնյա այս տիպար զույգին նվիրված շարականը, որոնց աշխարհիկ թագերը փոխակերպվեցին Հիսուս Քրիստոսի հաղթական խաչի նշանով:

Ով ամենաերանելի արքա փիեզերական իշխանությամբ, պարծանքի թագ ընդունեցիր Քրիստոսից, ով Տրդատ մեծ թագավոր և Աշխեն մեծ թագուհի. բարեխոսե՛ք մեզ համար Երկնավոր Թագավորին:

Դու քո աղոթքով վանեցիր թշնամուն և կործանելով սատանային դասակից եղար երկնայիններին. ով Տրդատ մեծ թագավոր և Աշխեն մեծ թագուհի, բարեխոսե՛ք մեզ համար Երկնավոր Թագավորին:

Ուստի և մենք՝ հավատացյալներս, փոնում ենք քո հիշատակը՝ օրհնություն առաքելով քեզ պսակողին. ով Տրդատ մեծ թագավոր և Աշխեն մեծ թագուհի, բարեխոսե՛ք մեզ համար Երկնավոր Թագավորին:

Ով երանելիդ «Քկ»



ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Դասարանով շարականն ընթերցելիս կամ երգելիս մտածե՛ք, թե ի՞նչ է խորհրդանշում թագադրված փեսայի և հարսի՝ գահերի վրա բազմելը եկեղեցում: Ինչպե՞ս կարող են նրանք ընդօրինակել Տրդատ արքայի և Աշխեն թագուհու քրիստոնեական կյանքը: Տետրակիդ մեջ գրի՛ր մի աղոթք նրանց համար:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասին ձեր զավակը սովորեց, որ Ադամն ու Եվան ստեղծվեցին որպես կողակիցներ և ընկերներ միմյանց համար՝ մասնակցելու և շարունակելու Աստծո սիրով կատարված արարչագործությունն այս աշխարհում: Հիմք ընդունելով աստվածային պատվիրանը և ուսումնասիրելով ամուսնության վերաբերյալ Սուրբ Պսակի խորհուրդը և Եկեղեցու հայրերի գրվածքները՝ նրանք քրիստոնեական ամուսնությունը դիտում են որպես Աստծո կամքի արտահայտություն հոգուտ տղամարդու և կնոջ:

Դուք կոչված եք շարունակելու ձեր զավակի հոգում ամրապնդել այն գաղափարները, որոնք նա սովորել է այսօրվա դասին:

- Օգնե՛ք նրան տեսնել Քրիստոսին իր ծնողների ամուսնության մեջ միմյանց համար արված զոհողությունների միջոցով:
- Ձեր կենդանի օրինակով զավակիդ հնարավորությունն տվեք սովորել, թե ինչ է նշանակում լինել լավ կողակից:
- Հանձնարարե՛ք աշխատել եղբոր կամ քրոջ հետ այնպիսի գործի մեջ, որը կպարունակի ինքնազոհողություն:
- Թող տուն հրավիրի իր ընկերոջը միասին աշխատելու տան համար:
- Առիթնե՛ր տվեք ճշմարիտ գործակցությունը փորձարկելու համար:

Գլուխ Գ

ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵԿ ՏԻՐՈՋ՝ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ՝ ԱՍՏԾՈ ՈՐԴՈՒՆ...

Նիկիական հանգանակում խոսվում է Սուրբ Երրորդության երկրորդ անձի մասին:

«Հավատում ենք մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն, ծնված Հայր Աստծուց, միածին, այսինքն Հոր նույն էությունից: Աստված՝ Աստծուց, Լույս՝ Լույսից, Ճշմարիտ Աստված՝ Ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ թե արարած: Բնությամբ Հոր հետ նույնը, որի միջոցով գոյացան ամեն ինչ երկնքում և երկրի վրա, տեսանելիներն ու անտեսանելիները»:

Սույն գլխի դասերը կօգնեն քեզ հասկանալ, թե ով է Հիսուս Քրիստոսը Հոր հետ հարաբերության մեջ՝ ըստ Տիրոջը տրված տիտղոսների:

Դաս 7 բացատրում է, թե ինչու է Հիսուսը կոչվում Տեր և Փրկիչ, Մեսիա և Օծյալ:

Դաս 8 կառաջնորդի քեզ դեպի այն աղբյուրները, որոնք Հիսուսին դավանում են որպես Աստծո Որդի:

Դաս 9 կլուսաբանի Հիսուս Քրիստոսի սերտ միությունը Հայր Աստծո հետ:

Դաս 10 կհետազոտի Սուրբ Ավանդության աղբյուրները, որոնք հաստատում են, թե Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, արարչակից է Հորը և Սուրբ Հոգուն:

Ծնողների համար

Աստծո Որդու մարդեղացումը Աստծո սիրո գերագույն արտահայտությունն է հանդեպ մարդ արարածը: Իր անչափելի սիրով Աստված հայտնեց Իրեն, մարդկանցս ճանաչելի դարձավ Մարիամից ծնված Հիսուսով: Ինչ հրաշալի է, որ մենք ճանաչում ենք Աստծո կերպարը Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Սույն գլխի չորս դասերին ձեր զավակը կփորձի գիտենալ, որ Հիսուսը՝ Մարիամի որդին, անշուշտ Մեսիան է, Աստծո Օծյալը, Հիսուս Քրիստոսը, Ամեն ինչի Տերը, ով եկել է փրկելու աշխարհը: Պատանիները կծանոթանան Աստվածաշնչի հատվածներին, որոնք հստակորեն խոսում են Հիսուսի՝ Աստծո Որդի լինելու և Հիսուսի և Հայր Աստծո միության մասին: Կիմանան նաև, որ Հայրը և Որդին Սուրբ Հոգու հետ են ստեղծել աշխարհը և գոյություն ունեցող ամեն բան:

Ընտանիքով միասին սիրով ու երախտիքով արձագանքե՛ք Աստծո մեծագույն սիրուն՝ համակ ուշադրությամբ ուսումնասիրելով Սուրբ Գիրքը: Օգնե՛ք ձեր պատանուն դաստիարակվելու ի Հիսուս Քրիստոս ձեր հավատքով: Տերը պահպանում է արարածներին իր սիրով, որով ստեղծեց ամեն ինչ Հոր և Սուրբ Հոգու հետ: Կանոնավոր կերպով հաճախե՛ք եկեղեցի և մասնակցե՛ք Սուրբ Պատարագին՝ հավատացյալների հետ երգելով.

«Միայն Սուրբ, միայն Տեր, Հիսուս Քրիստոս, Հայր Աստծո փառքի մեջ. Ամեն»:

7· ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

«...ամեն լեզու դավանի, որ Հիսուս Քրիստոսը «Տեր» է՝ Հայր Աստծուն փառավորելու համար»:

Փիլիպեցիներին 2.11

Հայտնագործենք

Անունները կարևոր են

Քո անունը էությանդ կարևոր բաղադրիչն է: Դրանից է սկսում քո ինքնությունը և պատմությունը: Անվան պատճառով դու անբաժան մասն ես քո ընտանիքի: Անվան պատճառով դու տեղ ես գրավում պատմության մեջ: Ի վերջո, անվան պատճառով է, որ քեզ ճանաչում են և գիտեն իբրև անձնավորության:

Մտածի՛ր, թե որքան լավ ես զգում, երբ ողջունում են քեզ անունով կամ երբ լսում ես քո անունը որպես անդամ որևէ խմբում արձանագրվելիս: Շատերը պատիվ են համարում, որ որևէ հայտնի մարդ ճանաչում է քեզ անունով:

Ինչպե՞ս են մարդիկ ընտրում իրենց երեխաների անունները: Եկեղեցու ավանդության համաձայն, երեխայի անունը դրվում է նրա ծնված օրը հիշատակվող սուրբի անունով, և հենց այդ անունով էլ մանուկը մկրտվում է: Ոմանք իրենց երեխայի անունն ընտրում են ըստ նշանակության այն հույսով, որ դա կդառնա նրա կյանքի մի մասը: Օրինակ՝ «Ազնիվ» անունը տալիս են աղջիկ երեխայի, որպեսզի նա մեծանալիս իր գործերում լինի ազնիվ ու առաքինի: Իսկ ոմանք էլ երեխաներին կոչում են իրենց գերդաստանի պապիկի կամ տատիկի անուններով՝ ի հիշատակ իրենց նախնիների:

Երբեմն էլ անձերի անուններին ավելացվում են որոշ մակդիրներ՝ մականուններ, որոնք յուրահատուկ կերպով բնորոշում են նրանց: Օրինակ՝ «Արամ Աշխարհակալ», «Տիգրան Մեծ», «Աշոտ Երկաթ» և այլն:

■ Ո՞րն է քո անվան յուրահատկությունը կամ ի՞նչ իմաստ կամ պատմական անցյալ ունի: Եթե ընտրեիր հիշվող մի յուրահատուկ անուն, ո՞րը կլիներ: Գրի՛ր կամ պատկերի՛ր դրա մասին:

.....

.....

.....

.....

.....

.....

Աստվածաշնչի հատվածում գտի՛ր որոշ անուններ, որ տրվել են Հիսուս Քրիստոսին:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՏԵՐԸ

Մտ 1.18-21, 16.13, 15-16, Մկ 12.35-37, Հհ 1.19-23, 20.26բ-28, Գրծ 2.36, Փպ 2.9-11

Սուրբ Երրորդության առաջին անձի դավանանքից հետո Նիկիական հանգանակը շարունակում է. *«Հավատում ենք մեկ Աստծո ... և մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին...»:* Ստորև տրված սուրբգրային հատվածներում կարդա՛ և պարզի՛ր, թե ինչպե՞ս է Եկեղեցին արտահայտում իր հավատքը Մարիամից ծնված մանուկի անձի վերաբերյալ:

Հիսուս Քրիստոսի ծնունդն այսպես եղավ. նրա մայրը՝ Մարիամը նշանված էր Հովսեփի հետ, բայց նախքան ամուսնությունը Մարիամը հղի մնաց Սուրբ Հոգուց: Հովսեփը՝ նրա նշանածը, որ արդար մարդ էր, չուզեց հանրության առջև խայտառակել նրան, այլ մտածեց լռելյայն հետ վերցնել նշանը: Մինչ նա մտածում էր այս մասին, ահա Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց նրան և ասաց.

- Հովսե՛փ, Դավթի՝ որդի, մի՛ վախեցիր ամուսնանալու նշանածիդ՝ Մարիամի հետ, որովհետև նրա մեջ հղացվածը Սուրբ Հոգուց է: Նա մի որդի պիտի ծնի, և նրա անունը Հիսուս պիտի դնես, որովհետև նա իր ժողովրդին պիտի փրկի իր մեղքերից:

Մատթեոս 1.18-21

Հովհաննեսը հետևյալ վկայությունը տվեց, երբ հրեա ղեկավարները Երուսաղեմից քահանաներ ու ղևտացիներ ուղարկեցին նրա մոտ, որպեսզի հարցնեն նրան.

- Դու ո՞վ ես:

Նա առանց վարանելու խոստովանեց և հայտարարեց.

- Ես Քրիստոսը չեմ:

- Հապա ո՞վ ես դու, - հարցրին նրան, - Եղիա՞ն ես:

- Ո՛չ, Եղիան չեմ, - պատասխանեց:

- Դու մարգարե՞ն ես, - հարցրին:

- Ո՛չ, - պատասխանեց:

- Ուրեմն ասա՝ մեզ, ո՞վ ես դու, որպեսզի մի պատասխան տանք մեզ ուղարկողներին: Դու ի՞նչ ես ասում քո մասին:

Հովհաննեսը պատասխանեց.

- Ես անապատում կանչողի ձայնն եմ, - ինչպես ասում է Եսայի մարգարեն, - հարթեցե՛ք Տիրոջ ճանապարհը:

Հովհաննես 1.19-23

Հիսուսը տաճարում ուսուցանելիս հարց տվեց ժողովրդին.

- Օրենքի ուսուցիչներն ինչպե՞ս են ասում, թե Քրիստոսը Դավթի Որդին է, երբ Դավիթն ինքը, Սուրբ Հոգուց ներշնչված, ասում է. «Տերն իմ Տիրոջն ասաց.

- Նստի՛ր իմ աջ կողմում, մինչև որ քո թշնամիներին ոտքերիդ տակ դնեմ իբրև պատվանդան»: Եթե Դավիթն ինքը նրան Տեր է կոչում, ինչպե՞ս Քրիստոսը նրա Որդին կլինի: Ժողովուրդը հաճույքով էր լսում Հիսուսին:

Մարկոս 12.35-37

Երբ Հիսուսը Փիլիպպոսի կառուցած Կեսարիայի կողմերը եկավ, իր աշակերտներին հարցրեց.

- Մարդիկ ի՞նչ են ասում Մարդու Որդու մասին. ո՞վ եմ ես:

... Հիսուսը հարցրեց նրանց.

- Իսկ դուք ի՞նչ եք կարծում, ո՞վ եմ ես:

Սիմոն Պետրոսը պատասխանեց.

- Դու Քրիստոսն ես՝ կենդանի Աստծո Որդին:

Մատթեոս 16.13, 15-16

Ութ օր հետո աշակերտները դարձյալ հավաքվել էին ներսում, և Թովմասն էլ նրանց հետ էր: Թեև դռները փակ էին, Հիսուսը եկավ և կանգնեց նրանց մեջտեղը և ասաց.

- Ողջո՛ւյն ձեզ:

Ապա ասաց Թովմասին.

- Բե՛ր քո մատը և դի՛ր այստեղ և տե՛ս իմ ձեռքերը. բե՛ր քո ձեռքը և դիպցրո՛ւ իմ կողին. անհավատ մի՛ եղիր, այլ՝ հավատացյալ:

Թովմասը բացականչեց.

- Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ:

Հովհաննես 20.26-28

Հետևաբար, վստահ եղեք բոլորդ, ո՛վ իսրայելացիներ, Աստված Տեր և Օծյալ կարգեց այն Հիսուսին, որին դուք խաչեցիք:

Գործք առաքելոց 2.36

Դրա համար էլ Աստված շատ ավելի բարձրացրեց նրան, նրան տվեց այն անունը, որ վեր է բոլոր անուններից. որպեսզի Հիսուսի անվան առաջ ծնկի գան բոլորը, երկնավորներն ու երկրավորները և սանդարամետականները, և ամեն լեզու դավանի, որ Հիսուս Քրիստոս Տե՛ր է՝ Հայր Աստծուն փառավորելու համար:

Փիլիպեցիներին 2.9-11

ՀԻՍՈՒՍԻՆ ՏՐՎԱԾ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Հնուց ի վեր քրիստոնյաները շատ անուններ են վերագրել Հիսուսին, որպեսզի բացատրեն նրա արածները և ով լինելը: Նույնիսկ իր երկրային կյանքի ընթացքում Հիսուսը ճանաչվեց որպես «Քրիստոս», այսինքն՝ Օծյալ: Գործք առաքելոցում Հիսուսի համար ասվում է, թե օծված է Սուրբ Հոգով՝ նկատի առնելով Հիսուսի մկրտությունն իր առաքելությունն սկսելուց առաջ: Հին Կտակարանում թագավորները, քահանաները և մարգարեներն օծվում էին պաշտոնի անցնելու համար: Հիսուսը մշտապես փորձում էր մարդկանց ցույց տալ, որ ինքն է Հին Կտակարանի մարգարեությունների լրումը: Սրա հիման վրա էր, երբ մարդիկ ձգտում էին հասկանալ և հավատալ նրա ասածներին, որ նրան «Քրիստոս» կոչեցին: Նա Տեր կոչվեց այն մարդկանցից, որոնց ուսուցանում էր, և նրանցից, ովքեր տեսան նրա կատարած հրաշքները և բժշկությունները՝ վերհիշելով թագավորության և գահակալության հինավուրց խորհրդաբանությունը: Միայն Տերը կարող է ունենալ այդպես գործելու իշխանությունը, ինչը աստիճանաբար գիտակցում էին շատերը:

Բառարան

ՏԵՐ՝ տիտղոս, որ կիրառվում էր հին աշխարհի թագավորների համար: Այն նաև կապվում է Հիսուսի անվան հետ:

ՔՐԻՍՏՈՍ՝ հունարեն ձևն է «Մեսիա» բառի, որ նշանակում է Օծյալ: Սույն տիտղոսը ևս տրվում է Հիսուսին:

■ Լրացրո՛ւ խաչբառը՝ օգտագործելով Հիսուսին տրված անուններն՝ ըստ Աստվածաշնչի դրվագների:



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1. Հիսուսն ո՞ւմ հիշատակեց Հին Կտակարանից, որպեսզի մարդկանց ճանաչելի դարձնի իր Տեր լինելը:
3. Ո՞վ տվեց Մարիամից ծնվելիք որդու անունը:
5. Ո՞ր մարգարեի խոսքից Հովհաննես Մկրտիչը հղում կատարեց՝ ասելով, թե ինքը Քրիստոսը չէ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ

2. Ո՞վ կարիք ուներ ֆիզիկական ապացույցի, որպեսզի հավատար Հիսուսի աստվածությանը:
4. Ո՞վ Հիսուսին դավանեց որպես Քրիստոս Հարությունից առաջ:

■ Հիմք ընդունելով սուրբգրային դրվագների մասին ընթերցումդ և մտածումներդ՝ պարզի՛ր, թե ինչպե՞ս մարդիկ սկսեցին ճանաչել Հիսուսին որպես Քրիստոս և ինչպե՞ս՝ որպես Տեր:

.....

.....

■ Անդրադարձի՛ր քո սեփական փորձառությանը: Կարո՞ղ ես հիշել մի բան, որն այնքան ներգործած լինի քեզ վրա և համոզի՝ Հիսուսին «Տեր» և «Քրիստոս» կոչելու համար:

.....

.....

.....

.....

.....

.....

ՀԻՍՈՒՍԻՆ ՏՐՎԱԾ ԱՅԼ ԱՆՈՒՆՆԵՐ

Հիսուս Քրիստոսի երկրային գործունեության ընթացքում շրջապատի մարդիկ ճանաչեցին նրան շատ տարբեր կերպերով: Նրանք տեսան Հիսուսին հիվանդին բժշկելիս և աղքատին կարեկցելիս: Ականատես եղան նաև Տիրոջ կատարած հրաշքներին, որով նա ցույց տվեց աստվածային իր զորությունը: Սերմնացան Քրիստոսին պատկերող սրբանկարը մեզ է ներկայացնում Հիսուսին տրված անուններից մեկը:

- Քո խմբի հետ կարդա՛ սուրբգրային հատվածներն ըստ հետևյալ հղումների և իմացի՛ր Հիսուսին տրված հետևյալ անունները: Սուրբգրային հղումները գրի՛ր դրանց համապատասխան անունների կողքին:

Կյանքը Եկեղեցում

ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՆՔ ԵՎ ՀԱՎԱՏՈՒՄ

«Հիսուսը Տերն է» արտահայտությանը հաճախ ենք հանդիպում Սբ Պողոսի նամակներում, որը համարվում է հավատամքի հնագույն դավանական բանաձևումը քրիստոնեության մեջ: Եկեղեցին իր ծիսապաշտական աղոթքներում դավանում է այն, ինչին հավատում է:

Եբ 6.19 Հհ 12.32-35 Բ Տմ 4.1-2 Մկ 4.3-9, 13-14 Հհ 10.11

Սերմնացան _____ Հովիվ _____

Լույս _____ Խարիսխ _____

Դատավոր _____

Սուրբ Պատարագին

Սբ Պատարագի ընթացքում Սուրբ Հաղորդություն ստանալիս պատարագիչ քահանան, ինչպես և հավատացյալներն աղոթքներ են մատուցում մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Մինչ քահանան նվիրագործում է հաղորդությունը, երգչախումբը և հավատացյալները քաղցրաձայն երգում են հետևյալը.

Միայն սուրբ, միայն Տեր, Հիսուս Քրիստոս, Հայր Աստծո փառքի մեջ. ամեն:

Եվ մինչ նրանք երգում են, քահանան ծածուկ արտասանում է հետևյալ աղոթքը.

Նայի՛ր, Տեր մեր Հիսո՛ւս Քրիստոս, երկնքից՝ քո սուրբ օթևանից և փառքի բազավորության աթոռից: Արի՛ մեզ մաքրելու և փրկելու, որ Հոր աջ կողմում ես նստում և միաժամանակ այստեղ պատարագվում: Արժանի՛ արա մեզ տալու քո անարատ մարմնից և պատվական արյունից և մեր ձեռքից՝ ամբողջ ժողովրդին:

Այնուհետև, մինչ հավատացյալները պատրաստվում են հաղորդությանը և ապաշխարած սրտով երգում են Տեր ողորմյան, քահանան աչքերը հառած սուրբ խորհրդին, արտասանում է.

Խոստովանում ենք և հավատում, որ դու ես Քրիստոսը՝ Աստծո Որդին, որ վերացնում ես աշխարհի մեղքերը:

Ժամերգությանը

Ամեն օր Առավոտյան ժամերգության ընթացքում քահանան արտասանում է հետևյալ աղոթքը, որն սկսվում է այս խոսքերով.

Խաղաղություն մեր և կյանք, որ Հոր կողմից առաքվեցիր, Միածին Որդի Աստծո, Տեր մեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս: Տո՛ւր մեզ քո խաղաղությունը, որ շնորհեցիր քո սուրբ առաքյալներին՝ կենդանացնող և ամենազոր քո Սուրբ Հոգին պարգևելով նրանց: Որպեսզի և մենք խաղաղվելով աշխարհիկ ամեն սայթաքումներից լինենք տաճար և բնակարան աստվածային շնորհների...:

- Մտածի՛ր և գրի՛ր մի պատասխան քո խմբին հանձնարարված հարցումին: Ապա այն քննարկե՛ք միասին:

1. **Քո կարծիքով ո՞րն է «խոստովանել» և «հավատալ» բառերի տարբերությունը:**
2. **Սուրբ Հաղորդությունն ընդունելիս ինչո՞ւ է կարևոր, թե ում ենք հավատում:**
3. **«Դու ես Քրիստոսը՝ Աստծո Որդին» արտահայտության միտքը շարադրի՛ր քո ինքնուրույն բառերով:**

- Նկարագրի՛ր, թե ինչպես ես ապրել այն խաղաղությունը, որ Հիսուսը տալիս իր բոլոր հետևորդներին:

.....

.....

.....

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԸ՝ ԿՈՉՎԱԾ «ՀԱՅՐԵՐԻ ՀԱՅՐ»

Սբ Գրիգոր Նյուսացին ծնվել է 335 թվականին, Կապադովկիայում, որն այսօր Թուրքիայի տարածքում է: Գրիգորի հայրը ճանաչված փաստաբան էր, իսկ մայրը՝ Էմիլիան, և քույրը՝ Մակրինեն, երկուսն էլ բարեկիրթ քրիստոնյաներ էին: Մակրինեն նրա ամենամոտ ընկերն էր, որին էլ միայն վստահում է իր գաղտնիքները: Եղբայրն էր Սբ Բարսեղ Մեծը: Նրանց մտերիմ ընկերներից էր նաև Սբ Գրիգոր Նազիանզացին: Այս երեք անձերը, շնորհիվ իրենց մեծ վաստակի և հեղինակության, քրիստոնեական աշխարհում հայտնի են »Կապադովկյան Հայրեր« անունով:

Գրիգորը սիրում էր փիլիսոփայությունը և ուզում էր ուսուցիչ դառնալ: Բայց իր ավագ եղբայրը՝ Բարսեղը համոզեց նրան ծառայել եկեղեցում: Գրիգորը դժկամությամբ տեղի տվեց եղբոր պնդումներին և դարձավ քահանա:

371 թվականին Բարսեղը եպիսկոպոսների կարիք էր զգում, որպեսզի հաջողեր արիոսականների դեմ պայքարում, որոնց սխալ ուսուցումները Հիսուս Քրիստոսի մասին ավելի հանրաճանաչ էին դառնում: Մեկ անգամ ևս Գրիգորն անսաց իր ուժեղ եղբորը և դարձավ Նյուսայի եպիսկոպոսը: Սակայն արիոսականներին ընդդիմանալու պատճառով նա գրգռեց որոշ ազդեցիկ մարդկանց, ընդ որս և Վաղես կայսեր զայրույթը:

Արդ, 376 թվականին կայսրը ոչ միայն պաշտոնանկ արեց նրան եպիսկոպոսությունից, այլև աքսորեց: Երկու տարի անց Վաղեսը մահացավ: Գահ բարձրացավ Թեոդոս Ա-ն: Նոր կայսրը կամենում էր, որպեսզի եպիսկոպոսները անաղարտ պահեն Նիկիական հանգանակը՝ ընդդեմ արիոսականների: Գրիգորը վերադարձավ եպիսկոպոսական իր աթոռին, սակայն նրան շուտով մեծ տխրություն էր սպասվում: 379 թվականին մահացավ նրա եղբայր Բարսեղը: Այսուհանդերձ, նա շարունակում էր գրել, ինչն օգնում էր նրան թեթևացնելու իր վիշտը: Միաժամանակ նա հավատում էր, որ իր գրվածքները կարևոր կլինեն, որպեսզի մարդիկ ճանաչեն Աստծուն: Իր մահից չորս դար անց Գրիգորն արժանացավ «Հայրերի Հայր» կոչմանը՝ ի պատիվ Եկեղեցու կյանքում ներդրած իր մեծ ծառայությունների և ստեղծած գրավոր հարուստ ժառանգության:

ԵԿԵՂԵՑԻՆ ՕՐՀՆՈՒՄ Է ՄԵՐ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Եկեղեցական մեր ավանդության համաձայն, նորածին մանուկին ութօրեքի մեջ տանում են եկեղեցի, մկրտում և անվանակոչում օրվա կամ մոտական օրերին հիշատակվող որևէ սուրբի անունով: Ահա մի հատված այն աղոթքից, որով քահանան օրհնում է եկեղեցի բերված նորածին մանուկին.

Տե՛ր Աստված մեր, Քո սահեղ և ամենազոր անվանդ ապավինելով, այս ծառադ (անուն) գալիս է իր գլուխը Քեզ խոնարհեցնելու: Նայի՛ր նրան Քո ողորմությամբ և Քո ամենահաղթ անունը նրան տալով՝ հեռացրո՛ւ և վանի՛ր նրանից չարի բոլոր խորհուրդները, խոսքերն ու գործերը: Երկնային շնորհներո՛վ լցրու այս երեխային, ուրախացրո՛ւ նրան Քո ամենաբարի անունով քրիստոնյա կոչումը շնորհելով նրան և արժանացրո՛ւ մկրտության, որ երկրորդ ծնունդ է՝ սուրբ Ավազանից:

- Քո կարծիքով՝ ի՞նչ է նշանակում աղոթել, որ երեխային Աստծուց տրված անունը զերծ մնա չարի հարձակումներից: Գրի՛ր մտածումներդ:

.....

.....

.....

.....

.....

ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Հին Հռոմում քրիստոնյաները հալածվում, բանտարկվում էին և երբեմն էլ տանջանքների ենթարկվում «անվան» պատճառով, ինչպես նշվում է Գործք առաքելոցում: «Անվան» ասույթը վերաբերում էր Հիսուսի անվանը: Այլ խոսքով, պարզապես «քրիստոնյա» անունն ունենալը բավարար էր, որպեսզի մարդը լուրջ պատիժ ստանար:

Գրի՛ր, թե ինչպես կվարվեիր, եթե նույն պատճառով հնարավոր պատժի ենթարկվեիր:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասի նպատակն էր աշակերտներին բացատրել Հիսուսին տրված «Տեր» և «Քրիստոս» տիտղոսները, որոնք բնորոշում և հստակեցնում էին նրա առաքելությունը: Աշակերտները նախ ծանոթացան անունների նշանակությանը: Անունները տալիս են պատմություն, ինքնություն և տեղ հասարակության մեջ: Սուրբգրային տարբեր հատվածների ուսումնասիրմամբ քննարկվեց Հիսուսին տրված անունների կարևորությունը: Աշակերտների ուշադրությունը հրավիրվեց եկեղեցու ծիսապաշտամունքային կյանքում կիրառվող աղոթքներին ու հոգևոր երգերին, որոնք դավանում են Հիսուսին՝ որպես Տիրոջ և Քրիստոսի: Դասում ներկայացված էր նաև Սբ Գրիգոր Նյուսացու համառոտ պատմությունը, որին տրվել էր «Հայրերի Հայր» անվանումը:

Ձեր զավակին հրավիրեք խոսելու Հիսուսին տրված երկու տիտղոսների հատուկ նշանակության մասին. Քրիստոս նշանակում է Մեսիա, Օծյալ, և Տեր: Այս երկու կոչումները ցույց են տալիս, որ նա տիրում է ամբողջ աշխարհին և նրանում տեղի ունեցող իրադարձություններին՝ որպես Տեր: Եվ մեր հանդեպ Տիրոջ հատուկ առաքելությունը, որ Նա է մեր Փրկիչը մահվան անվախճան իշխանությունից:

Միասի՛ն զրուցեք այն անունների շուրջ, որոնք կարևոր են ձեր ընտանիքի համար. գուցե ձեր տոհմածառի անունները կամ այլ հատուկ նշանակության անուններ: Ի՞նչ է նշանակում, որ Հիսուսը Տերն է և Քրիստոսը, Փրկիչը և Մեսիան:

8. ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆ

«Այսպես է սկսվում Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանը»:

Մարկոս 1.1

Հայտնագործենք

Հայրեր և Որդիներ

- Ներքևի հասկացություններից ո՞րն է քո կարծիքով լավագույնս նկարագրում քո՝ որպես զավակի հարաբերությունը հորդ հետ:

առաջնորդ
պաշտպան
ապահովող
խորհրդատու

- Ավելացրո՛ւ մեկ այլ հասկացություն քո առաջարկությամբ.

.....

- Գրի՛ր, թե ինչո՞ւ ընտրեցիր որպես զավակ հորդ հետ ունեցած հարաբերությունը բնորոշող հենց այդ հասկացությունը:

.....

.....

- Բառերով կամ պատկերելու միջոցով նկարագրի՛ր հորդ հատկանիշներից մեկը, որը կարևոր է դեր է խաղացել քո կյանքում:

.....

.....

.....

.....

.....

.....

Աստվածաշնչի հետևյալ հատվածներում կարդա՛, թե ինչ է նշանակում Հիսուս Քրիստոսին Աստծո Որդի կոչելը:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ՀԻՍՈՒՍՆ ԱՍՏՑՈ ՄԻԱԿ ՈՐԴԻՆ Է ԵՎ ՏԵՐԸ

Մտ 3.16-17, Մր 1.1, 15.39, Հh 3.16-18, Ա Հh 4.14-15, Եբ 4.14-15,

Խոսելով Հիսուսի՝ Սուրբ Երրորդության երկրորդ անձի մասին, Նիկիական հանգանակը հաստատում է. *«Հավատում ենք մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն, ծնված Հայր Աստծուց, Միածին...»:* Հիսուսի՝ աստվածորդի լինելու հայտնությունը զարգանում է աստիճանաբար: Կարդա՛ ներքևի հատվածները և նշմարի՛ր, որ այն սկսվում է Մարկոսի Ավետարանի բացման նախադասությամբ և իր բարձրակետին հասնում խաչի վրա:

Այսպես է սկսվում Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանը:

Մարկոս 1.1

Հիսուսը մկրտվելուց հետո իսկույն դուրս եկավ ջրից: Եվ ահա երկինքը բացվեց, ու նա տեսավ Աստծո Հոգին, որ իջնում էր ինչպես աղավնի և գալիս էր իր վրա: Երկնքից լսվեց մի ձայն, որ ասում էր.
-Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ բարեհաճությունը:

Մատթեոս 3.16-17

...քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի նա, ով հավատում է նրան, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա. որովհետև Աստված իր Որդուն աշխարհ ուղարկեց ոչ թե նրա համար, որ դատապարտի աշխարհը, այլ որպեսզի փրկի աշխարհը: Ով հավատում է նրան, չի դատապարտվի, իսկ ով չի հավատում նրան, արդեն իսկ դատապարտված է՝ Աստծո միածին Որդուն չհավատալու համար:

Հովհաննես 3.16-18

Հարյուրապետը, որ այնտեղ, նրա դիմաց կանգնած էր, երբ տեսավ, թե Հիսուսն ինչպե՛ս աղաղակեց և հոգին ավանդեց, ասաց.
-Իսկապես որ այս մարդն Աստծո Որդի էր:

Մարկոս 15.39

Եվ մենք տեսանք ու վկայում ենք, որ Հայրն իր Որդուն ուղարկեց, որպեսզի նա աշխարհի Փրկիչը լինի: Ով դավանում է, թե Հիսուսն Աստծո Որդին է, նա միացած է մնում Աստծուն, և Աստված էլ՝ նրան:

Ա Հովհաննես 4.14-15

Հետևաբար, ամուր պահենք մեր դավանած հավատը, որովհետև հիմա ունենք երկնքի սրբարանը մտած մի մեծ Քահանայապետ՝ Աստծո Որդուն: Մի Քահանայապետ, որ կարող է հասկանալ մեր տկարությունները և կարեկցել մեզ, քանի որ այն բաներով, որ մենք ենք փորձվում, ինքը ևս փորձվել է, սակայն առանց մեղանչելու:

Եբրայեցիներին 4.14-15

Բառարան

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ՝
Հին Կտակարանի ամենակարևոր քահանան: Հիսուսը դարձավ մեր Քահանայապետը, երբ մեզ ցույց տվեց, թե ինչպես երկրպագել Աստծուն:

Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԱՍՏՑՈ ՈՐԴԻ»

Արևելյան հին կրոններում *«աստծո որդի»* տիտղոսը գործածվում էր թագավորների համար: Սույն կապակցությունը կիրառվում էր նաև հին Իսրայելում՝ ցույց տալով մի հատուկ ընտրություն կամ կոչ Աստծուց: Հին Կտակարանում դրանով են բնորոշվում Իսրայելի ժողովուրդը, հրեշտակները, դատավորները և ժողովրդի առաջնորդները: Հիսուսի ծննդյան ժամանակ *«աստծո որդի»* հասկացությունը նոր իմաստ ձեռք բերեց, և շուտով քրիստոնյաները այն պիտի վերապահեին միայն Տիրոջը: Ընթերցի՛ր Գաբրիել հրեշտակի՝ Մարիամին տված ավետիսը **Ղուկաս 1.30-33** հատվածում: Հիսուսն ինչպե՞ս է հիշատակվում այստեղ: Ինչո՞վ է նրա թագավորությունը տարբերվում մյուս թագավորների ունեցածից:

- Վերընթերցի՛ր հանդիպակաց էջի սուրբգրային հատվածները և հավելյալ մյուս հղումները քո Աստվածաշնչից, որոնք ստորին ցանկում նշված են կանաչ գույնով, և լրացրո՛ւ աղյուսակները: Յուրաքանչյուր հատվածի համար որոշի՛ր, եթե արդյոք Հիսուսը որպես «Աստծո Որդի» հիշատակվում է Աստծո հայտնությամբ, իր իսկ միջոցով կամ թե իր հետևորդների կողմից: Համապատասխան տողերը գրի՛ր պատշաճող սյունակներում: Խոստովանված ժողովրդի կողմից սյունակում նաև գրի՛ր, թե ով է Տիրոջը «Աստծո Որդի» կոչում:

Հղում	Հայտնված Աստծո կողմից	Հաստատված Որդու կողմից	Խոստովանված ժողովրդի կողմից
Մարկոս 1.1			
Ղուկաս 2.41-49			
Մատթեոս 3.16-17			
Հովհաննես 1.43-51			
Հովհաննես 3.16-18			
Մատթեոս 8.28-29			
Հովհաննես 5.15-24			
Հովհաննես 5.15-24			
Մարկոս 15.37-39			
Եբրայեցիներին 4.14-15			
Ա Հովհաննես 4.14-15			

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՄԵՆՔ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՀԱՎԱՏԸ ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒՄՆԵՐՈՎ

Ուղղափառ քրիստոնյաներն արտահայտում են իրենց հավատը հանրային պաշտամունքի միջոցով, որին կոչում ենք Պատարագ: Սուրբ Պատարագը քրիստոնեական պաշտամունքի կենտրոնական արարողությունն է, որը հաստատվել է Հիսուս Քրիստոսի կողմից Վերջին ընթրիքի ժամանակ: Սուրբ Պատարագի ընթացքում երգվող աղոթքներն ու շարականները մեզ հիշեցնում Աստծո փրկագործության մասին, որը իրականացավ իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Ահա պատարագիչ քահանայի կողմից ծածուկ ասվող այն աղոթքը, որը մատուցվում է, երբ հավատացյալները երգում են «Սուրբ, սուրբ»-ը:

Սուրբ, սուրբ, սուրբ ես ճշմարտապես և ամենասուրբ, և ո՞վ կարող է խոսքով պարծենալ բովանդակելու Քո անբավ բարեգթության գեղումները մեր հանդեպ: Եվ դրա համար ի սկզբանե մեղքի պարճառով ընկածին զանազան եղանակներով խնամելով սիրելիդիր մարգարեներով, օրենքի գովչությամբ, քահանայությամբ և երինջների զոհաբերությամբ՝ որպես նախասրվեր այս պատարագի: Բայց այս օրերի ավարտին, ջնջելով մեր ամբողջ մեղքերի մուրհակը, գովեցիր մեզ Քո Միածին Որդուն՝ որպես պարարապան և պարարք, զոհ և օծյալ, գառ և երկնավոր հաց, քահանայապետ և պատարագ: Քանի որ ինքն է բաշխողը և նույն ինքն է բաշխվում մեր մեջ միշտ առանց ապառելու:

- Կարդա՛ Սուրբ Հաղորդություն ընդունելու քահանայի հրավերը, մտածի՛ր, թե ինչ իմաստ ունի քեզ համար որպես Հիսուս Քրիստոսի աշակերտի, և գրի՛ր քո պատասխանը չափածո կամ արձակ ձևով:

Սրբությամբ ճաշակենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ, պարզական մարմինն ու արյունը, ով իջնելով երկնքից բաշխվում է մեր մեջ: Սա է կյանքը, հույսը, հարությունը, մեղքերի քավությունը և թողությունը: Սաղմոս երգե՛ք մեր Տեր Աստծուն, սաղմոս երգեք մեր անմահ, երկնավոր Թագավորին, ով նարում է քերովբեական կառքի վրա:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ Է ԱՍՏՈ ՈՐԴՈՒՆ

Ղուկասի Ավետարանի 9.28-36 հատվածում կարդում ենք Հիսուս Քրիստոսի պայծառակերպության մասին: Ընթերցի՛ր հատվածը, ապա այն համեմատի՛ր Այլակերպության տոնի շարականի հետևյալ տան հետ.

Միածին Որդի՝ Հոր փառքի ճառագայթ, որ անպարփակելի լույսը Քո մարմնում պարագրելով այսօր Թաբոր լեռան վրա փառքով փայլեցիր:



- Շարականում Հիսուսին տրվում է մեկ այլ անուն, որը կապում է նրան Հոր հետ: Ո՞րն է դա: Շրջանակի մեջ գրի՛ր կամ նկարի՛ր մի անուն, որը ցույց կտա, թե ինչպես է Հիսուսը՝ Աստծո Որդին, կապվում իր Հոր հետ:

ԱՍՏՎԱԾ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ ԻՐ ՈՐԴՈՒՆ

Ահա թե ինչ է գրում Սբ Երանոսն (Իրինեոս) Աստծո Որդուն ճանաչելու ձևերի մասին.

«Մեր փրկության ծրագրի մասին մենք տեղյակ դարձանք ոչ ոքից, եթե ոչ այն մարդկանցից, որոնց միջոցով ավետարանն ավանդվել է մեզ, ինչը նրանք մի ժամանակ հրապարակայնորեն քարոզեցին, իսկ հետագայում Աստծո կամքով մեզ փոխանցեցին սրբազան գրվածքների միջոցով, որպեսզի այն դառնա մեր հավատի հիմքը և սյունը... Այս բոլորը հայտնում են մեզ, որ կա մի Աստված՝ երկնքի և երկրի Արարիչը, որի մասին հռչակված է Օրենքում և Մարգարեների կողմից, և մի Քրիստոս՝ Աստծո Որդին»:

Սբ Երանոս

- Կարմիրով նշված բառերը հուշում են մեզ չորս եղանակներ, որոնք Աստված է պարգևել մեզ իմանալու իր Որդու մասին: Կարդա՛ հետևյալ չորս հատվածները և որոշի՛ր, թե որն է հրապարակայնորեն քարոզելը, որը՝ սրբազան գրվածքները, որը՝ Օրենքը (Հին Կտակարանի առաջին հինգ գրքերը), և որը՝ մարգարեությունը: Յուրաքանչյուր վանդակում գրի՛ր հղումներից մեկը՝ նշելով նաև, թե չորս եղանակներից որ մեկն է դա: Պարտադիր չէ, որ բոլոր չորս եղանակները գործածվեն:

Ղուկաս 4.17-21	Եսայի 7.14	Եսայի 9.6-7	Հովհաննես 14.2-3

ՄԵՆՔ ԱՂՈԹՈՒՄ ԵՆՔ ՀԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆՈՎ

Վաղ Եկեղեցու անդամները կազմավորվեցին այնպիսի մշակութային միջավայրում, որում որևէ մեկի անունն ընկալվում էր իբրև տվյալ անձի ներկայություն, իսկ անվան պատիվը նույն էր, ինչ անձի պատիվը: Հետևաբար, Հիսուս Քրիստոսի անունը պահվում էր խորին հարգանքով: Առաքյալները քարոզում էին փրկությունը Տիրոջ անունով և բժշկում հիվանդներին: Նրանց համար Հիսուս Քրիստոսի անունը կոչելը նույնն էր, ինչ նրա ներկայության մեջ լինելը: Սբ Պողոսի խոսքերն ամփոփում են այս իրողությունը.

«...և մարդկանց պես եղավ ու մարդկային կերպարանքով ճանաչվեց: Խոնարհեցրեց իրեն, հնազանդվեց Աստծուն՝ հանձն առնելով մահը, և այն էլ՝ մահը խաչի վրա: Դրա համար էլ Աստված շատ ավելի բարձրացրեց նրան, նրան տվեց այն անունը, որ վեր է բոլոր անուններից, որպեսզի Հիսուսի անվան առաջ ծնկի զան բոլորը, երկնավորներն ու երկրավորները և սանդարամետականները, և ամեն լեզու դավանի, որ Հիսուս Քրիստոսը Տեր՝ Հայր Աստծուն փառավորելու համար»:

Փիլիպեցիներին 2.7-11

Եկեղեցին հին ժամանակներից օգտագործել է նաև կարճ աղոթքներ, ինչպես օրինակ՝ «Տէր ողորմեա» աղոթքները: Այդպիսի աղոթքները շնորհիվ իր կարճ ու բովանդակալից ոճի ավելի հեշտ են հիշվում, և դրանք օգնում են փորձության պահին: Աղոթքի բառերը լիովին ամփոփում են մեր հավատը, թե Հիսուսը՝ Աստծո Որդին, Քրիստոս Փրկիչն է:

Տե՛ր Հիսուս Քրիստոս, Որդի՛ Աստծո, ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս:

Կարող ես արտասանել այս աղոթքը սենյակումդ կամ բնության խաղաղ մի անկյունում՝ սկզբում պարզապես մի քանի րոպե կրկնելով, այնուհետև հետզհետե երկարացնելով ժամանակի տևողությունը: Միաժամանակ այս աղոթքը կարելի է արտասանել օրվա ընթացքում գործ անելիս՝ այն դարձնելով սրտիդ մշտամրմունջ աղոթքը: Աղոթքում Տիրոջ անունը կանչելիս կարող ես նաև աղոթքում հիշատակել քեզ սիրելի անձերի անունները և աղոթել նրանց համար:

ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Աղոթքով խորհրդածի՛ր մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու անվան շուրջ: Գրի՛ր, թե ինչպե՞ս ես ապրել Հիսուսին՝ որպես քո Տիրոջ: Ինչպե՞ս ես հանդիպել Հիսուսին որպես Քրիստոսի, այլ խոսքով՝ որպես քո Փրկչի: Վերջապես, ինչպե՞ս կազդվի քո հարաբերությունը Հայր Աստծո հետ Հիսուսին Աստծո Որդի կոչելիս:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասը կենտրոնանում է այն փաստի վրա, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է: Աշակերտներին առիթ է տրվում մտածել հայրերի և որդիների հարաբերությունների շուրջ, ինչպես նաև այն հարցի շուրջ, թե ինչպես է «Աստծո Որդի» հասկացությունը գործածվել Քրիստոսի գալուստից առաջ և հետո: Աշակերտները նաև ուսումնասիրեցին այն եղանակները, որոնցով Աստված շնորհել է մեզ սովորել իր Որդու մասին՝ առաքյալների քարոզության, Սուրբ Գրքի միջոցով և Հին Կտակարանի Օրենքի և Մարգարեությունների մեջ:

Ընտանիքով զրուցե՛ք հայր լինելու և ունենալու շուրջ, թե ինչ է այն նշանակում քեզ համար և քո կարծիքով ինչն է կարևոր հայրության մեջ: Եթե լինեն բարդացած հայր-որդի հարաբերություններ ընտանիքում, միասի՛ն խոսեք Աստծո մասին որպես Հոր, ով սիրում է իր բոլոր զավակներին և ուզում է, որ նրանք միշտ լավ լինեն: Նույնիսկ եթե մեր երկրավոր հայրերը կատարյալ չեն, մենք բոլորս ունենք կատարյալ աստվածային Հայր, ում սերը և խնամքը անպակաս են մեզնից:

9. ՀԻՍՈՒՍԸ ԵՎ ՀԱՅՐԸ ՄԵԿ ԵՆ

«Հավատացե՛ք ինձ, որ ես Հոր մեջ եմ, և Հայրը՝ իմ մեջ»:

Հովհաննես 14.11

Հայտնագործենք

Դու հիմա այն տարիքում ես, երբ արդեն ունես կամ գտնվում ես մտերիմ ընկերություն կազմելու ընթացքում: Ձգտելով լավ ճանաչել միմյանց՝ ընկերները սովորաբար կապվում են իրար ընդհանուր հետաքրքրություններ, միանման սիրված կամ չսիրված բաներ ունենալու պատճառով: Նրանք սովորաբար կիսում են նույն գաղափարներն ու արժեքները, բայց ամենից ավելի՝ միմյանց հանդեպ ունեցած իրական սերն ու հարգանքն է բնորոշում նրանց հարաբերությունը: Երբեմն ընկերներն այնքան ընդհանրություններ են ունենում, որ թվում է, թե նրանք համարյա մեկ են և նույն անձը:

■ Կարո՞ղ ես մտաբերել այսպիսի մտերմիկ մի հարաբերություն ընկերական շրջապատում: Գրի՛ր քո փորձառությունների և տպավորությունների մասին՝ կապված մոտիկ ընկերության հետ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

Աստվածաշնչի պատմության մեջ տե՛ս, թե ինչպես է Հիսուսը նկարագրում իր միությունը Հոր հետ:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ՀԻՍՈՒՍԸ ԵՎ ՀԱՅՐԸ ՄԵԿ ԵՆ

Հովհաննես 8.12-59, 14.5-11

Նիկիական հանգանակը շարունակում է խոսել Սուրբ Երրորդության երկրորդ անձի՝ Հիսուս Քրիստոսի մասին. *«Աստված՝ Աստծուց, Լույս՝ Լույսից, Ճշմարիտ Աստված՝ Ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ թե արարած: Բնությամբ Հոր հետ նույնը, որի միջոցով գոյացան ամեն ինչ երկնքում և երկրի վրա, տեսանելիներն ու անտեսանելիները»:*

Կարդա՛ հետևյալ հատվածները Հովհաննեսի Ավետարանից և տե՛ս, թե ինչպես է Հիսուսը խոսում իր միության մասին Հայր Աստծո հետ, և թե ինչպես են իր խոսքերը կազմում Եկեղեցու հավատքի հիմքերը:

Հիսուսը դարձյալ իր խոսքն ուղղեց ժողովրդին՝ ասելով.

- Ես եմ աշխարհի լույսը: Ով որ ինձ հետևի, խավարի մեջ չի քայլի, այլ կունենա այն լույսը, որ առաջնորդում է դեպի կյանք:

Փարիսեցիներն ասացին.

- Դու ինքդ ես վկայություն տալիս քո անձի մասին, հետևաբար քո վկայությունն ընդունելի չէ:

Հհ 8.12-13

Հիսուսը դարձյալ ասաց նրանց.

- Ահա ես գնում եմ, դուք պիտի փնտրեք ինձ, բայց մեռնեք ձեր մեղքի մեջ, որովհետև դուք չեք կարող գալ այնտեղ, ուր ես եմ գնում:

Հրեաները հարցնում էին միմյանց.

- Ասում է, թե դուք չեք կարող գալ այնտեղ, ուր ես եմ գնում, արդյոք անձնասպա՞ն է լինելու:

Հիսուսը պատասխանեց.

- Դուք այս աշխարհին եք պատկանում, բայց ես վերևից եմ գալիս. դուք այս աշխարհից եք, բայց ես այս աշխարհից չեմ: Ահա սրա համար ասացի ձեզ, թե ձեր մեղքերի մեջ պիտի մեռնեք: Այո՛, եթե հավատաք, որ ես եմ, պիտի մեռնեք ձեր մեղքերի մեջ:

Նրանք հարցրին.

- Ո՞վ ես դու:

- Նա, որ սկզբից ևեթ խոսում է ձեզ հետ,- պատասխանեց Հիսուսը:

Հհ 8.21-25

Հիսուսը, իր խոսքն ուղղելով իրեն հավատացող հրեաներին, ասաց.

- Եթե հավատարիմ մնաք իմ ուսուցումներին, ճշմարտապես իմ աշակերտները կլինեք. կճանաչեք ճշմարտությունը, և ճշմարտությունը կազատի ձեզ:

Նրանք պատասխանեցին.

- Մենք Աբրահամի որդիներն ենք, և ոչ ոքի երբեք ծառա չենք եղել, ինչպե՞ս ես ասում, թե՝ «Ազատ պիտի լինեք»:

Հիսուսն ասաց նրանց.

- Լա՛վ իմացեք, ով մեղք է գործում, ծառա է մեղքին: Ծառան տան մեջ մնայուն մեկը չէ, մինչդեռ որդին մնայուն է: Արդ, եթե Որդին ազատի ձեզ, այն ժամանակ իսկապես ազատ կլինեք: Գիտեմ, որ Աբրահամի որդիներն եք, բայց դուք ուզում եք ինձ սպանել, որովհետև իմ խոսքը տեղ չունի ձեր մեջ: Ես խոսում եմ այն, ինչ տեսա իմ Հոր մոտ, իսկ դուք կատարում եք այն, ինչ լսել եք ձեր հորից:

Հհ 8.31-38

Հիսուսն ասաց նրանց.

- Եթե Աստված ձեր Հայրը լիներ, բնականաբար, պիտի սիրեիք ինձ, որովհետև ես Աստծուց ելա և եկա. ես ինքս ինձ չեկա, այլ նա՛ ուղարկեց ինձ: Ինչո՞ւ դուք իմ խոսքը չեք հասկանում. Նրա համար, որ չեք կարող լսել: իսկ իրապես կսիրեիք, որովհետև ես Աստծուց ելա ու եկա. և ոչ թե ինքս ինձ եկա, այլ նա՛ ուղարկեց ինձ: Ինչո՞ւ դուք իմ խոսածը չեք հասկանում. որովհետև իմ խոսքը չեք կարող լսել: ...Ով Աստծուց է, Աստծո խոսքերն է լսում, իսկ դուք, որովհետև Աստծուց չեք, նրա խոսքերը չեք լսում:

Հհ 8.42-43, 47

Լա՛վ իմացեք, ով իմ խոսքերը գործադրի, նա հավիտյան չի մեռնի:

Հրեաներն ասացին.

- ...Դեռ հիսուն տարեկան էլ չկաս, և դու տեսել ես Աբրահամի՞ն:

Հիսուսը պատասխանեց.

- Լա՛վ իմացեք, Աբրահամի ծնունդից առաջ եմ ես:

Այս խոսքի վրա նրանք քարեր վերցրին, որ քարկոծեն նրան, բայց Հիսուսը խույս տվեց և տաճարից ելավ գնաց:

Հհ 8.51-59

Հիսուսը պատասխանեց նրան.

- Ե՛ս եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը: Միայն ինձնով կարելի է գնալ իմ Հոր մոտ: Եթե ինձ ճանաչեիք, կճանաչեիք նաև իմ Հորը. այժմվանից իսկ դուք գիտեք նրան և տեսել եք նրան:

- ...Ով ինձ տեսավ, տեսավ Հորը. էլ ինչպե՞ս ես ասում՝ «Ցո՛ւյց տուր մեզ Հորը»: Չե՞ս հավատում, որ ես իմ Հոր մեջ եմ, և Հայրս՝ իմ մեջ: Այս խոսքերը, որ ես ասում եմ ձեզ, ինքս ինձնից չեմ ասում, այլ Հայրը, որ բնակվում է իմ մեջ, իմ միջոցով է կատարում իր գործերը: Հավատացե՛ք ինձ, որ ես Հոր մեջ եմ, և Հայրը՝ իմ մեջ. եթե ոչ իմ խոսքերի, գոնե իմ կատարած գործերի համար հավատացեք ինձ:

Հհ 14.6-7, 9-11

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ 8.12-59, 14.5-11 ՀԱՏՎԱԾՆԵՐԸ ՔՈ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԽՈՍՔԵՐՈՎ

■ Հիմք ընդունելով խմբային վարժությամբ քո սովորածները և սուրբգրային հատվածը՝ գրի՛ր **Հովհաննես 8-րդ և 14-րդ** գլուխներում նշված Հիսուսի խոսքերը, որոնք լրացնում և հստակեցնում են ներքևի դրոշակների կապակցությունները:



.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԼՈՒՅՍԸ ԵԿԱՎ ԱՇԽԱՐՀ

Եկեղեցին մշտապես արտահայտել է իր հավատքը հոգևոր երգերի և աղոթքի միջոցով, նույնիսկ ավետարանների գրվելուց և Նիկիական հավատամքի կազմվելուց առաջ: Ինչին հավատում, նրան էլ աղոթում է՝ ի պատասխան Աստծո անսահման սիրո:

Շարականների և աղոթքների ընտրությունը, մի մասը քաղված ամենօրյա աստվածպաշտական արարողություններից, մի մասն էլ՝ տոներից, արտահայտում են Նիկիական հանգանակի հետևյալ հատվածում ամփոփվածը. *«Ասված՝ Աստծուց, Լույս՝ Լույսից, Ճշմարիտ Ասված Ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ թե արարած: Բնությամբ Հոր հետ նույնը, որի միջոցով գոյացան ամեն ինչ երկնքում և երկրի վրա, տեսանելիներն ու անտեսանելիները»:*

Առավոտյան

Արևագալի ժամերգության ընթացքում երգվում է «Լույս» երգը, որն ուղղված է Սուրբ Երրորդության անձերից յուրաքանչյուրին: Կարդա՛ քառատող երգի առաջին երկուսը և տե՛ս, թե ինչպես է այն արտացոլում Նիկիական հավատամքի միտքը:

Ո՛վ Լույս, Արարիչ լույսի, առաջին լույս, որ բնակվում ես անմատչելի լույսերի մեջ, Հա՛յր Երկնավոր, լուսեղեն դասերից օրհնյալ. առավոտյան լույսի ծագելուն պես մեր հոգում ծագեցրո՛ւ Քո ճանաչելի լույսը:

Ո՛վ Լույս, Լույսից ծագում, արդար արեգակ, անճառ ծնունդ Հոր Որդի, Քո անունն արևից առաջ է փառաբանված Հոր հետ. առավոտյան լույսի ծագելուն պես մեր հոգում ծագեցրո՛ւ Քո ճանաչելի լույսը:

Հայր Աստծուն ուղղված առաջին տողը հիշեցնում է մեզ Ծննդոց գրքի առաջին գլխում ներկայացված աշխարհի ստեղծման մասին: Երկրորդ տողն ուղղված է Աստծո Որդուն: Երկուսն էլ ներկայացվում են որպես Լույս: Կողքի շրջանակի մեջ գրի՛ր երկրորդ տողի այն բառերը, որոնք հայտնում են, թե Աստծո Որդին միշտ գոյություն է ունեցել Հոր հետ: Ապա արտասանի՛ր հիշյալ երգին հաջորդող հետևյալ աղոթքը.

Քո լույսով, ո՛վ Քրիստոս, մենք բոլորս լուսավորվեցինք և Քո սուրբ խաչին, ո՛վ Փրկիչ, մենք՝ հավատացյալներս, ապավինեցինք: Լսի՛ր մեզ, ո՛վ Ասված, Փրկի՛չ մեր, տո՛ւր մեզ Քո խաղաղությունը և ցո՛ւյց տուր մեզ Քո ողորմությունը, ո՛վ մարդասեր Տեր:

- Խորհրդածի՛ր և գրի՛ր, թե ինչպես Հիսուս Քրիստոսը լուսավորեց քո կյանքը: Կայի՞ն հարցեր, որոնք կարիք ունեին հստակեցման: Խավարի ո՞ր մասերը պետք է լուսավորվեին քեզ համար: Ինչպե՞ս զգացիր Հիսուս Քրիստոսի ողորմությունը և ստացար Տիրոջ խաղաղությունը:

.....

.....

.....

.....

Երեկոյան

«Լույս զվարթ»-ը քրիստոնյաների երգած հնագույն երգերից մեկը, մինչ այսօր երգվում է կիրակնամտի, այսինքն՝ շաբաթ օրվա Երեկոյան ժամերգության ընթացքում: Սարկավագի՝ եկեղեցում խնկարկելու հետ ժամերգության մասնակիցները սույն երգով փառաբանում և գովերգում են Աստծուն:

Զվարթ Լույս, անմահ սուրբ փառքի, երկնավոր Հոր, սուրբ կենարարի, Ո՜վ Հիսուս Քրիստոս: Արեգակի մայրամուտին եկածներս տեսանք երեկոյի լույսը: Օրհնում ենք Հորը, Որդուն և Աստծո Սուրբ Հոգուն: Եվ ամենքս ասում ենք՝ ամեն: Արժանի՛ դարձրու մեզ ամեն ժամ երգի ձայնով օրհնելու Ամենասուրբ Երրորդությանդ փառքի անունը, որ կենդանություն է տալիս: Ուստի և աշխարհը Քեզ է փառավորում:

Սուրբ Ծննդյան տոնին

Սուրբ Ծննդյան ութօրեքին երգվող Օրհնության շարականը երգվում է նաև Ջրօրհնեքի արարողության ընթացքում՝ ի հիշատակ Հորդանան գետում մեր Տիրոջ մկրտության:

Ո՛վ Լույս՝ Լույսից, Դու Հոր կողմից առաքվեցիր և մարմնացար Սուրբ Կույսից, որպեսզի վերստին նորոգես ապականված Ադամին: Դու Ասված երկրի վրա հայտնվեցիր և մարդկանց մեջ շրջեցիր և փրկեցիր Ադամի տրված անեծքից:

Երկնքից Քո Հոր ձայնը վկայեց Քո մասին՝ ասելով. «Սա՛ է իմ Որդին», և Սուրբ Հոգին աղավնակերպ իջմամբ բացահայտեց Քեզ:

- Ընթերցի՛ր հիշյալ շարականները **Ա Հովհաննես 1.1-5** հատվածի լույսի ներքո: Ինչպե՞ս է առաքյալի պատգամն արձագանք գտնում նրանց մեջ: Արտահայտի՛ր քո մտածումները ներքևի դրոշի մեջ, որը քո ձևավորումով կհռչակի այդ հավատքը:

Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք և մեր ձեռքերով շոշափեցինք Որդուն՝ Բանը, որ սկզբից իսկ կյանքի ստեղծողն էր: Նա նույն ինքը կյանքն էր, որ հայտնվեց: Մենք տեսանք և վկայում ենք՝ ձեզ պատմելով նրա մասին, այսինքն՝ հավիտենական կյանքի մասին, որ Հոր հետ էր և այժմ հայտնվեց մեզ: Ինչ որ տեսանք ու լսեցինք, պատմում ենք ձեզ, որպեսզի դո՛ք էլ մասնակից դառնաք այն հաղորդությանը, որ մենք ունենք Հոր և նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ, և ձեր ուրախությունը կատարյալ լինի: Ահա թե ինչո՛ւ ենք ձեզ գրում այս նամակը: Այն պատգամը, որ լսեցինք նրանից և փոխանցում ենք ձեզ, այս է: Ասված լույս է, բնավ խավար չկա նրա մեջ:

Ա Հհ 1.1-5



ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Դու արդեն իմացար Հիսուս Քրիստոսի՝ երկնավոր Հոր հետ ունեցած սերտ հարաբերության մասին: Այդ սերտ միությանը հաղորդակից է դառնում յուրաքանչյուր հավատացյալ, որովհետև Աստծո Որդին՝ Հիսուս Քրիստոս մեր Տերը, մարդանալով բաժնեկից եղավ մեր մարդկային բնությանը: Խորհրդածի՛ր և գրի՛ր, թե քեզ համար ի՞նչ է նշանակում Աստծո հետ սերտ հարաբերությունը՝ որպես Հիսուս Քրիստոսի աշակերտի: Այս գիտելիքն ինչպե՞ս կփոխի քո առօրյա կյանքը: Ինչպե՞ս կփոխվեն քո մոտեցումները կյանքի զանազան իրավիճակների հանդեպ:

ՀԱՎԱՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնյաների նկատմամբ մեծագույն հալածանքներն սկսվեցին 4-րդ դարի արշալույսին, Հռոմի Դիոկղետիանոս կայսեր կողմից: Ի վերջո արտաքին ճնշումները տեղի տվեցին քրիստոնեությունը պետականորեն ճանաչմամբ՝ նախ Հայաստանում 301թ., ապա Հռոմում 313թ. Միլանի կայսերական հրովարտակով, որը հնարավորություն էր տալիս քրիստոնյաներին ազատորեն պաշտելու իրենց կրոնը կայսրության սահմաններում:

Չնայած արտաքուստ ազատ, սակայն Եկեղեցին հանդիպեց սխալ ուսուցումների սպառնալիքին՝ կապված Հիսուս Քրիստոսի անձի հետ: Արիոս անունով ալեքսանդրացի քահանան քարոզում էր, թե Աստծո Խոսքը, որ մարդացավ և ծնվեց Մարիամից, այսինքն՝ Հիսուս Քրիստոսը, Աստծո սուրբ Որդին չէ, այլ պարզապես մի արարած, ինչպես մարդկային մյուս բոլոր էակները: Նա ուսուցանում էր, որ Հիսուսը հավիտենապես գոյություն չուներ Հայր Աստծո հետ, այլ ստեղծված էր Աստծո կողմից՝ որպես անդրանիկը և Աստծո արարածներից ամենակարևորը՝ աշխարհի փրկության համար:

Այս հակասությունը լուծվեց Եկեղեցու հատուկ ժողովում, որը գումարվեց Կոնստանտին կայսեր հրամանով Նիկիայում (ներկայիս Թուրքիայի Իզնիկ ավան) 325թ.: Այստեղ հավաքվեցին քրիստոնեական Եկեղեցին ներկայացնող 318 եպիսկոպոսներ՝ քննարկելու և վճռելու, որ Բանը՝ Աստծո Որդին, ստեղծված չէ, այլ աստվածային է, այսինքն՝ Աստված է: Մեկ այլ ալեքսանդրացի՝ Աթանասը, տակավին սարկավագ, համարձակ խոսքով հանդես եկավ և պաշտպանեց Հիսուս Քրիստոսի աստվածությունը: Հենց այստեղ էր, որ Եկեղեցին բանաձևեց Նիկիական Հանգանակը՝ որպես իր հավատի խորհրդանիշ: Չնայած Արիոսի ուսուցումները մերժվեցին և որակվեցին որպես հերետիկոսություն, և Եկեղեցին դավանեց իր հավատքը ըստ Նիկիական Հանգանակի, բայց և արիոսականությունը տակավին դրսևորվում է բազում մերօրյա աղանդների կողմից, ովքեր իրենք իրենց կոչում են քրիստոնեական եկեղեցիներ: Քրիստոնեական հավատքի ուղղափառությունը ի տարբերություն աղանդավորների փաստվում է Նիկիական Հանգանակի անվերապահ դավանությամբ և առաջին երեք Տիեզերական ժողովների որոշումների ընդունումով:

Բառարան

ՀԱՆԳԱՆԱԿ՝ հավատի սահմանում, խորհրդանիշ:

ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ՝ սխալ ուսուցում քրիստոնեական հավատի մասին:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասին ձեր զավակը աշխատեց և ուսումնասիրեց սուրբգրային մի շարք հատվածներ, որոնցից ծանոթացավ և գաղափար կազմեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Աստծո՝ Իր Երկնավոր Հոր հետ ունեցած հարաբերության մասին: Հիսուսի խոսքերով ամրագրված Եկեղեցու հավատքը, որն արտահայտվել է Նիկիական Հանգանակում, սահմանում է, որ Հիսուս Քրիստոսը՝ Բանն Աստված, Աստծո Որդին է, ով հավիտենապես գոյություն ուներ Հայր Աստծո և Սուրբ Հոգի Աստծո հետ:

Աշակերտները նաև առիթ ունեցան ծանոթանալու մեր Եկեղեցու ծիսական կյանքում գործածվող շարականներին ու աղոթքներին, որոնք դավանում են միևնույն հավատքը: Լիահույս ենք, որ այսպիսի ընկալումը շատ ավելի իմաստալից կդարձնի նրանց մասնակցությունը ծիսապաշտամունքային կյանքին: Թող նրանց կյանքը խորապես տպավորվի այն իմացությամբ, որ Աստծո հավիտենական Որդին՝ Հիսուս Քրիստոս մեր Փրկիչը, մեր եղբայրն է Աստծո Հայրության մեջ: Եկեղեցու հավատամքի ըմբռնումը նաև կապահովագրի նրանց տարբեր տեսակի աղանդավորական մոլորություններից, ովքեր ինքնակոչ իրենց ճշմարիտ քրիստոնյա են ձևացնում:

Շարունակե՛ք աջակցել ձեր զավակի հավատքի զարգացմանը՝ ընտանիքով միասին եկեղեցական արարողություններին մասնակցելով և մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանը նպաստելով:

10. ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ՝ ԱՐԱՐԻՉ

«Ապրված նրանով ստեղծեց ամեն ինչ, առանց նրա ոչ մի բան չստեղծվեց:

Հովհաննես 1.3

Հայտնագործենք

Դու հիմա ապրում ես կյանքիդ այն շրջանում, երբ հետաքրքրությունդ զգայուն է դառնում զանազան գաղափարների նկատմամբ, օրինակ՝ արարչագործությունը, և քեզ հավանաբար մտատանջում է այն հարցը, թե ինչպե՞ս է առաջացել աշխարհը: Մենք՝ մարդիկս, տալիս ենք շատ բացատրություններ աշխարհի և նրանում գոյություն ունեցող ամեն ինչի ծագման մասին: Տեխնոլոգիական արդի նվաճումները հեշտորեն քեզ հնարավորություն կտան համացանցի միջոցով շատ տեղեկություններ ստանալ: Առաջարկվող ամենահայտնի վարկածներից են մեծ պայթյունի, արարչականության և խելացի ձևավորման տեսությունները:

- Խելացի ձևավորման տեսությունը պնդում է, որ տիեզերքի առանձնահատկությունների օրինաչափությունը և կենդանի արարածների գոյությունը լավագույնս բացատրվում են խելացի սկզբնապատճառով և ոչ թե ինքնաբերաբար ուղղորդվող գործընթացով:
- Մեծ պայթյունի վարկածը տիեզերագիտական տեսություն է, որով տիեզերքն առաջացել է մոտ 20 միլիարդ տարի առաջ, շատ փոքր, բայց չափազանց մեծ խտություններ և ջերմություն ունեցող նյութական մասնիկների ահռելի բախումից:
- Արարչականության տեսությունը հիմնվում է Աստվածաշնչի Ծննդոց գրքի 6-օրյա արարչության պատմության վրա: Այս տեսությունը պաշտպանող գիտնականները հավատում են, որ արարիչն է ստեղծել գոյություն ունեցող ամեն ինչ, սակայն չեն պնդում, որ Ծննդոց գրքում նկարագրվածն այդ արարչության տառացի պատմությունն է:

■ Ինչպիսի՞ն է քո ընկալումն աշխարհի առաջացման վերաբերյալ:

.....

.....

.....

.....

.....

.....

Մինչ գիտությունը կփորձի պատասխանել աշխարհի առաջացման վերաբերյալ հարցերին, առաջարկված տեսություններից և ոչ մեկը լիարժեք չեն բավարարում ուղղափառ քրիստոնեական հավատքի տեսակետները, որոնք արտահայտված են Նիկիական հանգանակում: Բացենք Սուրբ Գիրքը և տեսնենք, թե ով է ստեղծել այն ամենն, ինչ գոյություն ունի:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ԱՄԵՆ ԻՆՉ ՍՏԵՂԾՎԵԼ Է ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԻՋՈՑՈՎ

Հովհաննես 1.1-14, Կողոսացիներին 1.1-20, Եբրայեցիներին 11.3, Ա Կորնթացիներին 8.6

Նիկիական հանգանակը հռչակում է, որ Սուրբ Երրորդության երկրորդ անձը՝ Հիսուս Քրիստոսը, Աստված է Աստծուց, Լույս՝ Լույսից, Ճշմարիտ Աստված՝ Ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ թե արարած: Բնությամբ Հոր հետ նույնը, որի միջոցով գոյացան ամեն ինչ երկնքում և երկրի վրա, տեսանելիները և անտեսանելիները:

Կարդա՛ սուրբգրային հետևյալ հատվածները և տե՛ս, թե ինչպես է Նոր Կտակարանը նկարագրում Քրիստոսին՝ որպես Արարչի:

Աշխարհի ստեղծագործությունից առաջ գոյություն ուներ Բանը: Բանն Աստծո հետ էր, և Բանն Աստված էր: Նա սկզբից Աստծո հետ էր: Աստված նրանով ստեղծեց ամեն ինչ. առանց նրա ոչ մի բան չստեղծեց: Կյանքը նրանով սկիզբ առավ: Եվ կյանքը մարդկանց համար Լույսն է, որ փայլում է խավարի մեջ. բայց խավարը չկարողացավ հասկանալ նրան:

Հովհաննեսը, որ Աստծո կողմից ուղարկված մի մարդ էր, եկավ վկայություն տալու Լույսի մասին, որպեսզի նրա միջոցով ամեն մարդ հավատա: Ինքը Լույսը չէր, այլ մի վկա, որ եկել էր վկայելու Լույսի մասին: Բանն էր ճշմարիտ Լույսը, որ աշխարհ գալով լուսավորում է ամբողջ մարդկությունը: Նա աշխարհի մեջ էր, աշխարհը նրանով ստեղծվեց, սակայն աշխարհը չճանաչեց նրան: Նա եկավ իր իսկ ստեղծած աշխարհը, բայց իր իսկ ստեղծած մարդիկ չընդունեցին նրան: Իսկ իրեն ընդունողներին և իրեն հավատացողներին նա իշխանություն տվեց Աստծո որդիներ լինելու. ո՛չ արյան ճամփով և ո՛չ էլ մարմնի կամ մարդկային կամքով, այլ Աստծուց ծնվելով:

Եվ Բանը մարդ եղավ ու բնակվեց մեր մեջ, և մենք տեսանք նրա փառքը, որ Հորից եկավ՝ լի շնորհով և ճշմարտությամբ:

Հովհաննես 1.1-14

Քրիստոսը տեսանելի պատկերն է աներևույթ Աստծո, Հոր Որդին՝ ծնված բոլոր ստեղծվածներից առաջ. որովհետև Աստված նրանով ստեղծեց ամեն բան երկնքում թե երկրի վրա, երևելի թե աներևույթ, որոնց շարքին են ոգեղեն աշխարհի գահակալներն ու տերությունները, պետություններն ու իշխանությունները: Նրա ձեռքով և նրա համար ստեղծվեց ամեն ինչ: Նրա գոյությունն ամեն բանից առաջ է, և ամեն բան նրանով է գոյացել: Նա է գլուխը մարմնի, որ եկեղեցին է: Նա է սկիզբը, որ անդրանիկ ծնունդը եղավ մեռելներից, որպեսզի ինքն առաջնությունն ունենա ամե՛ն բանի մեջ. քանզի Հայրն ուզեց, որ Քրիստոսն իր մեջ ունենա լիությունն աստվածային բնության: Նրա ձեռքով ուզեց իր հետ հաշտեցնել ամեն բան երկնքում և երկրի վրա՝ խաղաղություն հաստատելով խաչի վրա նրա մահվամբ:

Կողոսացիներին 1.15-20

Հավատով ենք հասկանում տիեզերքի ստեղծումն Աստծո խոսքով, որով տեսանելի այս տիեզերքը գոյացավ անտեսանելիից:

Եբրայեցիներին 11.3

...բայց մեզ համար կա միայն մեկ Աստված՝ Հայրը, որից սկիզբ է առել ամեն բան, և մենք կանք նրա համար. և կա միայն մեկ Տեր՝ Հիսուս Քրիստոսը, որի միջոցով ստեղվեց ամեն ինչ, և մենք կանք նրա միջոցով:

Ա Կորնթացիներին 8.6

ԽՈՐՀԵՆՔ ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Հովհաննեսի Ավետարանի սկզբի տողերում ընդարձակ խոսվում է Բանն Աստծո մասին: Ո՞ր բառերը կարող ես գործածել նկարագրելու Բանը՝ ըստ Հովհաննեսի կողմից ներկայացվածի: Գտի՛ր առնվազն երկուսը Ավետարանի սկզբի նախադասությունների միջից:**

Բանը ..... է Բանը ..... է Բանը ..... է Բանը ..... է

2. **Այս հատվածի ո՞ր նախադասություններում է նշվում, թե Բանը, որի մասին խոսում է Հովհաննեսը, Հիսուս Քրիստոսն է: Գրի՛ր դրանց մասին քո ինքնուրույն խոսքերով:**

.....

.....

.....

ԳՏԻ՛Ր ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ՝ ԲԱՆՆ ԱՍՏԾՈՒՆ, ԾՆՆԴՈՑ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

■ Կարդա՛ Ծննդոց 1-ին գլուխը և պատասխանի՛ր հետևյալ հարցումներին՝ գծապատկերը լրացնելու համար:

(Հուշում. ո՞ր բառերն են կրկնվում Ծննդոց 1-ի գլխի 3,6,9,11,14,20,24 և 26 համարներում):

1. **Աստված ի՞նչ ստեղծեց յուրաքանչյուր օր:**
2. **Աստված ի՞նչ «արեց» ստեղծելու իր յուրաքանչյուր արարածին:**

	1	2
Օր 1		
Օր 2		
Օր 3		
Օր 4		
Օր 5		
Օր 6		
Օր 7		

■ Համեմատի՛ր սուրբգրային հետևյալ համարները: Ինչպե՞ս են դրանք կապակցվում իրար հետ: Ծննդոց 1.1, Սաղմոս 148.5, Հովհաննես 1.3,14 Գրի՛ր մտածումներիդ մասին:

.....

.....

.....

.....

Բառարան

ԱՐԱՐՉԱԿԻՑ՝ վերաբերում է Հիսուս Քրիստոսին, ով ստեղծեց գոյություն ունեցող ամեն ինչ Հոր և Սուրբ Հոգու հետ:

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՆ ԱՐԱՐԻՉՆ Է

Եկեղեցին հավատում է, որ ամեն ինչ ստեղծվել է Աստծո կողմից աստվածային Խոսքի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, ով փառաբանվում է որպես Արարիչ: Այս հավատքը, որը դավանվում է Նիկիական հանգանակում, արտահայտվում է Եկեղեցու ծիսապաշտական աղոթքներում և շարականներում: Կարդա՛ աղոթքների հատընտիր հետևյալ հատվածները և նշի՛ր այն կապակցությունները, որոնք արտացոլում են այս հավատքը:

Հոգևոր երգեր Ավագ Ուրբաթի և Ավագ Շաբաթվա ժամերգություններից

Երգ

Դու վեհագույնն ես բնության էակներից և Արարիչն ես բոլորի, երբ ծագեցնես խաչիդ նշանը Քո մյուսանգամ գալստյանը, հավատով երկրպագողներիս լուսավորի՛ր նույն լույսով, քանզի բարեպաշտ խաչակիրների նման Քեզ ենք օրհնում հավիտյան:

Օրհնություն ԲՁ

Արքուն բնությամբ բոլորի Արարիչն
այսօր ննջում է մահացածների մեջ:

Մանկունք ԴԿ

Որ արարածների Արարիչն ես հանգչած քերովբեների մեջ,
վեմ քարով կնքվեցիր երկրում:

■ Ընթերցի՛ր **Ղուկաս 23.44-56** հատվածը քո Աստվածաշնչից և գտի՛ր այն համարները, որոնք համապատասխանում են քո կարդացած որոշ տողերի իմաստին: Պարզի՛ր յուրաքանչյուր տողը և գրի՛ր դրան համընկնող սուրբգրային հղումը:

Հոգևոր երգեր	***Սուրբ Գիրք***
.....	.....
.....	.....
.....	.....

Շարական Ավագ Ուրբաթի Առավոտյան ժամերգությունից, Տէր Յերկնից ԳՁ

Ով սքանչելի և ահավոր տեսարան, երկնքի և երկրի Արարչին այսօր տեսանք խաչի վրա:

Տիրոջը խաչի վրա տեսնելիս խավարեց արեգակը, և տաճարի վարագույրը վերևից ներքև պատռվեց:

■ Խորհրդածի՛ր այս խոսքերի շուրջ: Համաբարբառի օգնությամբ գտի՛ր այն հատվածները, որոնք նկարագրված են հիշյալ տան մեջ, և հղումները գրի՛ր ներքևի գծի վրա:

.....

ԽՈՍՏՈՎԱՆՎԱԾ ՇԵՍՈՒՄ ԵՎ ՍՈՒՐԲԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Եկեղեցու հայրերը համոզված էին, որ Հիսուս Քրիստոսը ճշմարիտ Աստված է, Բանն Աստված և ամեն ինչի Արարիչը: Ծանոթացի՛ր Սուրբ Պատարագի ընթացքում Սուրբ Հաղորդության պատրաստության համար քահանայի կողմից ծածուկ ընթերցվող աղոթքը:

Ո՜վ Տեր, զորությունների Ամենակալ և բոլոր էակների Արարիչ, Դու ամեն բան ոչնչից գոյության կոչեցիր. Դու մարդասիրաբար պատվեցիր մեր հողեղեն բնությունը՝ մեզ սպասավոր կարգելով այսպիսի փառավոր և անասելի խորհրդի: Ո՜վ Տեր, Քեզ ենք մատուցում այս պատարագը, ընդունի՛ր մեր կողմից մատուցված այս ընծան և կատարելությա՛ն հասցրու այն՝ խորհրդաբար վերածելով Քո Միածնի Մարմնին և Արյանը, որպես մեղքերի թողության դե՛ղ պարգևի՛ր այս հացից ու բաժակից ճաշակողներիս:

ՄՏԱՔԻ՛Ր ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԻ՛Ր

■ Նիկիական հանգանակից կարդա այն մասը, որը վերաբերում է Հայր Աստծուն և Որդի Աստծուն՝ հատուկ ուշադրություն դարձնելով *«Արարիչ երկնքի և երկրի...»* և *«որի միջոցով գոյացան ամեն ինչ երկնքում և երկրի վրա...»* կապակցություններին: Ապա մտածի՛ր վերևի աղոթքի առաջին նախադասության շուրջ: Ինչպե՞ս է աղոթքում նկարագրվում Հիսուս Քրիստոսը՝ որպես արարիչ: Հավատամքի ո՞ր կապակցությունն է նշում, թե Հիսուս Քրիստոսն արարչակից է Հորը: Գրի՛ր քո մտածումները ներքևի տողերին:

.....

.....

.....

.....

«Մարդեղության մասին» իր գրքում Սուրբ Աթանասը նաև գրում է, որ ամեն ինչ ստեղծվել է Աստծո կողմից իր իսկ սեփական Բանի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Ամենակալ ստեղծեց տիեզերքը, որպեսզի գոյություն ունենա իր խոսքի միջոցով, ինչպես ասում է նախ Ծննդոց գրքում. Ի սկզբանե Ամենակալ ստեղծեց երկինքն ու երկիրը, ապա «Հովիվը» նվիրական գրքում ասում է. «Նախ և առաջ հավատա, որ Ամենակալ մեկ է, ով ստեղծեց և կազմեց ամեն ինչ և նրանց բոլորին գոյության կոչեց ոչնչից»: Պողոսը նույնպես անդրադառնում է սրան՝ ասելով. «Հավատքով ենք հասկանում, որ աշխարհը կազմվել է Ամենակալ Խոսքով, որպեսզի փասատվի, թե այն ինչ որ տեսնում ենք, չեն ստեղծվել երևացող բաներից... Նա ամեն ինչ ստեղծեց ոչնչից իր սեփական Խոսքի՝ մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի միջոցով:

■ Մտածի՛ր Սբ Աթանասի հիշյալ խորհրդածության շուրջ: Ինչի՞ վրա է նա ծանրորեն հենվում՝ բացատրելու Եկեղեցու հավատքը, որ Հիսուս Քրիստոսն արարչակից է Հայր Աստծուն:

ԴՈՒՔ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՔ ԱՍՏԾՈ ՊԱՏԿԵՐՈՎ

Մենք ստեղծված ենք Աստծո պատկերով, ինչը բացահայտվեց մեզ մարդեղացած Բանն Աստծո՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

«Որդին, որ Հոր փառքի լույսն է և ճշգրիտ պատկերը նրա էության, որ իր խոսքի զորությամբ պահում է տիեզերքը...» **(Եբ 1.3)**:

Որպես Հիսուս Քրիստոսի եղբայրներ և քույրեր՝ մենք կոչված ենք մասնակցել ստեղծագործելու գործընթացին մեր պատասխանատու մոտեցումով և արարված ամեն ինչի օգտագործումով: Լինելով արարչագործության մի մասը՝ մենք պարտականություն ունենք մեր սեփական մարմինների և մտքերի հոգատար խնամքի համար: Լսենք Սբ Պողոսի հորդորները երիտասարդներին:

Պողոսը՝ Աստծո կամքով Հիսուս Քրիստոսի առաքյալը լինելու կոչվածը, Աստծո այդ եկեղեցուն, որ ...

Մի՞թե չգիտեք, որ անիրավություն անողներն Աստծո արքայությունը չեն ժառանգելու: Դուք ձեզ չխաբեք: Նրանք, որ պոռնկություն են անում կամ կռապաշտ են, շնացող, իգացող, արվամոլ, գող, ագահ, գինեմոլ, բամբասող կամ հափշտակող, Աստծո արքայությունը չեն ժառանգելու: Եվ ձեզնից ոմանք այդպիսին չէի՞ն: Բայց ձեր մեղքերից լվացվեցիք, սրբվեցիք, արդարացաք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անունով և մեր Աստծո Հոգու միջոցով:...Հետևաբար հեռո՛ւ փախեք պոռնկությունից: Մյուս բոլոր մեղքերը, որ մարդ գործում է, կապ չունեն նրա մարմնի հետ. բայց ով պոռնկություն է անում, իր մարմնի դեմ է մեղանչում: Չգիտե՞ք, որ ձեր մարմինները տաճարն են Սուրբ Հոգու, որը դուք Աստծուց եք առել, և այն բնակվում է ձեր մեջ: Իմացե՛ք, որ դո՛ւք չեք ձեր անձի տերը, այլ Աստված, որ փրկագնով գնեց ձեզ համար: Ուստի այնպե՛ս ապրեցեք, որ Աստված փառավորվի ձեր մարմիններով:

Ա Կորնթացիներին 6.9-11, 18-20

- Ձեր խմբով քննարկե՛ք և բացահայտե՛ք ձեր միջավայրում տարածված արդի որոշ փորձություններ, որոնք գուցե վնասակար լինեն ձեր մարմիններին, ազդեն ձեր մտքին, ստրկացնեն ձեր ազատ կամքը և դժվարացնեն լավը վատից տարբերակելու ձեր հնարավորությունը: Ինչպե՞ս կարող ես ամուր պաշտպանել ինքդ քեզ այսպիսի վտանգներից:

ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Մտածի՛ր և գրի՛ր մի աղոթք Հիսուս Քրիստոսին՝ Բանն Աստծուն, որի միջոցով դու գոյություն ունես, և խնդրի՛ր Տիրոջ օգնությունը աստվածահաճո կյանք ապրելու համար:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս գլուխը նպատակ ուներ ձեր զավակին ծանոթացնել Հիսուս Քրիստոսին՝ որպես ամեն ինչի Արարչի: Նիկիական հանգանակում Քրիստոսը ներկայացվում է որպես մեկը, «որով ամեն ինչ ստեղծվեց», և այս սահմանումն ուսումնասիրվեց այստեղ սուրբգրային տարբեր հատվածների միջոցով: Միաժամանակ խոսվեց Եկեղեցու դավանանքի մասին, որով նույնպես Քրիստոսը դիտվում է որպես Արարիչ, և այս ընկալումը ներկայացվեց սրբապատկերների, ծիսապաշտամունքային զանազան աղոթքների և շարականների միջոցով: Ընդ սմին, աշակերտներին մատուցվեց Եկեղեցու հայրերի գրվածքները Քրիստոսի՝ որպես Արարչի մասին:

Ձեր զավակն այն տարիքում է, երբ նրա մտահորիզոնը բաց է զանազան գաղափարների ու մեկնությունների առջև, թե ինչպես է առաջացել աշխարհը: Մինչ նրանք սովորում են, թե ինչ են գիտությունն ու տեխնոլոգիան հասցրել բացահայտել Աստծո արարչագործության գաղտնիքներից, շատ կարևոր է նրանց իմանալ, թե ինչ են ուսուցանում Աստվածաշունչը և Սուրբ Եկեղեցին տիեզերքի և գոյություն ունեցող տեսանելի և անտեսանելի արարածների ծագման մասին: Նաև պետք է հասկանան, որ իբրև Աստծո պատկերով ստեղծված էակներ, նրանք կոչված են դառնալու մասնակիցներն արարչագործության մեջ և լինելու երկրի հավատարիմ մշակները: Սա է հնարավություն ստեղծում ապրելու ի Քրիստոս կյանքով:

Քաջալերե՛ք ձեր զավակին ապրելու Աստծո հետ և առիթնե՛ր ստեղծեք առողջ քննարկումների համար, ինչը կնպաստի հավատքի զարգացման ընթացքին: Շարունակե՛ք ուսումնասիրել Սուրբ Գիրքը և մասնակցե՛ք Եկեղեցու կյանքին և միասի՛ն աճեք որպես ընտանիք՝ կենտրոն ունենալով Հիսուս Քրիստոսին, «որի միջոցով ստեղծվեց ամեն ինչ»:

Գլուխ Դ

ՈՎ ՄԵԶ՝ ՄԱՐԴԿԱՆՑՍ, ԵՎ ՄԵՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԿՆՔԻՑ ԻՋՆԵԼՈՎ...

Նիկիական հանգանակը շարունակում է խոսել Սուրբ Երրորդության երկրորդ անձի մասին.

«Ով մեզ՝ մարդկանցս, և մեր փրկության համար երկնքից իջնելով՝ մարմնացավ, մարդացավ, կատարելապես ծնվեց Սուրբ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգու զորությամբ, որի միջոցով առավ մարմին, հոգի և միտք և այն ամենը, ինչ մարդկային բնություն ունի, ճշմարտապես և ոչ թե առերևույթ»:

Այս գլխում շարունակվում է հստակեցվել Եկեղեցու հավատքը Մարդեղացման անհրաժեշտության վերաբերյալ:

Դաս 11 հաստատում է պատճառը, թե ինչու մարդկությունը և աշխարհը փրկվելու կարիք ունեին:

Դաս 12 ցույց է տալիս Աստծո ցանկությունը՝ փրկելու ընկած մարդկությանը հավիտենական մահի ճիրաններից՝ ուղարկելով իր Միածին Որդուն:

Դաս 13 խոսում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի Մարդեղության մասին՝ ըստ ավետարանական պատումների և մարգարեական գրքերի:

Դաս 14 ներկայացնում է ավետարանական մի քանի հատվածներ՝ ցույց տալով Հիսուս Քրիստոսի ճշմարիտ մարդեղության դրվագները:

Ծնողների համար

Այս գլուխը սևեռվում է Աստծո Որդու Մարդեղության խորհրդի վրա և մեկնում է Եկեղեցու հավատքը Հիսուս Քրիստոսի՝ Աստվածորդու ծննդյան անհրաժեշտությունը:

Ձեր զավակը կիմանա, որ Ադամի և Եվայի անհնազանդության մեղքն անհրաժեշտություն ստեղծեց Աստծուն բացելու փրկության ճանապարհը: Աստված ցանկանում է փրկել ընկած մարդկությանը մահվան հավիտենական ճիրաններից, և հենց այդ նպատակով ուղարկեց իր Միածին Որդուն մարմնանալու Կույս Մարիամից և ծնվելու որպես մարդ: Արդ, կարող ենք հռչակել և ասել Էմմանուել՝ Աստված մեզ հետ: Առաջիկա դասերը կմատուցեն դրվագներ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ մարդեղության մասին, ով իր մեջ կրեց ամեն մարդկայինը՝ բացի մեղքից:

Որպես ընտանիք առիթնե՛ր ստեղծեք արտահայտելու ձեր սերը և երախտիքը Աստծուն՝ փրկագործության համար: Շարունակե՛ք խորացնել ձեր գիտելիքները Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ և Փրկչի մասին: Թո՛ւյլ տվեք ձեր զավակին վկայել ձեր իսկ սեփական սիրո և նվիրումի մասին հանդեպ այն մեկը, ով Աստված լինելով նվաստացուցիչ չհամարեց ծնվել մեզ նման, որպեսզի մենք կարողանանք վերամիանալ Աստծուն՝ մեր Արարչին, և հավերժ ապրել ուրախության մեջ Սուրբ Երրորդության ներկայությամբ:

11. ԱԴԱՄԻ ՈՒ ԵՎԱՅԻ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

«...որովհետև հող էիր և հող էլ կդառնաս»:

Ծննդոց 3.19

Հայտնագործենք

ՎՐԻՊԵԼ ՆՇԱՆԱԿԵՏԻՑ

ἁμαρτία (ամարտիա) հունարեն բառ, որ նշանակում է վրիպել նշանակետից: Քրիստոնյաներն այն օգտագործում են մեղքի համար իբրև վրիպում նշանակետից կամ նպատակից՝ այսինքն սիրառատ Աստծուց:

- Օգտագործելով թիրախի շրջանակները՝ գրի՛ր տարբեր եղանակներ, որոնցով դու կամ մյուս մարդիկ «վրիպում են նշանակետից» կամ մեղք են գործում:



Կարդա՛ Աստվածաշունչը և տե՛ս, թե ինչպես մեղանչեցին Ադամն ու Եվան:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ԱԴԱՄՆ ՈՒ ԵՎԱՆ ՄԵՐԺՈՒՄ ԵՆ ՊԱՐԳԵՎԸ

Ծննդոց 3

Նիկիական դավանանքը պարզորոշ չի խոսում մարդկության անկման մասին, ինչևէ, այն ամփոփվում է հետևյալ նախադասությամբ. *«Ով մեզ՝ մարդկանցս, և մեր փրկության համար երկնքից իջնելով՝ մարմնացավ, մարդացավ, կատարելապես ծնվեց Սուրբ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգու զորությամբ»*:

Կարդա՛ Ծննդոց գրքի հատվածը և մտածի՛ր մարդկության փրկության անհրաժեշտության մասին:



Օձը երկրի վրա Աստծո ստեղծած բոլոր գազաններից ավելի խորամանկ էր: Օձն ասաց կնոջը. «Ինչո՞ւ Աստված ասաց, թե դրախտում գտնվող բոլոր ծառերի պտուղներից չեք կարող ուտել»: Կինն ասաց օձին. «Դրախտի ծառերի պտուղներից կարող ենք ուտել: Սակայն դրախտի մեջտեղի ծառի պտղի համար Աստված ասաց. «Դրանից չուտեք և չմոտենաք, որպեսզի չմեռնեք»: Օձն ասաց կնոջը. «Չեք մահանա, որովհետև Աստված գիտեր, որ այն օրը, երբ դրանից ուտեք, կբացվեն ձեր աչքերը, և դուք կլինեք աստվածների նման՝ կիմանաք բարին ու չարը»:

Կինը տեսավ, որ ծառի պտուղը լավ է ուտելու համար, ակնահաճո է և գրավիչ՝ ըմբռնելու համար: Նա առավ նրա պտղից, կերավ և տվեց իր մոտ կանգնած ամուսնուն, և նրանք կերան: Երկուսի աչքերն էլ բացվեցին, և նրանք հասկացան, որ մերկ են: Նրանք թզենու տերևներն իրար կարեցին և իրենց համար գոգնոց շինեցին: Երեկոյան նրանք լսեցին Տեր Աստծո՝ դրախտում շրջագայելու ոտնաձայնը, և Ադամն ու իր կինը Տեր Աստծուց թաքնվեցին դրախտի ծառերի մեջ: Տեր Աստված կանչեց Ադամին ու ասաց նրան. «Ո՞ւր ես»: Ադամը պատասխանեց. «Լսեցի քո ձայնն այստեղ՝ դրախտում, ամաչեցի, որովհետև մերկ էի, և թաքնվեցի»: Աստված ասաց նրան. «Ո՞վ հայտնեց քեզ, թե մերկ ես: Արդյոք կերա՞ր այն ծառի պտղից, որից պատվիրել էի, որ չուտես»: Ադամն ասաց. «Այս կինը, որ տվեցիր ինձ, նա՛ տվեց ինձ ծառի պտղից, և ես կերա»: Տեր Աստված ասաց կնոջը. «Այդ ի՞նչ ես արել»: Կինն ասաց. «Օձը խաբեց ինձ, և ես կերա»:

Տեր Աստված ասաց օձին. «Քանի որ այդ բանն արեցիր, անիծյալ լինես երկրի բոլոր անասունների ու գազանների մեջ: Քո լանջի ու որովայնի վրա սողաս, ողջ կյանքումդ հող ուտես: Թշնամություն պիտի դնեմ քո և այդ կնոջ միջև, քո սերնդի ու նրա սերնդի միջև: Նա պիտի ջախջախի քո գլուխը, իսկ դու պիտի խայթես նրա գարշապարը»:

Իսկ կնոջն ասաց. «Պիտի անչափ բազմացնեմ քո ցավերն ու քո հառաչանքները: Ցավերով երեխաներ պիտի ծնես, քո ամուսնուն պիտի ենթարկվես, և նա պիտի իշխի քեզ վրա»:

Աստված Ադամին ասաց. «Քանի որ անսացիր քո կնոջ ձայնին և կերար այն ծառի պտղից, որից միայն քեզ պատվիրեցի չուտել, բայց կերար դրանից, թող անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով: Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կյանքի բոլոր օրերին: Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը, և դու դաշտային բույսերով սնվես: Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալդ, որից ստեղծվեցիր, որովհետև հող էիր և հող էլ կդառնաս»:

Տեր Աստված ասաց. «Ահա Ադամը դարձավ մեզ նման մեկը, նա գիտի բարին և չարը: Արդ, գուցե նա ձեռքը մեկնի, քաղի կենաց ծառից, ուտի և անմահ դառնա»: Եվ տեր Աստված արտաքսեց նրան բերկրությանից դրախտից, որպեսզի նա մշակի այն հողը, որից ստեղծվել էր: Աստված դուրս հանեց Ադամին, բնակեցրեց բերկրության դրախտի դիմաց և հրամայեց քերովբեներին ու բոցեղեն սրին շուրջանակի հսկել դեպի կենաց ծառը տանող ճանապարհները»:

Բառարան

ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ՝ ատելություն, անվստահություն:

Օձի և կնոջ միջև դրված «թշնամության» սուրբգրային նկարագրությունը նպատակ ունի ներկայացնել խզումը այն ներդաշնակության, որ նախապես կար մարդկանց և մյուս արարածների միջև:

ԽՈՐՀԵՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

1. Երբ Ադամն ասաց Աստծուն. «Ես լսեցի քո ոտնաձայնը դրախտում», քո կարծիքով ի՞նչ փոխվեց մարդ արարածի և Աստծո փոխհարաբերության մեջ: Ինչո՞ւ փոխվեց:
2. Ի՞նչ կասես, արդյո՞ք Ադամն ու Եվան հոժարակամ էին պատասխանատվություն ստանձնել իրենց արարքի համար: Նրանք պատասխանատվությա՞մբ վարվեցին:
3. Ըստ Ծննդոց 3-րդ գլխի՝ ո՞ր արարածներին Աստված անիծեց: Որո՞նց չանիծեց: Սա ի՞նչ է հուշում քեզ:
4. Լա՛վ հիշիր, որ Աստված ոչ մի բանի չի անիծել՝ բառի բացասական բուն իմաստով, այլ վերցրել է իր տված օրհնությունը, քանի որ արարածը մերժեց շնորհի պարգևը և հրաժարվեց պատվել Աստծուն: Այս ընկալման լույսի ներքո, ինչպե՞ս ես հասկանում «թող անիծված լինի երկիրը քո արածի պատճառով...» արտահայտությունը և ի՞նչ որոշակի քայլեր կարող է մարդկությունն առնել՝ վերականգնելու Աստծո օրհնությունը երկրի վրա:

Ի՞ՆՉ Է ՄԵՂՔԸ

Դեռևս քո երեխա եղած ժամանակ ծնողներդ քեզ սովորեցնում էին խելոք մնալ, որ վնաս չտաս ինքդ քեզ և մյուսներին: Երբ հիմա արդեն մեծացել ես, հասկանում ես, որ պահվածքը, որ կարող էր վնասել քեզ և մյուսներին, իրականում վիրավորում է Աստծուն, որովհետև բոլորն իր արարածներն են: Ահա թե ինչպես է Եկեղեցին հասկանում մեղքը: Ադամի և Եվայի պատմությունը ոչ թե սոսկ երկուսի, այլ մեր բոլորի մասին է: Ամենքս էլ անհնազանդվում ենք Աստծուն, երբ անարդարաբար վերցնում ենք այն, ինչ մերը չէ, խաբում ենք իրար, փորձում ենք իշխել մյուսներին, նախանձում ենք իրար և այլն: Այս բաներն ընդունելի չեն Աստծուն: Մարդկությունը, անձնավորված Ադամով ու Եվայով, կարիք ուներ «մեծանալու» և հասունանալու՝ բարին չարից տարբերակելու համար Աստծո օգնությամբ: Փոխարենը, սատանայից փորձվելով, նրանք մերժեցին Աստծո սիրառատ խնամքը և մեղք գործեցին:

Ահա թե ինչպես է Եկեղեցու հայրերից Սբ Երանոսը բնութագրում.

> ***...դրա համար Աստծո պատկերով կազմված մարդը դրվեց երկրի վրա, և որպեսզի կենդանի լինի. «Նրա երեսին կենդանության շունչ փչեց, որպեսզի թե՛ ըստ իր ներշնչումի և թե՛ իր կազմության մարդը նմանվեր Աստծուն»: Ըստ այսմ, նա ազատ էր և ինքն իր գլխի տերն էր՝ ստեղծված լինելով Աստծուց այս կերպով, որպեսզի իշխի ամեն ինչի երկրի վրա:***
>
> ***Ահա այսպես մարդը երկրի և նրանում ապրող ամեն ինչի տեր լինելով՝ ինքն իրեն գաղտնի կերպով տեր կարգեց նաև երկրի ծառաների վրա: Բայց նրանք, այսուհանդերձ, ամբողջովին զարգացման մեջ էին, մինչդեռ տերը, այսինքն՝ մարդը, ինչևէ, շատ փոքր էր, քանի որ մանուկ էր, և անհրաժեշտ էր, որ այսպես հասնի լիարժեք հասունության: Եվ հարկավոր էր, որ նրա սնվելը և աճը տեղի ունենա ճոխության մեջ. մի վայր պատրաստվեց նրա համար ավելի լավ, քան այս երկիրը՝ գերազանց օդով, գեղեցկությամբ, լուսավորությամբ, ուտելիքով, բուսականությամբ, մրգերով, ջրերով և ամեն անհրաժեշտը կյանքի համար, և դրա անունը կոչվեց Դրախտ: Եվ Դրախտն այնքան գեղեցիկ ու լավն էր, որ Բանն Աստված միշտ քայլում էր նրա մեջ. նա շրջում և խոսում էր մարդու հետ՝ մտքում նախագծելով ապագան, որը պիտի անցներ, որ պիտի ապրեր և խոսեր նրա հետ և լիներ մարդկության հետ՝ արդարություն սովորեցնելով: Սակայն մարդը երեխա էր, դեռ չուներ կատարյալ դատողություն և դրա պատճառով հեշտությամբ խաբվեց փորձչի կողմից:***

1. Կարդա՛ **Սաղմոս 55.20-21**: Ո՞վ է մեղանչում, և ի՞նչ է մեղքը: Տողերը շարադրի՛ր քո ինքնուրույն բառերով:
2. **Սաղմոս 55.20-21** կիրառելով Ադամի և Եվայի համար նրանք ինչպե՞ս «դրժեցին իրենց ուխտը» Աստծո հետ /ուխտի մասին վերհիշելու համար տե՛ս 6-րդ դասի Աստվածաշնչի բաժինը կամ **Ծննդոց 2.15-17**/:
3. Ո՞րն էր Աստծո ծրագիրը Ադամի և Եվայի համար: Ինչո՞ւ նրանք «հեշտությամբ խաբվեցին», ինչպես ասում է Սբ Երանոսը:

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՇՆՈՐՀԱԼԻ ԱՂՈԹՔՆԵՐ

Մեր աղոթքներում, հատկապես երբ պատրաստվում ենք Սուրբ Հաղորդություն ստանալուն, մտաբերում ենք այն ամենը, ինչ Աստված տվել էր մեզ դրախտում, ու նաև թե ինչպես սխալ գործածեցինք նրա պարգևները: Ապա հիշում ենք, որ չնայած սրան Աստված տալիս է մեզ հավիտենական կյանք իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի գալուստով: Ահա Սբ Բարսեղ Կեսարացու աղոթքից մի հատված, որն ամփոփում է Աստծո կատարածը մեզ համար:

Դու կարգեցիր ամեն ինչ մեզ համար: Երբ ստեղծեցիր մարդուն երկրի հողից և պատվեցիր նրան քո սեփական պատկերով, Ո՛վ Աստված, դրեցիր նրան բերկրության դրախտում՝ խոստանալով նրան հավիտենական կյանք և մշտական օրհնության վայելում քո պատվիրանների պահպանումով: Բայց երբ մարդը չհնազանդվեց Քեզ՝ ճշմարիտ Աստծուդ, ով ստեղծեց Ադամին ու Եվային, նրանք խաբվեցին օձի խորամանկությունից՝ դատապարտվելով մահվան իրենց իսկ հանցանքով: Իսկ Դու Աստված, քո արդար դատաստանով դուրս հանեցիր դրախտից դեպի այս աշխարհ՝ վերադարձնելով նրան հողին, որից վերցվեց, բայց և ապահովեցիր մարդու վերածնվելու փրկությունը Քրիստոսի միջոցով: Դրա համար Դու քեզ հավիտյան չհեռացրեցիր քո արարածներից, որոնց ստեղծեցիր, Բարերար Աստված, ոչ էլ մոռացար քո ձեռքի գործերը:

Ի պատասխան Աստծո սիրո՝ մենք կարող ենք ասել Սբ Հովհան Ոսկեբերանի աղոթքը: Աղոթելիս մտածի՛ր այն բոլոր արարքներիդ մասին, որոնք վիրավորել են Աստծուն, և թե ինչպես ես ուզում փոխել մեղավոր ընթացքդ:

- Ամբողջացրո՛ւ Սուրբ Պատարագի հետևյալ աղոթքը՝ բաց թողնված կապակցություններն ու նախադասությունները լրացնելով ներքևի համապատասխան ցանկից և դրանց թիվը գրելով գծի վրա:

Գոհություն հայտնելով մեծարում և փառավորում եմ Քեզ, Տեր իմ Աստված, ... :

Ուրեմն, սրանք իբրև բարեխոսություն ունենալով աղաչում եմ, որ ինձ ..... որպեսզի

Քո բարեգթությունը հիշելով ես ևս Քո կյանքին բաժնեկից լինեմ. Դու, որ մեզ համար

չարչարվեցիր, մեռար և հարություն առար: Ո՛վ իմ Տեր և Աստված, Քո պատվական արյունով

կնքի՛ր իմ անձը, որպեսզի խորտակիչը չմոտենա ինձ: Ո՛վ Ամենակարող, ...:

Ո՛վ Տեր, պաշտպանի՛ր ինձ ամեն փորձություններից մեջ և իմ դեմ պատերազմողին հեռացրո՛ւ

ինձնից ամոթահար՝ ինչքան էլ իմ դեմ ելնի: Առաջնորդի՛ր .....: Մի՛շտ եղիր ինձ հետ,

Քո անսուտ խոստման համաձայն, թե .....: Ո՛վ մարդասեր, հաստատի՛ր աստվածային

և անքակտելի Քո խոստումը, որովհետև Դու ես ..... և Քեզ՝ Հորդ և ամենասուրբ

Հոգուդ հետ, վայելում է փառքը, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

1. Դու ես միայն անմեղ, Քո պատվական արյունով մաքրի՛ր ինձ իմ բոլոր մահացու գործերից:
2. Աստված ողորմության, գթության և մարդասիրության և պարգևիչն ամեն բարիքների,
3. Քո սրբության մեջ պահես ամեն օր և իմ ամբողջ կյանքի ընթացքին,
4. «ով որ ուտի իմ Մարմինը և ըմպի իմ Արյունը, նա իմ մեջ կբնակվի, և ես նրա մեջ»:
5. մտքիս և լեզվիս ընթացքը և մարմնիս բոլոր ճամփաները:
6. որ անարժանիս արժանացրեցիր այսօր հաղորդակից լինել աստվածային և սոսկալի Քո խորհրդին՝ անարատ Մարմնիդ և պատվական Արյանդ:

ՄԵՆՔ ԱՂՈԹՈՒՄ ԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ ՀԱՄԱՐ ՈՐՊԵՍ ՄԵՂԱՎՈՐՆԵՐ

Երբևէ ցանկացե՞լ ես, որ վատ բաներ պատահեն մեկ ուրիշին. նրան, որի մեղքերն իրոք մեծ են եղել, կամ նրան, ով վնաս է պատճառել մյուսներին:

Մենք բոլորս էլ փորձվում ենք այդպես վարվել, և երբեմն էլ նույնիսկ աղոթում ենք, որ վատ բան պատահի այդ անձի հետ, և նա մահանա: Սակայն Քրիստոսի 72 աշակերտներից Սբ Կարպոսը մի փորձառություն ունեցավ, ինչը ցույց տվեց, որ սա այն չէ, ինչ Հիսուս Քրիստոսն ակնկալում է մեզանից:

Կարպոսն ուղարկվեց Մակեդոնիա քարոզելու Ավետարանը: Նրան հաջողվեց հասնելու շատ մարդկանց, բայց կային երկու հոգի, որոնք մեծապես խոչընդոտում էին նրա քարոզությանը: Նրանցից մեկը կռապաշտ հեթանոս էր, որը բնավ չէր ցանկանում լսել Կարպոսի խոսքերը: Այս հեթանոսը խրախուսում էր, որ մարդիկ ծաղրեն Կարպոսին, և թելադրում էր չհետևել Կարպոսի քարոզած «նոր աստծուն»:

Կարպոսին խանգարող մյուս անձն ավելի վատ բաներ էր անում: Այս մարդը ժամանակին քրիստոնյա էր դարձել, բայց հեռացել էր հավատքից: Ամեն անգամ, երբ Սբ Կարպոսը խոսում էր մարդկանց խմբի հետ և պատմում Հիսուս Քրիստոսի մասին, նա փորձում էր ընդհատել նրա խոսքը և բանավիճել:

Սբ Կարպոս առաքյալ

Մի օր Կարպոսի համբերության բաժակը լցվեց. զայրացավ, և այլևս հոգնել էր այս երկու մարդկանց հարուցած դժվարությունների պայմաններում քարոզելուց: Նա ամեն կերպ ուզում էր ձերբազատվել նրանցից: Եվ այսպես սուրբն աղոթում էր, որ Աստված մահվան դատապարտի այս երկուսին: Այնուհետև տեղի ունեցավ այն, ինչն ընդմիշտ փոխեց Կարպոսի կյանքը: Նրան տեսիլքում հայտնվեց Տեր Հիսուս Քրիստոսը և կանգնած նրա առջև ասաց. «Ահավասիկ ես եմ, պատրաստ վերստին խաչվելու բոլոր մարդկանց փրկության համար»:

Կարպոսը հասկացավ, որ սա Տիրոջ պատգամն է, որ երբեք չպետք է աղոթենք որևէ մեկի, նույնիսկ խանգարող մարդկանց մահվան կամ կործանման համար: Այլ փոխարենը՝ մենք պետք է աղոթենք նրանց փրկության համար՝ հայցելով, որ Աստված փոխի նրանց կյանքը:

■ Ընթերցի՛ր Սբ Պետրոս առաքյալի ընդհանրական նամակի հատվածը և գրի՛ր, թե այն ինչպես է կապակցվում Սբ Կարպոսի և կամ քո իսկ փորձառության հետ:

Տերը չի ուշացնում իր խոստումի կատարումն այնպես, ինչպես ոմանք հասկանում են ուշացումը: Տերը պարզապես համբերատարություն է ցույց տալիս ձեր հանդեպ, որովհետև չի ուզում, որ որևէ մեկը կորստյան մատնվի, այլ ուզում է, որ բոլորն էլ առիթ ունենան ապաշխարելու:

Բ Պետրոս 3.9

ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Մտածի՛ր վեճերի, պայքարների, անհանգստությունների և դժբախտությունների մասին, որ կան մեր աշխարհում և մեր իսկ համայնքներում: Ինչպե՞ս են այս տխուր իրողությունները բացահայտում Աստծուց մեր շեղված լինելը՝ հրաժարվելով Աստծուն սիրելուց, վստահելուց և հնազանդվելուց:

ԵՐԳԵՆՔ ՄԵՐ ՑԱՎԸ

Մեծ Պահքի ընթացքում և պահոց օրերին Գիշերային ժամերգության ընթացքում որպես Օրհնություն մենք երգում ենք Սբ Մեսրոպ Մաշտոցի հորինած ապաշխարության շարականները, որոնցով խնդրում ենք Աստծո ներողամտությունը մեր մեղքերի թողության համար:

Դասարանով միասի՛ն երգեք շարականի հետևյալ տները.

Ամեն ժամ իմ աղաչանքն այս է՝ Տե՛ր, մաքրի՛ր ինձ իմ մեղքերից: Իմ հանցանքներից զարհուրում է սիրտս, աղաչում եմ Քեզ, ների՛ր ինձ, Տե՛ր: Արտասուքներս մի՛ լռեցրու, Տե՛ր, քանզի պանդուխտ եմ ես հանցավոր երկրի:

Մեղքերս հույժ բազում են, ծանր են, քան ծովի ավազը, քանզի Քեզ միայն մեղանչեցի, ողորմի՛ր ինձ Ասպված: Բացի՛ր, Տե՛ր, ողորմության դուռը, որ ողբալով աղոթում եմ Քեզ, քանզի Քեզ միայն մեղանչեցի, ողորմի՛ր ինձ Ասպված: Հեղի՛ր իմ մեջ Քո գթությունը, ո՛վ բազումողորմ և մարդասեր, քանզի Քեզ միայն մեղանչեցի, ողորմի՛ր ինձ Ասպված:



ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասն օգնում է աշակերտներին հասկանալ, որ «մեղքը» այդքան էլ շատ չի վերաբերում կարգը խախտելուն, այլ մանավանդ Աստծո հետ մեր հավատից շեղվելուն և մարդկանց հետ մեր կապը խզելուն: Աշակերտներն իմացան, որ հունարենում մեղքը կոչվում է «ամարտիա», ինչը բառացի թարգմանությամբ կոչվում է «վրիպել նշանակետից»: Դասում ընդգրկված աղոթքներն ու շարականը կօգնեն աշակերտին հասկանալ, որ մենք հարատև զգում ենք մեր մեղավորությունն Աստծո առաջ, բայց միաժամանակ ակնակալում ենք Տիրոջ ողորմությունը և կարեկցանքը, նույնիսկ երբ գիտենք, որ արժանի չենք նրա սիրուն:

Ընտանիքով զրուցե՛ք, թե ինչ է նշանակում «վրիպել նշանակետից» հասկացությունը մարդկային փոխհարաբերություններում և Աստծո հետ մեր հարաբերության մեջ: Խոսե՛ք նաև, թե ինչ պետք է անենք նրանց համար, ովքեր մեղք են գործում մեր հանդեպ. չաղոթել նրանց դժբախտության կամ վերացման, այլ նրանց փրկության և ավելի լավ կենսակերպի փոխվելու համար:

12. ԱՍՏՎԱԾ ԿԱՄԵՆՈՒՄ Է ՓՐԿԵԼ

«Արդ, այսպես է ասում Տեր Աստվածը, որ արարեց քեզ, Հակո՛բ,...: Մի՛ վախեցիր, որովհետև փրկեցի քեզ և կոչեցի քեզ քո անունով, թե իմն ես»:

Եսայի 43.1

Հայտնագործենք

ՓՐԿԻ՛Ր ԻՆՁ



- Գրի՛ր երեք բառեր կամ կապակցություններ, որոնք կբացատրեն, թե ըստ քեզ ինչ է նշանակում փրկել բառը.
- Գրի՛ր այն պահերի մասին, երբ փրկել կամ ազատել ես մեկին, կամ մեկը ազատել է քեզ վտանգից կամ վատ դեպքից: Ապա գծանկարի՛ր փոքրաառությունդ:

Կարդա՛ Աստվածաշնչի հատվածը և սովորի՛ր ավելին Աստծո՝ մեզ փրկելու հավիտենական ցանկության մասին:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ԱՍՏՎԱԾ ՓՐԿԻՉ Է

Եսայի 43.1-3, 49.8-15, 26, Հովհաննես 6.35-40

Նիկիական հանգանակը խոսում է Աստծո՝ մեզ փրկելու ցանկության մասին. *«Ով մեզ՝ մարդկանցս, և մեր փրկության համար երկնքից իջնելով, մարմնացավ, մարդացավ...»:* Հետևյալ հատվածները ցույց են տալիս, որ Աստված կամենում է փրկել մեզ, և այդ ցանկության մասին խոսվում է Հին Կտակարանում և իր գագաթնակետին հասնում Նոր Կտակարանում:

Արդ, այսպես է ասում Տեր Աստվածը, որ արարեց քեզ, Հակո՛բ, և ստեղծեց քեզ, Իսրայե՛լ. «Մի՛ վախեցիր, որովհետև փրկեցի քեզ և կոչեցի քեզ քո անունով, թե իմն ես: Եթե ջրերի միջով անցնես՝ քեզ հետ կլինեմ, և գետերը քեզ չեն խեղդի. եթե կրակի միջով անցնես՝ չես այրվի, և նրա բոցը քեզ չի կիզի. քանզի ես եմ քո Տեր Աստվածը՝ Իսրայելի սուրբը, որ պիտի փրկեմ քեզ:

Եսայի 43.1-3ա

Այսպես է ասում Տերն Իսրայելին. «Պատեհ ժամանակ քեզ լսեցի և փրկության օրը օգնեցի. ես քեզ ստեղծեցի և ուխտի նպատակով հեթանոսներին տվեցի քեզ՝ երկիրը վերականգնելու և ավերակ ժառանգությունները ժառանգներին վերադարձնելու համար, շղթայվածներին ասելու, թե՝ ելե՛ք, իսկ խավարի մեջ գտնվողներին, թե՝ հայտնվեցե՛ք: Նրանք պիտի արածեն բոլոր ճանապարհներին, նրանց արոտը պիտի լինի բոլոր շավիղների վրա: Նրանք ո՛չ քաղց են զգալու, ո՛չ ծարավելու, ո՛չ էլ արևից խորշակահար են լինելու, և նա, որ ողորմելու է, պիտի մխիթարի նրանց, աղբյուրների ակունքների մոտ պիտի տանի նրանց: Իմ բոլոր լեռները նրանց համար ճանապարհ պիտի դարձնեմ և բոլոր շավիղներս արոտների վերածեմ: Ահա ոմանք պիտի գան հեռաստանից, ոմանք՝ հյուսիսից և ծովից, և ոմանք՝ Պարսից երկրից»: Ուրախացի՛ր, երկի՛նք, և ցնծա՛, երկի՛ր, թող լեռները ցնծություն կանչեն, և բլուրները՝ արդարություն, քանզի Աստված ողորմեց իր ժողովրդին, մխիթարեց իր ժողովրդի տառապյալներին: Բայց Սիոնն ասաց. «Տերն ինձ թողեց, Աստված ինձ մոռացավ»: «Մի՞թե կինը կմոռանա իր մանկանը կամ չի գթա իր որովայնի ծնունդներին, և եթե կինը մոռանալու էլ լինի այդ, ես, սակայն, քեզ չեմ մոռանա», - ասում է Տերը:

Եվ ամեն մարմին պիտի իմանա, թե ես եմ Տերը, որ փրկեցի ու օգնեցի քեզ և զորավոր դարձրի Հակոբին:

Եսայի 49.8-15, 26բ

Հիսուսը նրանց ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, Մովսեսը չէ, որ ձեզ երկնքից հաց տվեց, այլ իմ Հայրն է, որ տալիս է ձեզ ճշմարիտ հացը երկնքից. որովհետև Աստծուց է այն հացը, որ իջնում է երկնքից և կյանք է տալիս աշխարհին»: Նրանց ասացին. «Տե՛ր, ամեն ժամ տո՛ւր մեզ այդ հացը»: Հիսուսը նրանց ասաց. «Ես եմ կենաց հացը. ով դեպի ինձ գա, քաղց չի զգա, և ով ինձ հավատա, երբեք չի ծարավի: Բայց ես ձեզ ասել եմ, թե ինձ տեսաք և չեք հավատում: Բոլոր նրանք, ում Հայրն ինձ տալիս է, կգան ինձ մոտ, և ով որ ինձ մոտ կգա, դուրս չեմ անի. որովհետև ես երկնքից իջա ոչ թե իմ կամքը կատարելու այլ՝ կամքը նրա, ով ինձ ուղարկեց:

Այս է կամքը իմ Հոր, որ ինձ ուղարկեց. բոլոր նրանք, ում Հայրն ինձ տվել է, նրանցից ոչ մեկին չկորցնեմ, այլ վերջին օրը հարություն առնել տամ նրանց: Այս է իմ Հոր կամքը. ամեն ոք, ով տեսնի Որդուն և հավատա նրան, ունենա հավիտենական կյանք. և ես նրան վերջին օրը հարություն առնել տամ:

Հովհաննես 6.35-40

ԽՈՐՀԵՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

1. Կրկի՛ն կարդա **Եսայի 43.1-3** հատվածը: Աստծո տված խոստումներից մեկն այն է, որ իր ժողովուրդը չպիտի այրվի: Ընթերցի՛ր **Եսայի 49**-րդ գլուխը և գրի՛ր ներքևում հիշյալ խոստումին համանման խոսքերը:

.....

.....

2. Վերստի՛ն կարդա **Եսայի 43.1-3** և **Հովհաննես 6.35-40** հատվածները՝ ուշադրություն դարձնելով Հիսուսի խոսքերին վերջին նախադասության մեջ: Ի՞նչ ընդհանուր թեմա ես տեսնում սրանց միջև: Գրի՛ր մի նախադասություն, որն արտահայտի այդ պատգամը:

ԱՍՏՑՈ ՊԱՏԿԵՐ

■ Սաղմոսները ներկայացնում են մեզ Աստծո շատ պատկերներ: Կարդա՛ ներքևի սաղմոսները: Քո խմբի հետ այդ տողերից գտի՛ր խոսքեր, որոնք ներկայացնում են Աստծո պատկեր: Ընտրի՛ր քեզ համոզիչ թվացող լավագույնը: Կամ ուսումնասիրի՛ր **Եսայի 49**-րդ գլխի հատվածը նախորդ էջից և տե՛ս, եթե դու կընտրեիր այնտեղ ներկայացված Աստծո մեկ այլ պատկեր, ով փրկում և խնամում է քեզ: Գրի՛ր, թե ինչու ընտրեցիր հենց այդ պատկերը և այն ինչ առնչություն ունի քեզ հետ անձնապես:

Տերը փրկում է իր ծառաներին, և բոլոր նրանք, որ հույս են դնում Նրա վրա, չպիտի զղջան:

Սաղմոս 33.23

Արդարների փրկությունը Տիրոջից է, նեղության ժամանակ նա է նրանց օգնականը: Տերը կօգնի ու կփրկի նրանց, կազատի մեղավորներից ու կպահպանի նրանց, քանզի նրանք իրենց հույսը դրել են Նրա վրա:

Սաղմոս 36.39-40

Միայն Աստծո՛ւն հնազանդ եղիր, հոգի՛ իմ, քանզի նրանից է փրկությունս: Նա է Աստվածն իմ ու փրկիչն իմ, ապավենն իմ, որ էլ չսասանվեմ:

Սաղմոս 61.2-3

Քանի որ հույսն ինձ վրա դրեց, ես կփրկեմ նրան, նրան հովանի կլինեմ, քանզի անունս ճանաչեց: Ինձ ձայն կտա՝ ու կլսեմ նրան, և նրա հետ կլինեմ նեղության մեջ. կփրկեմ ու կփառավորեմ նրան: Բազում օրերով նրան կլիացնեմ ու ցույց կտամ նրան իմ փրկությունը:

Սաղմոս 90.14-16

.....

.....

.....

.....

.....

.....

Բառարան

ՓՐԿԵԼ, ՓՐԿԻՉ՝ երբ այս խոսքերը կիրառվում են Հիսուս Քրիստոսի համար, նշանակում են, որ նա է այն մեկը, ով փրկելու և ազատելու է մեզ վտանգավոր վայրից:

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՄԵՆՔ ՊԵՏՔ ՈՒՆԵՆՔ ԱՍՏՑՈ, ՈՐ ՓՐԿԻ ՄԵԶ

Պատմող. Թեոֆիլոս անունով մի վանական մի տարօրինակ փորձառություն ունեցավ, որը ցույց տվեց նրան, թե որքան շատ է Աստված կամենում փրկել մեզ: Եկե՛ք ծանոթանանք Թեոֆիլոսի պատմությանը հենց հիմա:

Թեոֆիլոս. Ես չեմ կարող տանել այս երևույթը: Ամեն ոք խոնարհվում է մեր եպիսկոպոսի առջև: Ի՞նչ հետաքրքիր բան կա, պարզապես որովհետև նա այդ աստիճա՞ննն ունի:

Մյուս վանական. Զգո՛ւյշ եղիր: Դու նախանձում ես, և դա դառնացնում է քեզ: Նախանձը կործանում է մարդուն:

Թեոֆիլոս. Նախանձե՞լ: Ի՞նչ նկատի ունես: Ես քեզ ցույց կտամ: Ես ցույց կտամ բոլորին: Ինձ մենակ թող և թող մտածեմ: (Մյուս վանականը վեր ու վար է անում ուսերը և հեռանում: Թեոֆիլոսը նստում է, վերցնում թուղթն ու գրիչը և սկսում զայրացած գրել): Ես մերժում եմ ամեն ինչ՝ Քրիստոսին ու նրա Մորը, և այն ամենը, ինչ կապված է նրանց հետ: Ես կգրեմ, որ մերժում եմ այն ամենը, ինչ Հիսուս Քրիստոսն ուսուցանում է: Նա հորդորում է լինել խոնարհ և հնազանդվել քո վերադասներին և ներել բոլորին: Լավ, սրանից ինձ ի՞նչ օգուտ: Մերժում եմ այդ ամենը:

Պատմող. Թեոֆիլոսը թուղթը թողեց սեղանի վրա, բայց մի քանի օրից զայրույթն անցավ: Դժկամությամբ նա ժամերգության էր ելնում մյուս վանականների հետ և կանգնում աղոթքի առավոտյան ու երեկոյան:

Թեոֆիլոս. Ի՜նչ հիմար եմ եղել: Մերժել Տիրոջը, ով ինձ կյանք է տվել, և նրա թանկագին Մորը, ով ծնել է նրան, որպեսզի մահանա և վերստին հարություն առնի մեզ փրկելու համար: Լավ կլինի աղոթեմ, խնդրեմ Քրիստոսի և նրա Մոր ներողամտությունը, նույնիսկ եթե շատ ուշ է կրկին լինել նրանց զավակ:

(Նա ծունկի եկավ Քրիստոսի և Աստվածամոր սրբանկարի առջև):

Մյուս վանական. (Ներս է մտնում Թեոֆիլոսի գրած թուղթը ձեռքին): Եղբա՛յր, այս թուղթը վայր էր ընկել քո սեղանից, և ես գտա այն քո խցի դռան առջևից: Բայց դու շատ վատ բաներ ես գրել այստեղ: Կարծում եմ՝ էլ ոչ ոք չպետք է տեսնի սա:

Թեոֆիլոս. (Խլում է և ճմրթում թուղթը) Հիսո՛ւսը փրկեց ինձ: Նա թույլ չտվեց, որ իմ հիմար, նախանձոտ խոսքերը կործանեն ինձ: Ես կաշխատեմ այլևս չնախանձել ոչ ոքի: Եվ կհիշեմ այն բոլոր լավ բաները, որ Տերն արել է ինձ համար: Ինձ կօգնե՞ս, եղբա՛յրս, և ինձ հետ կաղոթե՞ս ամեն օր:

Մյուս վանական. Մեծագույն սիրով, եղբա՛յրս: Լա՛վ է, որ վերադարձար:

- Մտածի՛ր Թեոֆիլոս վանականի փորձառության մասին, ապա կարդա՛ Սբ Ներսես Շնորհալու յուրաքանչյուր հավատացյալի համար նախատեսված «Հավատով խոստովանիմ» աղոթքի 17-րդ տունը: Աղոթքը խոսում է հավատացյալի ցանկության մասին՝ դառնալու չար ճանապարհից և ապաշխարելու:

  Թեոֆիլոս վանականի փորձառությունը և այս աղոթքն աչքի են ընկնում մեղավորի կյանքում փոփոխություն մտցնելու օրինակով: Տետրակիդ մեջ գրի՛ր մի փորձառության մասին, երբ որոշել ես թողնել սխալ արարքներդ: Որտեղի՞ց եկավ քեզ օգնությունը: Ըստ ցանկության, կարող ես այն ներկայացնել քո խմբին:

Մոլորյալներին դարձի բերող Քրիստոս, ե՛ր դարձրու ինձ իմ չար սովորություններից դեպի բարի սովորություն, և իմ հոգում բևեռի՛ր մահվան սոսկալի օրը և գեհենի երկյուղը և արքայության սերը, որպեսզի զոջամ մեղքերս և գործեմ արդարություն. և ողորմի՛ր քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՄԵՐ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ահա Սբ Հովհան Ոսկեբերանի աղոթքից մի հատված, որը Սուրբ Պատարագի ընթացքում արտասանում է պատարագիչ քահանան: Տե՛ս, թե այն ինչ է հայտնում քեզ Հիսուս Քրիստոսի և մեր փրկության մասին: Ընդգծի՛ր բառերը կամ կապակցությունները, որոնք Հիսուս Քրիստոսին ներկայացնում են որպես մեր Փրկիչ, և թե ինչ է նա արել մեր փրկության համար:

Ով որ փարված է մարմնական հաճույքներով ու ցանկությամբ, արժանի չէ մուտենալու Քո սեղանին կամ սպասավորելու արքունական Քո փառքին, որովհետև Քեզ ծառայելը մեծ և ահագոռ է նույնիսկ Քո երկնավոր զորությունների համար:

Սակայն Դու, ո՜վ Հոր անպարագրելի Խոսք, Քո անսահման բարությամբ, մարդացար և որպես քահանայապետ ներկայացար մեզ: Եվ, որպես բոլորիս Տեր, այս ծիսական և անարյուն զոհի քահանայությունն ավանդեցիր մեզ:

...Քեզ եմ խոնարհեցնում իմ գլուխը և խնդրում, որ Քո երեսը չդարձնես ինձնից և չմերժես ինձ իբրև Քո ծառաներից մեկը, այլ արժանի անես ինձ, որքան էլ մեղավոր ու անարժան լինեմ, Քեզ մատուցելու այս ընծաները. որովհետև Դու ես, որ մատուցում ես և մատուցվում, ընդունում ես և տալիս, ո՜վ Քրիստոս մեր Աստված: Եվ Քեզ՝ անսկիզբ Քո Հոր և ամենասուրբ և բարերար Հոգուդ հետ փառք ենք մատուցում այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Որպես ուղղափառ քրիստոնյաներ՝ մենք հավատում ենք, որ եթե Սուրբ Հաղորդությանը մոտենում ենք հավատով և անկեղծ մտքով, շատ շնորհներ ենք ստանում: Դա օգնում է մեզ պատրաստ լինել Աստծո Արքայությանը: Սուրբ Պատարագից քաղված գոհաբանական հետևյալ աղոթքում մենք գտնում ենք այն օրհնությունները, որոնք Աստված տալիս է մեզ Սուրբ Հաղորդության միջոցով: Նաև այդ պարգևների միջոցով է Տերը պահպանում մեզ և առաջնորդում Փրկության:

Գոհություն ենք հայտնում Քեզ, ո՜վ Քրիստոս մեր Աստված, որ մեզ սուրբ կյանքի բաժնեկից դարձրիր այսպիսի բարի ճաշակում շնորհելով. մեզ պահի՛ր սուրբ և անարատ Քո աստվածային խնամքի ներքո: Հովվի՛ր մեզ Քո սուրբ և բարեսեր կամքի անդաստանում, որպեսզի ամուր մնանք բանսարկուի ամեն հարձակումների դեմ և արժանի լինենք լսելու Քո ձայնը միայն և հետևելու Քեզ՝ միակ քաջ և ճշմարիտ Հովվիդ, և Քեզնից ընդունելու Երկնքի արքայության մեջ մեզ համար պատրաստված տեղը: Ո՜վ մեր Աստված և մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոս, որ օրհնյալ ես Հոր և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

■ Խորհրդածի՛ր աղոթքում հիշատակված պարգևների և շնորհների շուրջ: Ինչպե՞ս ես ապրել դրանք քո կյանքում: Ընտրի՛ր դրանցից երկուսը և գրի՛ր կամ նկարի՛ր քո մտածումները: Գրի՛ր օրհնության կապակցությունը յուրաքանչյուրի աղյուսակի ներքևում:

ՄԵՆՔ ԵՐԳՈՎ ՀԱՅՏՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԳՈՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՏՑՈՒՆ՝ ՄԵԶ ՓՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գոհություն ենք հայտնում Քեզ, Տե՛ր, որ կերակրեցիր մեզ Քո անմահական Սեղանից՝ բաշխելով Քո Մարմինը և Արյունը աշխարհի փրկության և մեր կյանքի համար:



ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Գրի՛ր որոշ եղանակներ, որոնցով կկարողանաս ապավինել Աստծուն ամենօրյա կյանքիդ ընթացքում: Որո՞նք են այն կոնկրետ բաները, որ կարող ես անել՝ ցույց տալով քո վստահությունը Հիսուս Քրիստոսի փրկարար զորության նկատմամբ:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասը կենտրոնացած է Աստծո՝ մեզ փրկելու կամքի և այն փաստի վրա, որ այդ ցանկությունն արտահայտվել է Հին Կտակարանում (ի մասնավորի Եսայի մարգարության և Սաղմոսների գրքերում) և իր լրումին հասել Հիսուս Քրիստոսի փրկագործական առաքելությամբ Նոր Կտակարանում:

Աշակերտները նաև առիթ են ունեցել խորհրդածելու այն եղանակների շուրջ, որոնցով Աստված օգնության է հասնում մեզ դժվարին պահերին Սուրբ Պատարագի որոշ աղոթքների և Սուրբ Հաղորդություն ընդունելու միջոցով:

Ընտանիքով մտածե՛ք այն ուղիների մասին, որոնցով Աստված փրկել է ձեզ կամ մյուսներին վտանգից կամ դժվարին իրավիճակներից: Միասի՛ն արտասանե՛ք հետևյալ Սաղմոսի տողերը.

Հավատում եմ, որ կտեսնեմ Տիրոջ բարությունը ողջերի երկրում:
Սպասի՛ր Տիրոջն ու քաջալերվի՛ր, սիրտդ թող ամրապնդվի, Տիրո՛ջն սպասիր:

(Սաղմոս 26.13-14)

13. ԾՆՎԵՑ ՀԻՍՈՒՍԸ՝ ԷՄՄԱՆՈՒԵԼ

«Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ՝ լի շնորհով և ճշմարտությամբ...»:

Հովհաննես 1.14

Հայտնագործենք

➢ **Ի՞նչն է սխալ այս նկարներում:**

.....

.....

➢ **Ի՞նչ անհրաժեշտ կլիներ, որպեսզի վերևի նկարները նմանվեին այս նկարներին:**

.....

.....

Կարդա՛ Աստվածաշնչի դասը և պարզի՛ր, թե ինչպես է Աստվածորդու Մարդեղությունը կապակցվում վերևի նկարներին և հարցումներին:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ԱՍՏՎԱԾ ՄԵԶ ՀԵՏ Է

Ղուկաս 1.26-38 և Մատթեոս 1.18-25

Ընթերցի՛ր հետևյալ սուրբգրային հատվածները, որոնց վրա է հիմնվում Նիկիական հանգանակի այս սահմանումը. *«Ով մեզ՝ մարդկանցս, և մեր փրկության համար երկնքից իջնելով, մարմնացավ, մարդացավ, կատարելապես ծնվեց Սուրբ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգու զորությամբ, որի միջոցով առավ մարմին, հոգի և միտք և այն ամենը, ինչ մարդկային բնություն ունի, ճշմարտապես և ոչ թե առերևույթ»:*

Եղիսաբեթի հղիության վեցերորդ ամսին Աստված Գաբրիել հրեշտակին ուղարկեց Գալիլեայի Նազարեթ քաղաքը՝ մի կույսի մոտ, որ նշանված էր Դավթի սերնդից Հովսեփ անունով մի մարդու հետ: Կույսի անունը Մարիամ էր: Հրեշտակը, գալով Մարիամի մոտ, ասաց.

-Ուրախացի՛ր, շնորհալի՛ կույս, որովհետև Աստված քեզ հետ է:

Այս խոսքի վրա Մարիամը խռովվեց. նա մտածում էր, թե ի՛նչ է նշանակում այս ողջույնը: Սակայն հրեշտակն ասաց նրան.

-Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետև դու արժանացար Աստծո շնորհին: Ահա դու կհղիանաս և կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի և Բարձրյալի Որդի կկոչվի: Տեր Աստված նրան կտա իր հոր՝ Դավթի գահը, և նա հավիտյան կթագավորի Հակոբի սերունդների վրա: Նրա թագավորությունը վախճան չի ունենա:

Մարիամն ասաց հրեշտակին.

-Ինչպե՞ս կարող է պատահել դա, քանի որ ես ամուսնացած չեմ:

Հրեշտակը պատասխանեց.

-Սուրբ Հոգին վրադ կգա, և Բարձրյալի զորությունը կհանգչի քեզ վրա, որովհետև քեզնից ծնվելիք զավակը սուրբ է և Աստծո Որդի պիտի կոչվի: Ահա քո ազգական եղիսաբեթն էլ, չնայած որ ծեր և ամուլ էր, այս վեցերորդ ամիսն է, ինչ հղի է: Իմացի՛ր, որ Աստծո համար անկարելի բան չկա:

Մարիամն ասաց.

-Ես Աստծո աղախինն եմ, թող քո ասածը լինի:

Ապա հրեշտակը գնաց Մարիամի մոտից:

Ղուկաս 1.26-38

Հիսուս Քրիստոսի ծնունդն այսպես եղավ. նրա մայրը՝ Մարիամը, նշանված էր Հովսեփի հետ, բայց նախքան ամուսնությունը Մարիամը հղի մնաց Սուրբ Հոգուց:

Հովսեփը՝ նրա նշանածը, որ արդար մարդ էր, չուզեց հանրության առջև խայտառակել նրան, այլ մտածեց լռելյայն հետ վերցնել նշանը: Մինչ նա մտածում էր այս մասին, ահա Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց նրան և ասաց.

-Հովսե՛փ, Դավթի՛ որդի, մի՛ վախեցիր ամուսնանալու նշանածիդ՝ Մարիամի հետ, որովհետև նրա մեջ հղացվածը Սուրբ Հոգուց է: Նա մի որդի պիտի ծնի, և նրա անունը Հիսուս պիտի դնես, որովհետև նա իր ժողովրդին պիտի փրկի իր մեղքերից:

Այս բոլորը պատահեց, որպեսզի կատարվի այն, ինչ Տերն ասել էր Եսայի մարգարեի միջոցով. «Ահա կույսը պիտի հղիանա և մի որդի պիտի ծնի, և նրան պիտի կոչեն Էմմանուել», որ նշանակում է «Աստված մեզ հետ»:

Երբ Հովսեփն արթնացավ, կատարեց այն, ինչ որ Տիրոջ հրեշտակը հրամայել էր իրեն, և ամուսնացավ իր նշանածի՝ Մարիամի հետ, բայց չհարաբերեց նրա հետ , մինչև որ Մարիամը ծնեց իր անդրանիկ որդուն, որի անունը Հիսուս դրեց:

Մատթեոս 1.18-25

ԽՈՐՀԵՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

1. Ի՞նչ բառերի ես հանդիպում առաջին պարբերության մեջ, որը նշում է, թե հրեշտակի հայտնվելը և ողջույնը Մարիամին արտասովոր էր: Բացատրի՛ր:
2. Մարիամին տված հրեշտակի ուղերձն ակնհայտորեն անհասկանալի է մարդկային մտքի ու փորձառության համար: Ի՞նչ ես կարծում Մարիամի տված հարցումի մասին: Ինչպիսի՞ հակազդեցություն կունենար այդպիսի մի հրավերն այսօր:
3. Քո կարծիքով՝ որքա՞ն համոզիչ պետք է լիներ հրեշտակի բացատրությունը որևէ մի անձի, այն ժամանակ և այսօր, թե ինչպես Մարիամը կույս լինելով որդի պիտի ծներ: Մարիամի պատասխանն ի՞նչ է պատմում մեզ նրա բնավորության և Աստծո հետ նրա հարաբերության մասին:
4. Ի՞նչ ես կարծում Հովսեփի՝ հրեշտակին տված պատասխանի մասին: Այն ի՞նչ է հայտնում Աստծո և իր նշանածի՝ Մարիամի հետ հարաբերության մասին:

Բառարան

ՄԱՐԴԵՂԱՑՈՒՄ՝ Հայր Աստծո հավիտենական Որդին մարմնանում է՝ ծնվելով Սուրբ Կույս Մարիամից:

ԱՇԽԱՏԵՆՔ ՀԱՄԱԲԱՐԲԱՌՈՎ

- Համաբարբառի օգնությամբ գտի՛ր մարգարեական այն հատվածը, որում ակնարկվում է Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին. *«Ահա կույսը պիտի հղիանա և մի որդի պիտի ծնի, և նրան պիտի կոչեն Էմմանուել, որ նշանակում է՝ Ապրված մեզ հետ»:*

  Այս մարգարեությունը կարդացվում է Սուրբ Ծննդյան Ճրագալույցի ընթացքում: Չմոռանաս գրել մարգարեի անունը, գլուխը և տողի համարները:

  .....

- Ի՞նչ կարևոր իմաստ ունի Էմմանուել անունը, որը նշանակում է՝ Աստված մեզ հետ: Ինչպե՞ս կհամեմատես մարդեղացման իմաստը Էմմանուելի հետ: Գրի՛ր մտածումներդ ներքևի տողերին:

.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ի՞ՆՉ Է ՄԱՐԴԵՂԱՑՈՒՄԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՄԵԶ ՀԱՄԱՐ

Եկեղեցին Մարդեղացումը համարում է սկիզբն Աստծո փրկագործական ծրագրի՝ ի նպաստ մեղքի տակ ընկած մարդկության: Այս հավատքը Եկեղեցին արտահայտել է իր պաշտամունքի և Եկեղեցու հայրերի ուսուցումների մեջ: Ահա Սուրբ Պատարագի աղոթքներից մեկը (Սբ Հովհան Ոսկեբերան), որը քահանան մատուցում է «Սուրբ, սուրբ»-ից առաջ:

Արդար է ստուգապես և իրավացի՝ փութաջան ջերմեռանդությամբ երկրպագելով փառավորել Քեզ, ո՜վ ամենակալ Հայր, որովհետև Քո անզննելի և արարչակից Խոսքիդ միջոցով մեղքից առաջացած անեծքը վերացրիր: Նա Եկեղեցին ընդունեց որպես իր ժողովուրդ՝ սեփականացնելով իրեն հավատացողներին. կուսական ծննդյան խորհրդով զննելի մարդկային բնությունն առավ և հաճո եղավ մեր մեջ բնակվելու և որպես ճարտարապետ աստվածային նոր կառույցի, երկիրը երկնքի վերածեց: Նա, որի առջև հրեշտակների բանակները չեն համարձակվում կանգնել՝ վախենալով իր աստվածության փայլակնացայտ և անմատչելի լույսից, մեր փրկության համար մարդացավ և մեզ շնորհեց պատիվը երկնայինների հետ հոգեղեն պարեր պարելու: Ե՛վ սերովբեների և՛ քերովբեների հետ միաձայն սրբասացությամբ այս երգը հորինելու և համարձակորեն գոչելով աղաղակելու նրանց հետ և ասելու. սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ ես Զորությունների՛ Տեր, լի են երկինքն ու երկիրը Քո փառքով: Օրհնությո՜ւն բարձունքներում: Օրհնյա՜լ ես, որ եկար և պիտի գաս Տիրոջ անունով: Ովսանա՜ բարձունքներում:

Սբ Աթանասն իր հեղինակած Մարդեղության մասին գրվածքում արտահայտում է իր խոհերը՝ նշելով անհրաժեշտությունը մարդկության փրկության և ըստ այդմ՝ Մարդեղացման համար:

7 Քանի որ նա միայն, լինելով Հոր Խոսքը և բոլորից բարձր, շաղկապված էր թե՛ ամեն ինչ վերստեղծելու կարողությամբ և թե՛ արժանի հանուն բոլորի չարչարվելու և թե՛ լինելու բոլորի դեսպանը Հոր հետ:

8 Այս նպատակով միահյուսված, անշոշափելի, անապական և աննյութական Բանն Աստված մտավ մեր աշխարհ: Որոշ առումով, անշուշտ, նա մինչ այդ էլ հեռու չէր դրանից, քանի որ արարչագործության ոչ մի մաս երբևէ չի եղել առանց նրա, ով չնայած հարատև միասնության մեջ ապրում էր Հոր հետ, միաժամանակ լցրեց գոյություն ունեցող ամեն ինչը: Բայց այժմ նա մուտք գործեց աշխարհ մի նոր եղանակով, իջնելով մեր մակարդակին իր սիրով և ինքնահայտնումով... Նա վերցրեց մեր մարմինը և ոչ միայն այսքանը, այլ նա մարմնացավ հենց անարատ, անբիծ կույսից՝ առանց մարդկային հոր միջամտության. անապական մարմին՝ զերծ մարդուց բեղմնավորվելուց: Նա՝ Ամենակալ Տերը, ամեն ինչի ստեղծիչը, ինքն իր համար պատրաստեց այս մարմինը կույսի մեջ որպես տաճար իր համար, և վերցրեց այն ինչպես իր սեփականը՝ որպես միջոց ինքն իրեն իմանալի դարձնելու և նրանում ապրելու:

■ Համեմատի՛ր Սուրբ Պատարագից քաղված աղոթքը Սբ Աթանասի գրվածքի հետ՝ փնտրելով զուգահեռ գաղափարներ:

Սբ Աթանաս	Պատարագի աղոթք
Աղոթքի ո՞ր նախադասությունն է հաղորդում նույն միտքը, ինչ 7-րդ պարբերության մեջ:	
Գտի՛ր Պատարագի աղոթքի այն նախադասությունը, որն ամփոփում է Սբ Աթանասի արտահայտած գաղափարները:	

ԵՐՐՈՐԴ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՓԵՍՈՍՈՒՄ

5-րդ դարում Եկեղեցին բախվեց հերետիկոսական և սխալ ուսմունքների: Նեստորը՝ Կոստանդնուպոլսի Պատրիարքը, մերժեց պատվել Մարիամին՝ Հիսուս Քրիստոսի մորը, Աստվածամայր տիտղոսով: Նա պնդում էր, որ նրանից ծնվածը սոսկ մարդ էր՝ Հիսուսը, որի վրա հետագայում իջավ և բնակվեց Հայր Աստծո հավիտենական Խոսքը:

431թ. Եփեսոսում տեղի ունեցած տիեզերական ժողովի ընթացքում Սբ Կյուրեղը՝ Ալեքսանդրիայի Պատրիարքը, վճռականորեն մերժեց Նեստորի ուսմունքը: Համաեկեղեցական ժողովը, որը նախագահում էր Սբ Կյուրեղը, պաշտպանեց Մարիամի իրավացի կոչումը որպես Աստվածամայր, որովհետև նրանից ծնվածը ոչ այլ ոք է, քան Հայր Աստծո աստվածային Խոսքը:

Եկեղեցին շարունակում է մերժել սխալ ուսուցումները և հաղորդությունից զրկում է այն մարդկանց, ովքեր չեն ընդունում, թե Հիսուս Քրիստոսը միաժամանակ մարդ է և Աստծո Որդի՝ ծնված Մարիամից:

Անհարսնացած Աստվածածին, անսկիզբ Խոսքը հղացար և անիմանալի Աստծուն ծնեցիր, անպարագրելիին քո գրկում պահեցիր, նրան անդադար բարեխոսի՛ր մեր փրկության համար:

Ժամագիրք

ՄԱՐԴԵՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեր Սուրբ Եկեղեցու կողմից տոնվող Մարդեղության խորհրդի մեջ հիշատակվում է ոչ միայն Հիսուսի ծնունդը, այլև Աստծո հայտնությունը Սուրբ Ծննդյանն առնչվող իրադարձությունների միջոցով:

Աստվածհայտնության տոնին հիշատակվում է նաև Հիսուս Քրիստոսի մկրտությունը, կատարվում է Ջրօրհնեք՝ հաստատելով Եկեղեցու հավատքը, թե իր մկրտությամբ Քրիստոսն իրեն միացրեց մարդկությանն ամբողջ արարչության հետ:

Ահա մի հատված Սբ Բարսեղ Կեսարացու աղոթքից, որն ընթերցվում է Ջրօրհնեքի արարողության ընթացքում:

Այսօր Տերը մաքրում է ջրերը, լուսավորում է մարդկանց և նրանց երկնայիններ դարձնում:

Այսօր երկիրը նոր երկինք է պատվով, քանզի Աստծո Որդին երկրի վրա հայտնվեց և մարդկանց մեջ շրջեց և այսօր գալով ու Հորդանան գետ իջնելով մաքրում է ջրերը և լուսավորում է մարդկանց ջրի և կենդանի հոգու մաքրությամբ:

Այսօր Աստվածային Սուրբ Երրորդությունը երկրի վրա հայտնվեց, և ամբողջ երկիրը լի է Նրա փառքով: Հայրը երկնքից վկայում է. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, որն ունի իմ հաճությունը», և Սուրբ Հոգին աղավնու նմանությամբ իջավ նրա վրա:

ՔՈ ԽՄԲԻ ՀԵՏ

Խորհրդածի՛ր Մարդեղության պարգևների մասին, որ շնորհվում է մարդկությանը և ամբողջ աշխարհին: Քո կարծիքով ի՞նչն է պետք փրկել և նորոգել քո մեջ: Աշխարհի, նրա ռեսուրսների, միմյանց նկատմամբ մարդկանց փոխհարաբերությունների մասին մտածելիս արդյո՞ք քրիստոնյաները կարողացել են Աստվածորդու Մարդեղության օրհնությունը փոխանցել աշխարհը բարեփոխելու համար: Գրի՛ր մտածումներդ ինքդ քո և աշխարհի մասին: Ինչպե՞ս կարող ենք մենք՝ ուղղափառ քրիստոնյաներս, լինել Հիսուս Քրիստոսի փրկության շնորհի փոխանցողներն աշխարհին: Ցանկագրի՛ր մի շարք կոնկրետ քայլեր, որոնք կարող ես ստանձնել քո կյանքում, և քայլեր, որոնց կուզենայիր մասնակցել համայնքային կյանքում:

ԵՐԳԵՆՔ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՄԲ

Մեծ և սքանչելի խորհուրդ, որ այսօր հայտնվեց,
Հովիվները երգում են հրեշտակների հետ,
Ավետիս են տալիս աշխարհին:

Ծնվեց նոր արքա Բեթղեհեմ քաղաքում,
Օրհնեցե՛ք բոլոր մարդիկ, քանզի մեզ համար մարմնացավ:

Երկնքի և երկրի անբավելին խանձարուրի մեջ փաթաթվեց,
Չթաժանվելով Հորից, սուրբ քարայրում բազմեց:

Այսօր ցնծում է երկինքը մեծապայծառ ավետիսով,
Բոլոր արարածները հազան փրկության զգեստներ:

Այսօր Քրիստոսը՝ Աստծո Որդին, ընծայվեց քարայրում,
Եվ հրեղեն հրեշտակները երկնքից երկիր իջան:

Այսօր հովիվները տեսան արդարության արեգակին,
Եվ հրեշտակների հետ երգում էին.
«Փա՜ռք Աստծուն բարձունքներում»:

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ

ՕՐՀ. «Դ 4»



ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Շարականին ինքնուրույն ավելացրո՛ւ ևս մի տուն, որը կլինի քո հավատի պատասխանը Աստվածորդու Մարդեղության համար:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասի նպատակն էր աշակերտներին տանել Մարդեղության խորհրդի խորքերը, որը մենք դավանում ենք Նիկիական հանգանակում. «Ով մեզ՝ մարդկանցս, և մեր փրկության համար երկնքից իջնելով՝ մարմնացավ, մարդացավ, կատարելապես ծնվեց Սուրբ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգու զորությամբ, որի միջոցով առավ մարմին, հոգի և միտք և այն ամենը, ինչ մարդկային բնությունն ունի, ճշմարտապես և ոչ թե առերևույթ»: Այն ուղեկցվում է Մատթեոսի և Ղուկասի Ավետարանների, ինչպես նաև մարգարեությունների հետ, որոնք վերաբերում են էմմանուելի գալուստին:

Ձեր զավակը ծանոթացավ Եկեղեցու ծիսական ավանդությանը աղոթքների և շարականների միջոցով, ինչպես նաև Եկեղեցու հայրերի հոգևոր գրվածքներով, որպեսզի խորանա իրենց գիտելիքները Մարդեղության խորհրդի մասին:

Աշակերտները նաև իրազեկ դարձան պատմական մարտահրավերներին, որոնց բախվեց Եկեղեցին ուղղափառ հավատը պաշտպանելիս՝ վերահաստատելով, որ Մարիամից ծնվածը միաժամանակ մարդ է և Աստծո Որդին: Հետևաբար Եկեղեցին ճշմարտապես շարունակում է Մարիամին կոչել Աստվածածին կամ Աստվածամայր: Այս հավատքը պաշտպանվեց և հռչակվեց Եփեսոսի Տիեզերական ժողովում 431թ., և մերժվեց Նեստորի հերետիկոսությունը: Եկեղեցին շարունակում է մերժել որևէ մի վարդապետություն, որը կժխտի Հիսուս Քրիստոսի լիարժեք մարդկությունը և լիարժեք աստվածությունը և միաժամանակ հաղորդությունից կզրկվի որևէ մեկը, ով հետևի այդպիսի սխալ ուսմունքների:

Ձեր զավակի հետ քննարկե՛ք նրա սովորածը Աստվածորդու Մարդեղության մասին: Շարունակե՛ք երկխոսության միջոցով խորացնել նրա երախտագիտությունը Մարդեղության շնորհների հանդեպ, որոնք նա վայելում է իր կյանքում՝ ամուր պահելով այն ուրախությունն ու հույսը, որ մենք կարող ենք ապրել Հիսուս Քրիստոսի պարգևած փրկությամբ:

Ընտանիքով մասնակցե՛ք մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնակատարությանը՝ իբրև ընդունողներ այդ մեծ և հրաշալի պարգևի:

14. ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՃՇՄԱՐԻՏ ՄԱՐԴ

«Ահա թե ինչու Քրիստոսն ամեն ինչով պետք է նման լիներ իր եղբայրներին, որպեսզի կարողանար ողորմած և վստահելի մի քահանայապետ լինել Աստծո մոտ՝ Աստծո ժողովրդի մեղքերը քավելու համար»:

Եբրայեցիներին 2.17

Հայտնագործենք

Ծնողներդ երջանկություն են ունեցել քեզ մեծացնելու ծննդյանդ առաջին իսկ օրվանից մինչև հիմա: Որպես մանուկ դու ամբողջությամբ կախված ես եղել նրանց հոգատարությունից: Վաղ մանկությանդ տարիների ընթացքում դու ուրախացրել ես նրանց քո զարգացող ունակություններով: Դպրոցական տարիներդ հավելել են նրանց երջանկությունը, քանի որ տեսել են քո աճը և կարողությունները մյուսների հետ շփվելու, քո աշխարհի մասին սովորելու, ինչպես նաև սիրելու և սիրվելու մեջ: Այժմ, որպես արդեն պատանի, աշխարհը լայնորեն բաց է քո առջև՝ մինչ դու շարունակում ես իրագործել Աստծուց քեզ տրված մեծ շնորհները:

- Խորհրդածի՛ր կյանքիդ տարբեր շրջանների շուրջ և գրի՛ր, թե ինչն էր քեզ համար նշանակալի այդ տարիներին: Ի՞նչ ես հիշում քո աճող կարողություններից, ապրածդ զգացմունքներից, ինչպես նաև մարտահրավերներից և ձեռքբերումներից՝ բնորոշ յուրաքանչյուր փուլին:

Կարդա՛ Աստվածաշնչի հատվածը և գաղափար կազմի՛ր, թե ինչպես Հիսուս Քրիստոսը կիսեց մեր մարդկային բնությունը:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՃՇՄԱՐԻՏ ՄԱՐԴ

Ղուկաս 2.21-22, 39-52, 8.22-24, 24.36-43

Եկեղեցին հաստատում է Հիսուս Քրիստոսի ճշմարիտ մարդ լինելը՝ ըստ Նիկիական հանգանակի հետևյալ սահմանման. *«Ով մեզ՝ մարդկանցս, և մեր փրկության համար երկնքից իջնելով՝ մարմնացավ, մարդացավ, կատարելապես ծնվեց Սուրբ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգու զորությամբ, որի միջոցով առավ մարմին, հոգի և միտք և այն ամենը, ինչ մարդկային բնություն ունի, ճշմարտապես և ոչ թե առերևույթ»:* Ընթերցի՛ր Սուրբ Գրքի հատվածները և մտածի՛ր Աստվածորդու Մարդեղության հրաշալի խորհրդի մասին:

Ութ օր հետո, երբ մանկանը թլփատելու ժամանակը հասավ, նրան կոչեցին Հիսուս, այն անունով, որ հրեշտակն էր տվել նրան, երբ դեռ չէր հղացվել իր մոր՝ Մարիամի որովայնում: Իսկ երբ Մովսեսի հաստատած Օրենքի համաձայն նրանց ծիսական մաքրության ժամանակը լրացավ, Հովսեփն ու Մարիամը մանկանը տարան Երուսաղեմ՝ Տիրոջն ընծայելու...»:

Ղուկաս 2.21-22

Երբ Հովսեփն ու Մարիամը կատարեցին Տիրոջ Օրենքի պահանջները, վերադարձան Գալիլեա, իրենց Նազարեթ քաղաքը: Այնտեղ մանուկը մեծացավ, զորացավ և լցվեց իմաստությամբ: Աստծո շնորհը նրա վրա էր:

Հիսուսի ծնողներն ամեն տարի՝ Զատկի տոնին, Երուսաղեմ էին գնում: Երբ Հիսուսը տասներկու տարեկան եղավ, նրանք Երուսաղեմ գնացին, ինչպես տոնի առթիվ սովորություն էր գնալու: Տոնակատարության ավարտին, մինչ նրանք վերադառնում էին, մանուկ Հիսուսը մնաց Երուսաղեմում: Նրա ծնողները չանդրադարձան դրան: Նրանք կարծում էին, թե նա իրենց ուղեկիցների հետ է: Մի օրվա ճանապարհ անցնելուց հետո սկսեցին նրան փնտրել ազգականների և ծանոթների մեջ:

Երբ չգտան, հետո դարձան Երուսաղեմ՝ այնտեղ նրան փնտրելու համար: Երեք օր հետո նրան գտան տաճարում: Տաճարի ուսուցիչների հետ նստած՝ լսում էր նրանց և հարցեր ուղղում: Բոլոր նրանք, ովքեր լսում էին նրան, սքանչանում էին նրա իմաստության և տված պատասխանների վրա:

Ծնողները, երբ տեսան Հիսուսին, ապշած մնացին: Նրա մայրն ասաց.

-Այսի՞նչ արեցիր դու մեզ հետ, տղա՛ս. ահա հայրդ ու ես տագնապած քեզ էինք փնտրում:

Հիսուսն ասաց նրանց.

-Ինչո՞ւ եք ինձ ուրիշ տեղ փնտրում. չգտեի՞ք, որ Հորս տանը պիտի լինեմ:

Սակայն նրա ծնողներն այս խոսքերի իմաստը չհասկացան:

Հետո Հիսուսն իր ծնողների հետ գնաց Նազարեթ և հնազանդ մնաց նրանց: Նրա մայրն այս բոլորը պահում էր իր սրտում: Իսկ Հիսուսը զարգանում էր իմաստությամբ և մարմնով՝ սիրելի դառնալով Աստծուն և մարդկանց:

Ղուկաս 2.39-52

Սուրբ Գիրք .....

Մարդկային ապրում .....

.....

Մի օր Հիսուսն իր աշակերտների հետ նավակ նստեց և ասաց նրանց.

-Եկեք լճի մյուս կողմն անցնենք:

Եվ ճանապարհ ընկան: Մինչ աշակերտները նավարկում էին, Հիսուսը քնեց: Հանկարծ ուժեղ փոթորիկ սկսվեց լճի վրա. ալիքները թափվում էին նավակի մեջ. բոլորն էլ վտանգի մեջ էին: Աշակերտները մոտեցան Հիսուսին և արթնացրին նրան՝ ասելով.

-Վարդապե՛տ, վարդապե՛տ, ահա կորչում ենք:

Հիսուսը վեր կացավ, սաստեց քամուն և մրրկահույզ կոհակներին, որոնք հանդարտվեցին, և խաղաղություն տիրեց:

Ղուկաս 8.22-24

Մինչ նրանք այս մասին էին խոսում, նույն ինքը՝ Հիսուսը, եկավ կանգնեց նրանց մեջտեղը և ասաց.

-Խաղաղությո՛ւն ձեզ, ես եմ, մի՛ վախեցեք:

Նրանք վախեցած և սարսափած կարծեցին, թե մի ոգի են տեսնում: Բայց նա ասաց նրանց.

-Ի՞նչ եք իրար խառնվել և ինչո՞ւ եք կասկածներ ունենում ձեր մտքում: Նայեցե՛ք իմ ձեռքերին և ոտքերին, հենց ե՛ս եմ: Շոշափեցե՛ք ինձ և կտեսնեք, որ միս ու ոսկոր ունեմ, մի բան, որ ոգին չի ունենում:

Այս ասելով՝ նա իր ձեռքերն ու ոտքերը ցույց տվեց նրանց: Եվ մինչ նրանք ուրախությունից չէին հավատում և դեռևս զարմացած էին, Հիսուսն ասաց նրանց.

-Ուտելու բան ունե՞ք այստեղ:

Նրանք խորոված ձկան մի կտոր և մեղրախորիսխ տվեցին նրան: Նա կերավ նրանց առաջ և մնացածը տվեց նրանց:

Ղուկաս 24.36-43

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Կարդա՛ նախորդ էջի սուրբգրային հատվածները և այս էջի ներքևում տրված Աստվածաշնչի հղումները և նկարների համեմատ «Սուրբ Գիրք» տողին գրի՛ր համապատասխան հղումը: Յուրաքանչյուր **նկար/սուրբգրային հատված** զույգի համար ներքևի աջ կողմի ցանկից ընտրի՛ր մի բառ, որը կնկարագրի Հիսուսի ունեցած մարդկային զգացումը կամ ապրումը: Չպետք է անպայմանորեն օգտագործել ցանկի բոլոր բառերը:

Սուրբ Գիրք. .....

Մարդկային ապրում. .....

Սուրբ Գիրք. .....

Մարդկային ապրում. .....

Սուրբ Գիրք. .....

Մարդկային ապրում. .....

Սուրբ Գիրք. .....

Մարդկային ապրում. .....

Սուրբ Գիրք. .....

Մարդկային ապրում. .....

Սուրբ Գիրք. .....

Մարդկային ապրում. .....

Սուրբ Գիրք. .....

Մարդկային ապրում. .....

Մարկոս 11.15-17	*Ղուկաս 23.44-47*
Ղուկաս 2.21-22, 39-52	*Ղուկաս 24.36-43*
Ղուկաս 4.1-4, 9-13	*Հովհաննես 2.1-11*
Ղուկաս 7.11-15	*Հովհաննես 11.33-38*
Ղուկաս 8.22-24	

զայրացած	*ածեց*
կերավ	*սիրեց*
տոնեց	*քնեց*
մեռավ	*փորձվեց*
խղճաց	*լաց եղավ*

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻՆ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ

Մատթեոսի Ավետարանի 26.36-39 հատվածում մենք տեսնում ենք չարչարվող Քրիստոսին, ով զգաց վախն ու ցավը, որ կապրեր տառապանքի ու մահվան առջև կանգնած որևէ մարդ: Կարդա՛ և պարզի՛ր, թե ինչպիսի՞ զգացումներ և կարիքներ ուներ Հիսուս Քրիստոսը չարչարանքի ժամանակ: Այդ զգացումներից ո՞րը կարող էր լինել քոնը, եթե հայտնվեիր վատթարագույն վտանգի մեջ: Կլինեի՞ն այնտեղ որևէ այլ ապրումներ, որ դու չէիր ունենա:

Ապա Հիսուսն իր աշակերտների հետ եկավ մի տեղ, որի անունը Գեթսեմանի էր, և ասաց նրանց.

-Նստե՛ք այստեղ, մինչև որ գնամ աղոթեմ:

Նա իր հետ վերցրեց Պետրոսին և Զեբեդեոսի երկու որդիներին: Նա տրտմում էր և տագնապում: Այն ժամանակ ասաց նրանց.

-Հոգիս մեռնելու աստիճան տխուր է. այստե՛ղ մնացեք և ինձ հետ արթուն հսկեցե՛ք:

Ապա մի փոքր առաջ գնալով՝ երեսի վրա գետին ընկավ և սկսեց աղոթել՝ ասելով.

-Հա՛յր իմ, եթե կարելի է, այս բաժակը հեռացրո՛ւ ինձնից, բայց ոչ թե ինչպես ես եմ ուզում, այլ ինչպես դու ես ուզում:

Ավագ Հինգշաբթի և Ավագ Ուրբաթ օրերին Եկեղեցին հրավիրում է մեզ կատարել նույն հսկումը, ինչ որ Հիսուսը հրավիրեց իր հետևորդներին միասին աղոթքի կանգնելու մինչև Հուդայի մատնումը: Եկեղեցական արարողություններն օգնում են մեզ քայլել Հիսուսի հետ իր երկրային կյանքի վերջին շաբաթվա միջով, ինչպես որ նա նպատակադրված իրականացնում էր Հոր կամքը: Այս հսկումը նաև մեր իսկ հոգիների համար է, որպեսզի մենք սկսենք խորությամբ ընկալել խաչի վրա Հիսուս Քրիստոսի տված պարգևի և զոհողության արժեքը:

Ահա որոշ տներ Սբ Ներսես Շնորհալու հոգևոր երգերից, որոնք երգվում են Ավագ Հինգաշբթի երեկոյան կատարվող Խավարման կարգի ընթացքում և ներկայացնում են մեր Տեր Հիսուսի ճշմարիտ մարդկության մասին:

Աստծո փառքի ճառագայթ, Դու, որ ըստ մարդկային մեր բնության գիշերային պագնապի մեջ աղոթեցիր երկնավոր Հորը, ծագեցրո՛ւ մեր մեջ երկնային Քո լույսը և փարատի՛ր չարի երկյուղը, և թող մեր հոգիներն ու մարմինները լցվեն Քո սուրբ երկյուղով:

Գորովագութ բարբառով «Աստված իմ, Աստված իմ» էր գոչում առ Հայր, հոգին ինքնակամ Հորն ավանդելով, մարդկանց հոգիների համար նույն օրինակը տալով, երկիրը հիմքից սասանվեց և տաճարի վարագույրը մեջտեղից պատռվեց, գերեզմանների վեմ քարերը տեղաշաժվեցին և մահվան շիրիմները բացվեցին:

Դու, որ արչակում էիր կապվածներին, ինքնակամ ընդունեցիր կապանքները և տարվեցիր Կայիափայի և Աննայի ապարանքը, ծառան ապտակեց երեսիդ, որին սերովբեն չէր համարձակվի թևով սրողեր, նա պիղծ բերանով թքեց նրա վրա, ով կույրի աչքերին լույս պարգևեց իր աստվածային թքով:

Բառարան

ՍԵՐՈՎԲԵ՝ երկնային՝ էակներ, որոնց մասին նշվում է Եսայի 6-րդ գլխի տեսիլքում: Նկարագրվում է, որ նրանք ունեն վեց թևեր և տեղակայված են Աստծո գահին՝ մշտապես օրհներգելով Աստծո սրբությունն ու փառքը:

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹԻ ԻՄ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՊՐՈՒՄՆԵՐԸ

1. Կարդա՛ այն երգի տողը, որն ուսուցիչը կնշանակի ձեր խմբին, և գտի՛ր **Մատթեոսի Ավետարանի 26.26-46 և 27.1-54** հատվածները, որոնք կապակցվում են երգի տողում նկարագրվածի հետ: Օգտագործելով երգը և սուրբգրային տողերը՝ կազմիր պատի թերթ:
2. Խմբի անդամներով քննարկի՛ր Հիսուսի կրած չարչարանքների մասին: Այն ի՞նչ է հայտնում ձեզ ձեր ապրումների և դժվարությունները տանելու կերպի մասին, որոնք ձեզ տառապանք են պատճառում:
3. Խմբի աշխատանքը դասարանի հետ կիսելուց հետո ընտրի՛ր մի նախադասություն երեք տներից որևէ մեկից և արտահայտի՛ր քո անձնական մտածումները կա՛մ չափածո, կա՛մ արձակ, կա՛մ էլ նկարելու միջոցով: Դա պետք է արտացոլի քո ընկալումները և թե ինչպես է այն ներգործում քեզ վրա և գուցե հրավիրում է քեզ վերամտածել չարչարանքի միջոցով ապրելու եղանակի մասին:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ԿԻՍՈՒՄ Է ՄԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաքյալների ժամանակներից սկսած Եկեղեցին դավանում է Հիսուս Քրիստոսի ճշմարիտ և լիարժեք մարդեղությունը: Այս հավատքը արտահայտվել է Սուրբ Գրքում և Եկեղեցու ծեսում: Եկեղեցին անհրաժեշտ է գտնում շեշտել Հիսուս Քրիստոսի ճշմարիտ և լիարժեք մարդ լինելը, որովհետև վաղ ժամանակներից մինչ այսօր որոշ քրիստոնեական աղանդներ փորձել են մերժել կամ նվազեցնել Հիսուս Քրիստոսի ճշմարիտ մարդկությունը: Կարդա՛ հետևյալ հատընտիր հատվածները, որոնք խոսում են Աստծո Որդու Մարդեղության մասին: Ի՞նչ ընդհանուր թեմաներ ես գտնում նրանցում: Ի՞նչ կասես Աստծո հավիտենական Որդու՝ որպես մարդ ծնվելու կարևորության մասին: Գրի՛ր քո մտածումները:

Արդ, քանի որ այս զավակները մարդիկ են, մարմնով և արյամբ, Քրիստոսն ինքն էլ նմանվեց նրանց, հաղորդակից եղավ նրանց մարդկային բնությանը, որպեսզի իր մահով ոչնչացնի Սատանային, որ մահվան իշխանություն ուներ, և ազատագրի նրանց, որոնք ստրուկների նման իրենց ամբողջ կյանքն անց էին կացնում մահվան երկյուղով: Շատ պարզ է, որ այս ազատագրությունը հրեշտակներին չի վերաբերում, այլ Աբրահամի զավակներին: Ահա թե ինչու Քրիստոսն ամեն ինչով պետք է նման լիներ իր եղբայրներին, որպեսզի կարողանար ողորմած և վստահելի մի քահանայապետ լինել Աստծո մոտ՝ Աստծո ժողովրդի մեղքերը քավելու համար: Եվ որովհետև ինքը չարչարվելով փորձվեց, կարո՛ղ է օգնել փորձության մեջ եղողներին:

Եբրայեցիներին 2.14-18

Ուղղափառ Եկեղեցին քեզ է դավանում որպես Աստվածածին և քեզ է երկրպագում, որովհետև որպես Տիրոջ աղախին, դու անսերմնապես քո արգանդում կրեցիր Նրան, որին բազմաչյա քերովբեները, հրեղեն աթոռները և վեցթևյան սերովբեները չէին համարձակվում նայել: Դու բոլորի Աստծուն և անձառ Խոսքին որպես մարդ ծնեցիր աշխարհի փրկության և մեր կյանքի համար:

Ծննդյան ժամամուտ

Նա եղավ ճշմարիտ մարդ, այլ ոչ երևութապես, և անշփոթ միավորությամբ մարմնացավ Աստվածածնից և սուրբ կույս Մարիամից, կրեց մարդուն ներհատուկ բոլոր կրքերը՝ բացի մեղքից, և աշխարհի պահպանության և մեր հոգիների փրկության համար ինքնակամ խաչը բարձրացավ:

Աղոթք Սուրբ Պատարագից

.....

.....

.....

.....

ԵՐԳԵՆՔ

Թագավոր Քրիստոս, էակից Հոր և Հոգու, որ մեզ համար մարմնացար սուրբ կույսից, փառքերի թագավոր Քրիստոս, Քեզ փառք:

Դու կամավոր Քո մահվամբ մահին մեռցրիր և անապական Քո Հարությամբ նորոգեցիր աշխարհը, փառքերի թագավոր Քրիստոս, Քեզ փառք:

Կենդանարար Քո արյամբ լուսավորեցիր Սուրբ Եկեղեցին, հրեշտակների հետ երգում ենք Քեզ՝ ասելով. փառքերի թագավոր Քրիստոս, Քեզ փառք:



ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասի նպատակն էր աշակերտներին ներկայացնել պատկերներ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ մարդկության վերաբերյալ: Եկեղեցին անհրաժեշտ և կարևոր է համարել հստակորեն հռչակել Մարդեղացած Աստծո Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի լիարժեք և ճշմարիտ մարդկությունը, քանի որ վաղ ժամանակներից մինչև այսօր քրիստոնեական աղանդները փորձել են ժխտել կամ նվազեցնել նրա ճշմարիտ մարդկությունը:

Հիսուս Քրիստոսի մարդկային փորձառության մասին պատմող սուրբգրային հատվածների միջոցով ձեր զավակն առիթ ունեցավ ծանոթանալու Հիսուսի մարդկային նույն զգացումներին ու ապրումներին, ինչ նրանք ունեն՝ բացի մեղքից: Եկեղեցու շարականներն ու աղոթքները նույնպես օգտագործվում են ամրացնելու մեր հավատքի հիմքերը, որ Աստծո Միածին Որդին ամբողջությամբ վերցրեց մեր մարդկային բնությունը և ծնվեց Կույս Մարիամից՝ հանուն մեր փրկության:

Ճանաչելով Հիսուս Քրիստոսին՝ որպես ճշմարիտ Աստվածամարդ, ով կրեց այն ամենը, ինչ ունի մարդը բացի մեղքից, աշակերտները կխրախուսվեն և նրանց համար ընդօրինակելու տիպար կլինի, քանի դեռ նրանք զարգացման ընթացքում են:

Սուրբ Ծննդյան տոնը մի հատուկ ժամանակ է, երբ մենք խորասուզվում ենք Աստծո այն մեծ պարգևի մեջ ի դեմս մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի:

Քաջալերե՛ք ձեր զավակին մշտապես դիմելու Հիսուս Քրիստոսին՝ ամենօրյա որոշումներ կայացնելու մեջ առաջնորդվելու համար:

Ձեր զավակի հետ միասին սովորե՛ք Սուրբ Ծննդյան ժամամուտը *(նայել էջ 97)*, որն ամփոփում է Եկեղեցու հավատքը Աստվածորդու ճշմարիտ մարդկության վերաբերյալ:

Գլուխ Ե

ՉԱՐՉԱՐՎԵՑ, ԽԱՉՎԵՑ, ԹԱՂՎԵՑ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՕՐԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՎ...

Նիկիական հանգանակը շարունակում է...

«Հիսուսը չարչարվեց, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով համբարձվեց երկինք և նստեց Հոր աջ կողմում»:

Այս գլուխը կօգնի քեզ հասկանալ խաչի վրա Հիսուս Քրիստոսի զոհաբերության խորքն ու մեծությունը և այն պարգևը, որը մարդկությունն ստացավ Տիրոջ Հարությամբ:

Չորս դասերի միջոցով կծանոթանաս Տիրոջ ճշմարիտ չարչարանքներին, խաչելությանը, թաղմանը և երրորդ օրը հարությանը՝ հանուն մարդկության: 18-րդ դասը եզրափակում է Հիսուս Քրիստոսի երկրավոր առաքելությունը՝ իրականացնելով Հոր կամքը: Նա երկինք բարձրացավ և նստեց Հոր աջ կողմում:

Ծնողների համար

Այս գրքի վերջին չորս դասերը կենտրոնանում են մեր Տեր Հիսուս Քրիստոսի չարչարանքների, խաչելության և թաղման, Հարության և երկինք Համբարձման վրա: Ձեր զավակը հնարավորություն կունենա դասերի միջոցով տեսնել, որ Հիսուս Քրիստոսը կատարեց Երկնավոր Հոր կամքը՝ ի սեր իր արարածների հանձն առնելով մեծագույն չարչարանքներ և մահ:

Ձեր պատանի զավակի հոգում տպավորե՛ք երախտագիտության ճշմարիտ պատասխան առ բարեգութն Աստված՝ ընդօրինակելով այն պահվածքը, որով Հիսուս Քրիստոսը տառապանքներ կրեց՝ ի սեր իր սիրելիների: Նրանց սովորեցրե՛ք սիրով տանելու միմյանց հոգսերն ու ծանրությունը, մանավանդ օգնության հասնելով կարոտյալներին, և այդպիսի ծառայությամբ ուրախանալ, ինչպես Հիսուսն է ուրախանում մեր փրկությամբ:

Մասնակցե՛ք Եկեղեցու տոներին, որոնք օգնում են մեզ ապրել մեր Տիրոջ չարչարանքները և տոնել Սուրբ Հարության բերկրանքը:

15. «ՉԱՐՉԱՐՎԵՑ»

«...մարդու Որդին պետք է բազում չարչարանքներ կրի, անարգվի երեցներից ու քահանայապետներից և օրենսգետներից, մեռնի և երրորդ օրը հարություն առնի»:

Ծննդոց 3.19

Հայտնագործենք

ՀԱՋՈՂԱԿ ԵՂԲԱՅՐԸ

Մարդիկ միշտ ասում են, թե եղբայրս՝ Արմաշը, շատ հաջողակ էր: Նա բարետես արտաքին ունի, լավ էր սովորում դպրոցում և տաղանդավոր ֆուտբոլիստ էր: Արմաշը միշտ կարողանում էր որևէ թեմայով զրուցել իրեն հանդիպող ցանկացած անձի հետ՝ անկախ նրանից, թե այդ մեկը իր տարեկից երեխա էր, թե մեծահասակ: Մարդիկ միշտ ուզում էին ժամանակ անցկացնել նրա հետ:

Վիճակն այլ էր ինձ համար: Ես դժվարություն ունեի զրույցի բռնվել մարդկանց, հատկապես աղջիկների հետ: Դպրոցում վատ չէի սովորում, սակայն փայլուն գիտնական էլ չէի: Մյուս երեխաները ծաղրում էին ինձ, քանի որ կարճլիկ էի և նիհար, և սպորտային խաղերի ժամանակ նրանք սովորաբար չէին ուզում, որ իրենց թիմում լինեի: Երբեմն զգացվում է, թե ինձ ոչ ոք չի նկատում:

Շատ անգամներ, երբ տակավին պատանի էի, լաց էի լինում, որովհետև ինձ շատ մենակ և մերժված էի զգում: Հիմա, երբ արդեն մեծացել եմ, թեպետ աչքերս չեն արցունքոտվում, բայց տխրությունն ու միայնությունը դեռ չեն հեռանում ինձնից:

Սակայն ինչ-որ առումով Արմաշը և ես շատ նման ենք: Նույնիսկ երբ մենք շատ փոքր էինք, մեր մայրը մեզ համար պատմում էր Հիսուս Քրիստոսի մասին, թե ինչպես որոշ մարդիկ նրան մերժեցին և նույնիսկ ատեցին: Մայրս պատմում էր մեզ նաև սուրբերի մասին: Ահա ես գիտեմ, որ Աստված կա և սիրում է ինձ և երբեք այլևս չի մերժի ինձ, քան Արմաշին:

Սա կարևոր և մխիթարական է իմանալ: Միգուցե Արմաշը, ի վերջո, միակ «հաջողակ եղբայրը» չէ:

■ Ինչպե՞ս ես հասկանում այս վերջին նախադասությունը: Ինչպե՞ս կնկարագրեիր նրանց «հաջողակ» լինելը:

.....

.....

.....

.....

Կարդա՛ Աստվածաշնչի նկարագրությունները Հիսուս Քրիստոսի հանդեպ դրսևորված մերժողական և սխալ վերաբերմունքի մասին, որը երբեք չխանգարեց Տիրոջը մեզ սիրելու համար:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՆ ԻՍԿԱՊԵՍ ՉԱՐՉԱՐՎԵՑ ՄԵԶ ՀԱՄԱՐ

Մտ 26.36-54 և 27.27-31, Մկ 8.31, Ղկ 4.24, 27-30, Հհ 6.65-66

Երբ Հավատամքի մեջ ասում ենք, թե Հիսուսը «չարչարվեց», գուցե մտածենք նրա երկրավոր կյանքի վերջին մի քանի ժամերի տանջանքների մասին: Բայց ներքևի հատվածները մեզ ցույց են տալիս, թե ինչպես Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, կիսեց մեր մարդկային ցավերը՝ մերժվելը, լքվելը, ծաղրվելը, մատնվելը նույնիսկ իր քարոզչական առաքելության տարիներին: Հատվածներն ընթերցելիս նշմարի՛ր, թե դրանցից յուրաքանչյուրում ինչպիսի չարչարանք է կրում Հիսուսը:

Ապա Հիսուսն սկսեց ուսուցանել իր աշակերտներին և ասաց.

-Մարդու Որդին շատ պիտի չարչարվի և մերժվի երեցներից, ավագ քահանաներից և Օրենքի ուսուցիչներից, պիտի սպանվի, բայց երրորդ օրը հարություն պիտի առնի:

Մարկոս 8.31

Եվ ավելացրեց.

-Հենց դրա համար ասացի ձեզ, թե ոչ ոՙք չի կարող գալ դեպի ինձ, եթե իմ Հայրն այդ շնորհը չտա նրան:

Այս խոսքերի պատճառով աշակերտներից շատերը հեռացան և այլևս չէին շրջում նրա հետ:

Հովհաննես 6.65-66

Եվ ավելացրեց.

-Բայց դուք ինքներդ էլ գիտեք, որ մարգարեն իր ծննդավայրում պատիվ չունի: ...Նույնպես և Եղիսե մարգարեի օրերին Իսրայելում բազմաթիվ բորոտներ կային, բայց նրանցից ոչ մեկը չբժշկվեց, այլ միայն Նեեման անունով մի ասորի:

Այս ակնկալությունները լսելով՝ ժողովարանում գտնվողները բարկությամբ լցվեցին: Վեր կացան, Հիսուսին քաղաքից դուրս հանեցին և գահավեժ անելու նպատակով նրան տարան մինչև կատարն այն լեռան, որի վրա կառուցված էր իրենց քաղաքը: Բայց Հիսուսն անցավ գնաց նրանց միջով:

Ղուկաս 4.24, 27-30

Ապա Հիսուսն իր աշակերտների հետ եկավ մի տեղ, որի անունը Գեթսեմանի էր, և ասաց նրանց.

-Նստեք այստեղ, մինչև որ գնամ աղոթեմ:

Նա իր հետ վերցրեց Պետրոսին և Զեբեդեոսի երկու որդիներին: Նա տրտմում էր և տագնապում: Այն ժամանակ ասաց նրանց.

-Հոգիս մեռնելու աստիճան տխուր է. այստե՛ղ մնացեք և ինձ հետ արթուն հսկեցե՛ք:

Ապա մի փոքր առաջ գնալով՝ երեսի վրա գետին ընկավ և սկսեց աղոթել՝ ասելով.

-Հա՛յր իմ, եթե կարելի է, այս բաժակը հեռացրո՛ւ ինձնից, բայց ոչ թե ինչպես ես եմ ուզում, այլ ինչպես դու ես ուզում:

Հետո վերադարձավ երեք աշակերտների մոտ և նրանց քնած գտավ: Ասաց Պետրոսին.

-Չկարողացա՞ք մեկ ժամ արթուն մնալ ինձ հետ: Արթո՛ւն մնացեք և աղոթեցե՛ք, որպեսզի փորձության մեջ չընկնեք: Հոգին կարող է հոժար լինել, բայց մարմինը տկար է:

Նորից, երկրորդ անգամ, Հիսուսը գնաց աղոթելու և ասաց.

-Հա՛յր իմ, եթե կարելի է, այս բաժակը թող հեռանա ինձնից, իսկ եթե ոչ, կխմեմ այն քո կա՛մքը թող լինի:

Նա վերադարձավ և դարձյալ իր աշակերտներին քնած գտավ. նրանց աչքերը չէին բացվում: Հիսուսը դարձյալ թողեց նրանց ու գնաց երրորդ անգամ աղոթեց՝ նույն խոսքերն ասելով: Ապա վերադարձավ իր աշակերտների մոտ և ասաց.

-Այսուհետև ննջեցեք և հանգստացեք. բայց ահա ժամը հասել է, և Մարդու Որդին հանձնվելու է մեղավոր մարդկանց ձեռքը: Վե՛ր կացեք գնանք այստեղից, որովհետև ահա հասավ ինձ մատնողը:

Մինչ նա խոսում էր, ահա եկավ Հուդան՝ տասներկու աշակերտներից մեկը: Նրա հետ էր սրերով ու մահակներով զինված մի մեծ ամբոխ՝ ուղարկված ավագ քահանաների և ժողովրդի երեցների կողմից:

Հիսուսին մատնողը նրանց նշան էր տվել՝ ասելով.

-Ում որ համբուրեմ, նա՛ է Հիսուսը, ձերբակալեք նրան:

Հուդան շուտով մոտեցավ Հիսուսին և ասաց.

-Ողջո՛ւյն, Վարդապե՛տ, - և համբուրեց նրան:

Հիսուսը նրան ասաց.

-Բարեկա՛մ, դրա համա՞ր եկար:

Ապա մոտեցան, բռնեցին Հիսուսին և ձերբակալեցին: Հիսուսի հետ եղողներից մեկը ձեռքը երկարեց և իր սուրը քաշելով՝ հարվածեց քահանայապետի ծառային ու նրա ականջը կտրեց: Հիսուսն ասաց նրան.

-Սուրդ տե՛ղը դիր, որովհետև ով սուր է վերցնում, սրով էլ պիտի մեռնի: Կարծում ես, թե չե՞մ կարող իմ Հորն աղաչել, որ հիմա հրեշտակների ավելի քան տասներկու գնդեր ուղարկի ինձ մոտ: Սակայն ինչպե՞ս պիտի իրականան Սուրբ գրքերում գրվածները, թե այսպես պետք է լինի:

Մատթեոս 26.36-54

Զինվորները Հիսուսին տարան կառավարչի պալատը, որտեղ նրա շուրջը հավաքվեց զինվորների ամբողջ գունդը: Ապա մերկացրին Հիսուսին և նրա ուսերին կարմիր քղամիդ գցեցին: Փշե պսակ հյուսելով՝ դրեցին նրա գլխին և մի եղեգ էլ տվեցին աջ ձեռքը: Զինվորները ծնկի էին գալիս նրա առջև և ծաղրելով ասում. «Ողջո՞ւյն, հրեաների՝ թագավոր»: Թքում էին նրա երեսին, եղեգը ձեռքից վերցնում և խփում էին գլխին: Եվ նրան ծաղր ու ծանակի ենթարկելուց հետո վրայից հանեցին քղամիդը, հագցրին իր զգեստները և տարան խաչելու:

Մատթեոս 27.27-31

Բառարան

ՇԵՐԵՐ՝

ժողովրդի տարիքով ավագ առաջնորդները:

ԱՇԽԱՏԱՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՎ

1. Դու կարդացիր սուրբգրային հատվածի այն մասը, որում նկարագրվում էր Հիսուսի քարոզելը Նազարեթ քաղաքի ժողովարանում, որտեղ նա մեծացել էր: Գտի՛ր **Ղուկաս 4.14-30** հատվածը քո Աստվածաշնչից և ընթերցի՛ր հատվածն ամբողջությամբ: Քո խմբով քննարկի՛ր և պատասխանի՛ր հետևյալ հարցերին.

- Մարդիկ ինչպե՞ս էին ընդունում իրենց «համաքաղաքացի տղային»՝ Հիսուսին:
- Արդյո՞ք նրանց վերաբերմունքը փոխվեց, երբ նա խոսեց նրանց հետ: Եթե՝ այո, ինչո՞ւ:

2. Չորս Ավետարանները պատմում են միևնույն պատմությունը թեթևակի տարբերություններով: Մեկը կարող է նշել մի մանրամասնություն, իսկ մյուսը՝ ոչ: Վերընթերցի՛ր **Մատթեոս 26.47-51** հատվածը և համեմատի՛ր այն **Ղուկաս 22.50-51-ի** հետ քո Աստվածաշնչում: Ի՞նչ մանրամասնություն է Ղուկասի Ավետարանը պարունակում, որը չկա Մատթեոսի մեջ:

- Ավետարանները պատկերում են շատ դրվագներ, որտեղ գտնում ենք Հիսուսին՝ աղոթքով Հոր հետ կապվելիս: **Մատթեոս 26.36-54** կարդացածդ հատվածում գտի՛ր տողեր, որոնք նշում են, թե Հիսուսը փնտրում էր Հոր օգնությունը, և գրի՛ր դրանք կողքի մագաղաթի թերթին:

- Սուրբ Գրքի Համաբարբառի օգնությամբ գտի՛ր երկու այլ հատվածներ, որոնք ցույց կտան Հիսուսին՝ աղոթքով Հորը դիմելիս: Գրի՛ր գտածիդ գրքի անունը, գլուխը և համարը: Սեփական բառերովդ գրի՛ր, թե ինչ արեց Հիսուսը:

.....

.....

.....

.....

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՉԱՐՉԱՐԱՆՔԸ ԵՎ ՀԱՎԱՏՔԸ

Երբ ուսումնասիրում ենք Հին Կտակարանը և Սաղմոսները, հանդիպում ենք Աստծուն հավատացող շատ մարդկանց խոսքերին, ովքեր տառապել են: Այդ խոսքերը հիշեցնում են մեզ, որ մենք միայնակ չենք մեր տառապանքի և հուսահատության պահերին: Այսպիսով նախապատրաստվում ենք նաև Փրկիչ Հիսուս Քրիստոսի չարչարանքներին, որի մասին խոսվում և որին սպասում էին Հին Կտակարանում:

- Ահա որոշ քաղվածքներ 55-րդ Սաղմոսից: Փոխասացությա՛մբ կարդա սաղմոսի հատվածները և քննարկի՛ր հետևյալ հարցումները քո խմբով:

Բայց նա, որ նախատում է ինձ, թշնամի չէ, այլապես դյուրությամբ կտանեի. նա , որ արհամարհում է ինձ, ոսոխս չէ, այլապես հեռու պիտի մնայի:.

Բայց դո՛ւ ես, ո՞վ մարդ, իմ հավասարը, դո՛ւ, իմ ընկերը, իմ մտերիմը, որի հետ մենք քաղցր-անուշ զրույց էինք անում և միասին Աստծո տունն էինք գնում:

Բայց ես Աստծուն եմ օգնության կանչում, և ինքը՝ ՏԵՐԸ, կփրկի մեզ:
Երեկոյան, արշալույսին թե կեսօրին, բողոքում եմ և հեծեծում, և Տերը լսում է իմ կանչը:

Ընկերս հարվածեց իր բարեկամներին խախտեց իր դաշինքը:
Նրա բերանից մեղր ու կարագ է թափվում, բայց սրտի մեջ ոխ ունի:
Խոսքերը յուղի պես փափուկ են, սակայն սուր են դաշույնի պես:

Քո հոգսերը ՏԻՐՈՋԸ հանձնիր, և ինքը հոգ կտանի քո մասին. բոլորովին չի թողնի, որ արդարը սասանվի:

1. Քո կարծիքով ի՞նչ էր պատահել Դավիթ արքային՝ հիշյալ տողերի հեղինակին, որ ստիպել էր նրան գրելու այս կերպ:
2. Ի՞նչ նմանօրինակ փորձառություններ կարող են քո խմբի անդամներն ունեցած լինել:
3. Հեղինակն ինչպե՞ս է օգնություն և մխիթարություն գտնում:
4. Ինչպե՞ս ես դու օգնություն և մխիթարություն գտնում անհանգստացած պահերին: Արդյոք Սաղմոսը նոր գաղափար տալի՞ս է քեզ ինչպես վարվելու համար:
5. Սաղմոսի խոսքերն ինչպե՞ս են հիշեցնում քեզ Հիսուսի հետ կատարվելիք բաների մասին:

- Ինքնուրույն աշխատելիս և կյանքիդ մասին մտածելիս ներկայացրո՛ւ «Քո հոգսերը...» սկսվող վերջին տողը քո սեփական բառերով և պատրա՛ստ եղիր մտքերդ կիսելու դասարանի մնացյալ աշակերտների հետ:

ՀԻՇԵՆՔ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՏԱՌԱՊԵԼ ԵՆ

Սուրբ Պատարագի ընթացքում, երբ պատարագիչ քահանան նվիրագործում է գինին, մենք հիշատակում ենք Հիսուս Քրիստոսի չարչարանքները: Ապա քահանան արտասանում է հետևյալ աղոթքը.

Եվ հիմա մենք ևս, ով Տեր, ըստ այդ պատվերի մատուցում ենք Քո Միածին Որդու փրկական Մարմնի և Արյան խորհուրդը, հիշում ենք մեզ համար իր կրած փրկագործ չարչարանքները, կենսատու Խաչելությունը, երեքօրյա Թաղումը, երանելի Հարությունը, աստվածապես երկինք Համբարձվելը, Քո աջ կողմում նստելը, ով Հայր, և իր ահավոր և փառավորյալ երկրորդ գալուստը դավանում ենք և օրհնում:

Եվ այս ընծաները, որ արդեն Քոնն են, Քեզ ենք մատուցում բոլորի կողմից և բոլորի համար:

Այս աղոթքը վստահություն է ներշնչում մեզ՝ հավատացյալներիս, որ Քրիստոսի չարչարանքների միջոցով մենք խնդրենք մեր Տիրոջ պահպանությունը և խնամքը բոլոր նրանց համար, ովքեր այս կյանքում տարբեր ցավերով են տառապում: Սբ Պատարագի ընթացքում, երբ ժողովուրդը երգում է «Հոգի Աստծո» մեղեդին, քահանան աչքերը հառած սուրբ ընծաներին ծածկաբար արտասանում է բարեխոսական հետևյալ աղոթքը.

Սրա միջոցով սեր, հաստատություն և բաղձալի խաղաղություն շնորհի՛ր ամբողջ աշխարհին, Սուրբ Եկեղեցուն և բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, քահանաներին, սարկավագներին, պետությունների ղեկավարներին, ժողովուրդներին, ճամփորդներին, ծովագնացներին, օդանավագնացներին, բանտարկվածներին, աշխատավորներին և չարի դեմ պայքարողներին:

Սրա միջոցով շնորհի՛ր բարեխառն օդ, անդաստաններին պտղաբերություն և շուտափույթ ապաքինում զանազան հիվանդություններով տառապողներին:

Սրա միջոցով հավիտենական հանգիստ պարգևի՛ր կանխապես Քրիստոսով ննջեցյալներին նախահայրերին, հայրապետներին, մարգարեներին, առաքյալներին, մարտիրոսներին, եպիսկոպոսներին, քահանաներին, սարկավագներին և Սուրբ Եկեղեցու համայն նվիրապետությանը, ինչպես նաև աշխարհական դասից հավատքով վախճանված բոլոր տղամարդկանց և կանանց:

- Խաչի չորս թևերի վրա գրի՛ր այն մարդկանց մասին, ովքեր գտնվում են Սբ Բարսեղի աղոթքում նկարագրած իրավիճակում: Այնուհետև քո խմբի հետ գրի՛ր մի կարճ աղոթք՝ խնդրելով Աստծո օրհնությունը այդպիսի մարդկանց բարեկեցության համար:

ԵՐԳԵՆՔ ՄԵՐ ՑԱՎԸ

Ահա մի շարական, որը երգվում է Ավագ Հինգշաբթի օրվա Երեկոյան ժամերգության ընթացքում: Ինչպե՞ս է շարականում ներկայացվում Հիսուսի ձերբակալությունը և մատնիչ Հուդայի կերպարը:

Արծաթսիրության մոլությամբ պարված Հուդան երեսուն արծաթով մատնեց իր մեծ Վարդապետին:

«Ում որ համբուրեմ,- ասում է,- նրան կբռնեք». ո՜վ համբույր նենգության, նշան և առիթ մահվան:

Ասպվածային Սուրբ Հոգին լքեց նրան և սատանային որպես զգեստ հագավ:

Այն գիշերը, երբ խաչի մահվան մատնվեց մեր Փրկիչը, ելավ Ձիթենյաց լեռը և աղոթելով ասում էր. «Հա՛յր, հեռացրո՛ւ ինձնից այս բաժակը»:

ՕՐՀ. «Ք Ձ»



ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Մեզ համար Հիսուսի կրած չարչարանքների լույսի ներքո ապավինելով Հայր Աստծո օգնությանը՝ ինչպե՞ս կընդունեիր կյանքի դժվարությունները, որոնք գուցե հարուցեին մեծ կամ փոքր տառապանքներ:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասը նվիրված էր Հիսուս Քրիստոսի չարչարանքներին, ինչպես նկարագրված է Հավատամքի մեջ: Եվ նույնիսկ տառապանքի մեջ Հիսուսն աղոթքով կապված էր իր Հոր հետ:

Ձեր ընտանիքով զրուցեք մարդկանց որոշակի օրինակների շուրջ, ովքեր տառապել են, բայց պահել իրենց հավատքն առ Աստված: Դրանք կարող են լինել ձեր ճանաչած մարդիկ, կամ մարդիկ, որոնց մասին լսել եք, կամ էլ Եկեղեցու սուրբերն ու առաջնորդները:

Մտածեք եղանակներ, որոնցով կկարողանաք օգնել տառապող մարդկանց՝ դիցուք որոշ ծառայություն մատուցելով կամ դրամական օժանդակություն հանգանակելով և հատկապես աղոթելով նրանց համար:

16. ԽԱՉՎԵՑ ԵՎ ԹԱՂՎԵՑ

«Տե՛ր, հիշի՛ր ինձ, երբ գաս քո թագավորությամբ»:

Ղուկաս 23.42

Հայտնագործենք

Մեզանից շատերը հաճախ են ենթարկվում նսեմացման: Երբ մեկը ծաղրում է մեզ, երբ մարդկանցով լի սենյակ մտնելիս ճզմվում ենք, երբ բառը սխալ արտասանելիս մեկն անմիջապես ուղղում է մեզ. ահա այսպիսի բաները կարող են նվաստացման պատճառ դառնալ:

Սակայն ամեն օր մեր աշխարհում մարդիկ համարձակ կերպով շատ ավելի սարսափելի բաներ են անում իրենց նմանների հանդեպ: Մենք լսում ենք և կարդում այդպիսի դեպքերի մասին, իսկ որոշ ժամանակ անց դրանք համարյա սովորական են դառնում մեզ համար:

Պատերազմները, բնական աղետները և այլ նման տեսակի դեպքեր երբեմն չարիք են ծնում մարդկանց մեջ, որոնց հետևանքով մարդիկ սկսում են թշնամանքով վերաբերվել միմյանց հանդեպ:

Հին աշխարհում

Հռոմում խաչի մահվան էին դատապարտում ծանր հանցագործներին: Դա համարվում էր ոչ միայն չափազանց տանջալի, այլև անարգալի ու նվաստացնող մահապատիժ:

■ Քո կարծիքով՝ ինչո՞ւ էր Հռոմեական կայսրությունը կիրառում հետևյալ պատիժը ծանր հանցագործների նկատմամբ: Ներքևում գրի՛ր մտածումներդ.

.....

.....

.....

■ Ինչպիսի՞ դեպքերի մասին ես լսել կամ կարդացել, որոնք թերևս չարիք են սերմանել մարդկանց մեջ: Ինչպե՞ս կամ ինչո՞ւ են մարդիկ վիրավորում կամ նվաստացնում մյուսներին: Գրի՛ր քո մտածումները երկրագնդի դատարկ տողերի վրա:

Կարդա՛ Աստվածաշնչի պատմությունը և տե՛ս, թե ինչպես Հիսուսը կրեց ամենատանջալի և ամենանվաստացնող պատիժը, որ անհնար էր տանել:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ՀԻՍՈՒՍԸ ԽԱՉՎԵՑ

Ղուկաս 23.32-46, Մատթեոս 27.46

Մենք հաճախ ամբողջությամբ չենք պատկերացնում Հիսուս Քրիստոսի կրած նվաստացումները և խաչի մահվան անտանելի տառապանքները: Եվ որ ամենակարևորն է՝ մահվան էր դատապարտվում ոչ թե մեզ նման հողեղեն մի արարած, այլ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, ամեն ինչի Արարիչը և Տերը: Նա խաչ բարձրացավ այն միակ պատճառով, որ մեկընդմիշտ հաղթի մահվանը, որի իշխանության տակ էինք ամենքս՝ իր սիրելի արարածները:



Երկու ուրիշ չարագործների էլ բերեցին, որպեսզի սպանվեն Հիսուսի հետ: Երբ հասան Գանգ կոչված վայրը, այնտեղ խաչեցին Հիսուսին և երկու չարագործներին, մեկին՝ Հիսուսի աջ կողմում, մյուսին՝ ձախ կողմում:

Հիսուսն ասաց.

- Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ի՞նչ են անում:

Ապա վիճակ գցելով՝ զինվորները նրա զգեստները բաժանեցին իրենց մեջ: Ժողովուրդը կանգնած դիտում էր, մինչ իշխանները նրանց հետ միասին ծաղրում էին նրան՝ ասելով.

- Ուրիշներին ազատեց, թող ինքն իրեն էլ ազատի, եթե իսկապես ինքն է Քրիստոսը՝ Աստծո ընտրյալ Որդին:

Զինվորներն էլ ծաղրում էին նրան. գալիս էին նրա դիմաց, քացախ էին տալիս և ասում.

- Եթե հրեաների թագավորն ես, ազատի՛ր ինքդ քեզ:

Նրա խաչի վրա մի գրություն էլ կար հունարեն, լատիներեն և եբրայերեն գրերով. «Սա է հրեաների թագավորը»: Խաչից կախված չարագործներից մեկը նախատում էր նրան՝ ասելով.

- Դու չե՞ս Քրիստոսը, ազատի՛ր թե՛ ինքդ քեզ և թե՛ մեզ:

Բայց մյուս չարագործը սաստեց նրան և ասաց.

- Աստծուց չե՞ս վախենում, դու, որ նույն պատիժն ես կրում: Մեր պատիժն իրավացի է, որովհետև մենք մեր արածի արժանի հատուցումն ենք ստանում, մինչդեռ սա ոչ մի վատ բան չի արել:

Եվ ապա ասաց Հիսուսին.

- Տե՛ր, հիշի՛ր ինձ, երբ գաս քո թագավորությամբ:

Հիսուսը ասաց նրան.

- Վստա՛հ եղիր, այսօր ինձ հետ դրախտում կլինես:

Գրեթե կեսօր էր, երբ արևը խավարեց, և ամբողջ երկիրը խավարի մեջ մնաց մինչև ժամը երեքը: Տաճարի վարագույրը մեջտեղից պատռվեց:

Ժամը երեքի մոտ Հիսուսը բարձրաձայն աղաղակեց՝ ասելով.

- Էլի՛, Էլի՛, լամա սաբաքթանի, որ նշանակում է. «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ»:

Այն ժամանակ Հիսուսը բարձրաձայն ասաց.

- Հա՛յր, քո ձեռքերի մեջ եմ ավանդում իմ հոգին:

Այս խոսքն ասաց ու հոգին ավանդեց:

Քննենք պատմությունը

Մենք գիտենք, որ Հին Կտակարանը նախապատրաստում է մեզ Հիսուս Քրիստոսի գալստյանը: Սաղմոսներից մեկը, հատկապես, նախապատրաստում է մեզ Տիրոջ խաչելությանը և խաչի վրա կրած չարչարանքներին: Հիսուսն արտասանեց այս սաղմոսը խաչի վրա:

- Փոխասացությամբ կարդա՛ 22-րդ *Սաղմոսը* ուսուցչի ցուցումների համաձայն: Ապա կրկի՛ն կարդա սաղմոսը և գտի՛ր այն բառերն ու տողերը, որոնք պատասխանում են հետևյալ հարցերին, և քննարկի՛ր դրանք քո խմբի հետ.

  1. Ներքևի տողերի վրա գրի՛ր այդ սաղմոսի այն համարները, որ Հիսուսը բարձրաձայն արտասանեց խաչի վրա՝ ցույց տալով, որ ինքը հասկանում է մարդկային տառապանքները և զգացումները:

  .....

  .....

  .....

  2. Ո՞ր բառերն են ցույց տալիս, թե Հիսուսն ապավինում էր Աստծուն:
  3. Ո՞ր բառերն են նկարագրում նրա տառապանքները խաչի վրա:
  4. Ո՞ր բառերն են մասնավորապես նկարագրում զինվորների արածը:

- Քո խմբով ընթերցի՛ր հանձնարարված ավետարանական հատվածը: Ավետարանները ներկայացնում են մեզ այն մարդկանց, ովքեր ներկա էին Հիսուսի խաչելության, մահվան և թաղման պահերին: Տրված հատվածը միասին կարդալուց հետո գրատախտակի վրա լրացրո՛ւ ձեր հատվածից քաղված երկու անուններ:

Հովհաննես 19.23

Մարկոս 15.39

Մատթեոս 27.45-47

Հովհաննես 19.5

Մատթեոս 27.52

Մարկոս 15.21

Ղուկաս 23.50-56

Ղուկաս 23.8

Բառարան

ԳԱՆԳ՝
վերաբերում է Գողգոթայի բարձունքին, որտեղ ի կատար էին ածվում մահապատիժները:

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԻՆՉՈ՞Ւ ՄԱՀԱՑԱՎ ՀԻՍՈՒՍԸ

Ավագ Ուրբաթի և Ավագ Շաբաթվա եկեղեցական արարողությունները ներկայացնում են, թե ինչու Հիսուս Քրիստոսը մահացավ: Ավագ Ուրբաթի ժամերգությունների ընթացքում մենք քայլ առ քայլ վերապրում ենք Քրիստոսի հետ նրա կյանքի վերջին բոլոր պահերը՝ իր ձերբակալության և հարցաքննության մասին աշակերտներին տված վերջին կանխասացությունները, Պետրոսի ուրանալը, երկու ավազակների հետ խաչվելը, մոր հանդեպ ցուցաբերած հոգատարությունը և նորափոր գերեզմանում թաղվելը: Մեզ հետաքրքրող հարցումը հետևյալն է. արդյոք մենք կնմանվենք Հուդայի՞ն, ով մատնեց Տիրոջը, թե՞ ավազակին, ով խաչի վրա Հիսուսին խոստովանեց որպես Տեր և ցանկացավ լինել նրա հետ:

Ավագ Շաբաթը կապակցում է Ավագ Ուրբաթը Զատկին: Այդ օրը մենք ականատես ենք լինում «մահվան մահին» և դժոխքի պարտությանը: Հիսուսն իջնում է դժոխք և պատերազմում սատանայի դեմ: Տերը հաղթում է և հարություն առնում, որպեսզի մենք բոլորս էլ կարողանանք մեկ օր հարություն առնել նրա հետ հավիտենական կյանքի համար:

Զատկական շարականները, գանձերն ու տաղերը լավագույնս նկարագրում են մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Սուրբ Հարության խորհուրդն ու նշանակությունը: Ահա Սբ Ներսես Շնորհալի Հայրապետի կողմից հորինված «Նոր ծաղիկ» Հարության տաղից մի հատված, որը երգվում է Հարության կիրակիների Սուրբ Պատարագի ընթացքում իբրև մեղեդի: Տաղում նկարագրվում է, որ ինչպես է Հարուցյալ Քրիստոսն իջնում դժոխք և ազատում գերեվարված բոլոր հոգիներին:

Քրիստոսի էջքը դժոխք

Հարյավ խաչված Տեր Հիսուսը,
Կենդանացնողը մեռածների,
Նա դժոխքի դռները խորտակեց
Եվ մահվան բռնությունը լուծեց,
Մահվամբ ջախջախեց վիշապի գլուխը,
Նրա մահը ճաշակել տվեց,
Ազատեց նրանից գերված հոգիներին,
Ավարն առած ելավ բարձունք,
Բոլոր մարդկանց պարգևներ է բաշխում:
Եկե՛ք, տեսե՛ք գերեզմանը
Դատարկ ապտվածային մարմնից,
Ավետի՛ս տվեք
մահկանացուներին,
Թե՝ մահը մեռավ,
կյանքը հարյավ:

- Հիշյալ տողերը բանաստեղծական են հորինված: Ընտրի՛ր մի հատված և վերաշարադրի՛ր միտքը քո հասկացած ձևով:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

ՀԻՇԱՏԱԿԵԼԻ ՄԱՐԴԻԿ

Աշակերտները Հիսուս Քրիստոսի հետ են եղել մի քանի տարի: Նրանք ճամփորդել են և ապրել Տիրոջ հետ, լսել են նրա ուսուցումներն ու պատգամները, ականատես եղել իրենց Վարդապետի ձեռքով շատերի բժշկվելուն և մխիթարվելուն: Աշակերտները գիտեին, որ նա սիրում է իրենց: Մինչդեռ, երբ Տերն անցնում էր մեծ չարչարանքների և դանդաղ սպառնացող մահվան միջով, նրանք լքեցին նրան ու թաքնվեցին: Պետրոս առաքյալը նույնիսկ ուրացավ՝ ասելով, թե բնավ չի ճանաչում նրան: Պետրոսը հեռվում կանգնած դիտում էր, թե ինչպես են հարցաքննում Հիսուսին ատյանի առաջ: Երբ երիտասարդ աղախինը ճանաչեց նրան իբրև Հիսուսի ընկերներից մեկը, նա երեք անգամ ասաց, որ նույնիսկ չի ճանաչում Հիսուսին: Առաքյալներից ոչ ոք չէր ուզում խընդիրների մեջ ընկնել՝ մեղադրվելով այս Մարդու հետ կապ ունենալու համար, ով այդքան տառապում էր:

Առաքյալներից բոլորն էլ լավ գործ արեցին Հիսուսի հարությունից և համբարձումից հետո: Նրանք հեռու տեղեր գնացին և տառապանքներ կրեցին, իսկ նրանցից շատերն էլ մահվան դատապարտվեցին Ավետարանը քարոզելու համար:

Բայց կար մեկը, ով այն պահին, երբ բոլորը չափազանց վախեցած էին որևէ քայլ ձեռնարկելուց, մեծ քաջություն և սեր դրսևորեց Տիրոջ հանդեպ: Նրա անունը Հովսեփ Արեմաթացի էր: Նա հրեական ժողովի շատ հարգված անդամ էր ու նաև Հիսուսի գաղտնի հետևորդներից: Երբ ժողովը քվեարկությամբ որոշեց ձերբակալել Հիսուսին, նա ձեռնպահ մնաց կողմ քվեարկելուց:

Հիսուսի մահից հետո Հովսեփը մեջտեղ ելավ և խնդրեց Հիսուսի մարմինը: Նա թաղեց Հիսուսին նորափոր գերեզմանում:

Ահա Սբ Հովսեփ Արեմաթացուն նվիրված շարականը մի հատված, որը երգվում է եկեղեցում Ավագ Ուրբաթ օրը, Հիսուսի թաղման կարգի ընթացքում:

Ճշմարիտ և արդար Հովսեփը Պիղատոսից խնդրում էր բոլորի պարգևատուին, որն իբրև անկողոպտելի զանձ տրվեց մեզ:

Լույսը որպես թիկնոց հագնողի Տերունական մարմինը սուրբ կտավով փաթաթվեց, ով մեզ անկողոպտելի զգեստ հագցրեց:

Նա, որ նախասպեղծին կենդանացրեց և մարդկանց մահվան կապանքներն արձակեց, նորափոր վեմի մեջ դրվեց և մատանիով կնքվեց:

1. Ո՞րն է ամենակարևոր տարբերությունը Պետրոսի և Հովսեփի արածների միջև: Կա՞ արդյոք որևէ բան նրանց մեջ, որ նույնն է:
2. Քո կարծիքով ինչո՞ւ է Եկեղեցին Հովսեփին «ճշմարիտ և արդար» կոչում:

ՁԵՐ ՏԵՏՐԱԿՈՒՄ

Ընտրի՛ր հիշյալ հարցումներից մեկը և գրի՛ր դրա մասին:

ԵՐԳԵՆՔ ՇԱՐԱԿԱՆԸ

Ճշմարիտ և արդար Հովսեփը Պիղատոսից խնդրում էր բոլորի պարգևատուին, որն իբրև անկողոպտելի գանձ տրվեց մեզ:

Լույսը որպես թիկնոց հագնողի Տերունական մարմինը սուրբ կտավով փաթաթվեց, ով մեզ անկողոպտելի զգեստ հագցրեց:

Նա, որ նախաստեղծին կենդանացրեց և մարդկանց մահվան կապանքներն արձակեց, նորափոր վեմի մեջ դրվեց և մատանիով կնքվեց:

ՏԷՐ ՅԵՐԿ. «ԳՁ»



ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասը ձեր զավակին մտածելու առիթ տվեց ավելի խորանալու Քրիստոսի խաչելության և թաղման նշանակության մեջ, թե ինչու մահացավ (մեզ համար), ովքե՞ր էին ներկա նրա չարչարանքների ժամանակ և թե ինչպես են Հին Կտակարանի մարգարեությունները նախապատրաստում մեզ Տիրոջ կյանքի և չարչարանքի դեպքերին:

Այս ամենի մեջ կարևոր է խաչի պարագան: Այն սկզբում ներկայացվում է որպես պատժի ամենադաժան գործիք, իսկ Հիսուսի խաչելությունից հետո այն դարձավ Քրիստոսի հաղթանակը մահվան դեմ և արդյունքում՝ մեր փրկությունը: Ընտանիքով զրուցե՛ք նրա մասին, թե ինչ է նշանակում խաչակնքվել և այդպիսով մեզ «նշանել» որպես Հիսուսի հետևորդ: Ներկայացրե՛ք խաչի հետ կապված ազգային սովորույթները (օրինակ՝ խաչանիշ հաց կամ կարկանդակներ թխել, պահպանության համար խաչով օրհնել ճամփորդության մեկնելուց կամ կարևոր մի գործ սկսելուց առաջ, և այլն):

Միասի՛ն ուսումնասիրեք տարբեր ոճերի խաչեր, որ գուցե ընտանիքի անդամներով կրում եք կամ ունեք տանը կախված: Կարելի է դրանց ծանոթանալ նաև գրքերից և համացանցի տարբեր կայքէջերից: Արտասանե՛ք Տերունական աղոթքը միասին՝ սկզբում և վերջում խաչակնքվելով:

17· ԵՐՐՈՐԴ ՕՐԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՎ

«Ես տեսա՛ Տիրոջը»:

Հմմտ Հովհաննես 20.18

Հայտնագործենք

ՄԵԾ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ

Ենթադրենք՝ ընկերներիցդ մեկը վազքով մոտենում է քեզ և մեծ ոգևորությամբ ասում. «Եթե իմանաս ինչ զարմանահրաշ բան է տեղի ունեցել, Աստվա՛ծ իմ, անհավատալի է»:

Ինչպիսի՞ն կլիներ քո հակազդեցությունը:

- Հետաքրքրություն
- Զգուշավորություն՝ արդյոք դա լա՞վ է, թե՝ վատ
- Լավատեսական սպասում
- Հետաքրքրություն, եթե արդյոք ընկերդ առաջին է ասել քեզ
- Զգացում, որ պատահածն ինչ էլ որ լինի, միանշանակ լավն է, քանի որ ընկերդ այնքան էր ոգևորված դրանից

■ Ներքևում գրի՛ր կամ նկարի՛ր այն ժամանակի մասին, երբ «մեծ նորություն» ես լսել:

Կարդա՛ Աստվածաշնչի պատմությունը և տե՛ս, թե ինչպես տարբեր մարդիկ արձագանքեցին Հիսուս Քրիստոսի հարության «մեծ նորությանը»:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ՀԻՍՈՒՍԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Է ԱՌՆՈՒՄ ՄԵՌԵԼՆԵՐԻՑ

Հովհաննես 20

Կիրակի օրը՝ արշալույսին, երբ տակավին մութ էր, Մարիամ Մագդաղենացին գնաց գերեզման և տեսավ, որ գերեզմանի մուտքին դրված քարը վերցված է: Ուստի վազելով գնաց Սիմոն Պետրոսի և մյուս աշակերտի մոտ, որին Հիսուսը սիրում էր, և ասաց նրանց.

- Տիրոջը վերցրել են գերեզմանից, և չգիտենք, թե որտե՞ղ են դրել նրան:

Այս խոսքի վրա Պետրոսը և մյուս աշակերտը ելան և ճանապարհ ընկան դեպի գերեզման: Երկուսով միասին վազում էին, բայց մյուս աշակերտը, ավելի արագ վազելով, Պետրոսից առաջ հասավ գերեզման և կռանալով տեսավ, որ միայն կտավներ էին այնտեղ, սակայն ներս չմտավ: Հասավ նաև Սիմոն Պետրոսը, որ նրա հետևից էր գալիս, ներս մտավ և տեսավ, որ կտավներն այնտեղ էին, իսկ վարշամակը, որ նրա գլխին էր, մյուս կտավների հետ չէր, այլ ծալված և առանձին մի կողմ էր դրված: Այն ժամանակ մյուս աշակերտն էլ, որ ավելի առաջ էր հասել գերեզման, ներս մտավ, տեսավ և հավատաց. քանի որ դեռ չէին հասկացել Սուրբ Գրքի այն խոսքը, որի համաձայն նա պետք է մեռելներից հարություն առներ:

Ապա աշակերտները վերադառնալով հավաքվեցին միմյանց մոտ:

Իսկ Մարիամը դրսում, գերեզմանի մոտ կանգնած, լաց էր լինում: Մինչ նա լալիս էր, կռացավ, նայեց գերեզմանից ներս և տեսավ սպիտակ զգեստներ հագած երկու հրեշտակների, որոնք նստել էին այնտեղ, որտեղ նախապես Հիսուսի մարմինն էր դրված, մեկը՝ գլխի կողմը, մյուսը՝ ոտքերի: Նրանք ասացին նրան.

- Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս:

Նա պատասխանեց.

- Որովհետև իմ Տիրոջը վերցրել են գերեզմանից, և չգիտեմ, թե ո՞ւր են դրել նրան:

Այս ասելուց հետո շրջվեց դեպի հետ և տեսավ Հիսուսին, որ կանգնած էր, բայց նա չգիտեր, թե Հիսուսն է:

- Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս, ո՞ւմ ես փնտրում,- հարցրեց Հիսուսը:

Մարիամը կարծեց, թե պարտիզպանն է, ուստի ասաց.

- Տե՛ր, եթե դու ես վերցրել նրան, ասա՛ ինձ՝ որտե՞ղ ես դրել, որպեսզի գնամ նրան վերցնեմ:

Հիսուսն ասաց նրան:

- Մարիա՛մ:

Նա դարձավ և եբրայերեն նրան ասաց.

- Ռաբբունի՛,- որ նշանակում է «Վարդապետ»:

- Մի՛ դիպչիր ինձ,- ասաց Հիսուսը նրան,- որովհետև դեռ Հորս մոտ չեմ բարձրացել: Բայց դու գնա՛ իմ եղբայրների մոտ և ասա՛ նրանց, որ ես բարձրանում եմ իմ Հոր և ձեր Հոր մոտ, իմ Աստծո և ձեր Աստծո մոտ:

Մարիամ Մագդաղենացին գնաց և աշակերտներին պատմեց, որ ինքը տեսել է Տիրոջը և հայտնեց այն, ինչ նա ասել էր իրեն:

Այդ կիրակի օրը՝ երեկոյան, երբ աշակերտները միասին հավաքվել էին և դռներն էլ փակել՝ վախենալով հրեա ղեկավարներից, Հիսուսը եկավ, կանգնեց նրանց մեջտեղը և ասաց նրանց.

- Ողջո՛ւյն ձեզ:

Եվ ողջունելուց հետո նրանց ցույց տվեց իր ձեռքերն ու կողը: Աշակերտներն ուրախացան՝ տեսնելով իրենց Տիրոջը: Հիսուսը դարձյալ ասաց նրանց.

- Ողջո՛ւյն ձեզ: Ինչպես իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ուղարկում եմ ձեզ:

Ապա փչեց նրանց վրա և ասաց.

- Առե՛ք Սուրբ Հոգին. եթե մեկին ներեք իր մեղքերը, թող ներված լինեն, և եթե չներեք մեկի մեղքերը, թող ներված չլինեն:

Տասներկու աշակերտներից մեկը՝ Թովմասը, որ Երկվորյակ էր կոչվում, Հիսուսի եկած ժամանակ նրանց հետ չէր: Մյուս աշակերտները նրան ասացին.

- Մենք տեսա՛նք Տիրոջը:

Թովմասը նրանց ասաց.

- Մինչև մեխերի հետքերը չտեսնեմ նրա ձեռքերի մեջ և մատներս չդնեմ մեխերի տեղերն ու ձեռքս չդիպցնեմ նրա կողին, չեմ հավատա:

Ութ օր հետո աշակերտները դարձյալ հավաքվել էին ներսում, և Թովմասն էլ նրանց հետ էր: Թեև դռները փակ էին, Հիսուսը եկավ և կանգնեց նրանց մեջտեղը և ասաց.

- Ողջո՛ւյն ձեզ:

Ապա ասաց Թովմասին.

- Բե՛ր քո մատը, դի՛ր այստեղ և տե՛ս իմ ձեռքերը. բե՛ր քո ձեռքը և դիպցրո՛ւ իմ կողին. անհավատ մի՛ եղիր, այլ հավատացյալ:

Թովմասը բացականչեց:

- Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ:

Հիսուսն ասաց նրան.

- Դու հավատացիր, որովհետև ինձ տեսար, չէ՞. երանի նրանց, որոնք հավատում են առանց ինձ տեսնելու:

Բառարան

ՌԱԲԲՈՒՆԻ՝

նշանակում է ուսուցիչ: Հրեաներն այս կոչումը գործածում էին միայն Աստծուն ուղղված իրենց աղոթքներում:

Քննենք Սուրբ Գիրքը

- Ներքևի գծապատկերի գծիկների դիմաց գրի՛ր բառեր կամ կապակցություններ, որոնք կարտահայտեն քո ընկալումները Սուրբ Հարության վերաբերյալ:



- Ներքևում նշված են որոշ հղումներ, որոնք պատմում են Հարության մասին: Կարդա՛ այդ հատվածները: Եթե դրանք նոր գաղափարներ կհայտնեն քեզ, ապա այդ բառերը հիմա ավելացրո՛ւ գծապատկերի վրա:

Ղուկաս 14.12-14
Ղուկաս 24.33-35
Հովհաննես 11.25-26
Գործք առաքելոց 17.32
Հռոմեացիներին 6.3-5

- Ընտրի՛ր գծապատկերին գրած քո բառերից կամ կապակցություններից մեկը և ներքևի տողերին գրի՛ր քո ինքնուրույն գաղափարներն ու մտածումները Սուրբ Հարության մասին:

.....

.....

.....

.....

.....

.....

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՄԵՆՔ ՏՈՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Մեր Տիրոջ Հարությունը կամ Զատիկը Եկեղեցու մեծագույն տոնն է: Այն նշվում մեծ ուրախությամբ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունից ի վեր, երբ մեր Տերը ջախջախեց մահը խաչի վրա իր մահվամբ:

Ժայռի մեջ փորված Քրիստոսի գերեզմանն այն վայրն է, որտեղից Տեր Հիսուսի՝ Աշխարհի Լույսի Սուրբ Հարության լուսապայծառ ճառագայթները ծագեցին ամբողջ աշխարհին: Տիրոջ գերեզմանի վրա կառուցված եկեղեցին ամենանվիրական վայրն է, ուր քրիստոնյա ուխտավորները գալիս են երկրպագելու Հարուցյալ Քրիստոսին:

Զատկի կիրակիի նախընթաց կեսգիշերին Երուսաղեմի հայոց և հունաց պատրիարքները մտնում են Քրիստոսի գերեզման, մինչ հավատացյալ ուխտավորները խմբված սպասում են լիովին մութ տաճարում: Երբ պատրիարք հայրերը դուրս են գալիս թափուր գերեզմանից Հարության լույսը խորհրդանշող մոմերով, հավատացյալները մոտենում են նրանց և վառում իրենց մոմերը: Այդպես լուսավորվում է ամբողջ եկեղեցին, և երգվում է Սբ Հարության շարականը:

Քրիստոս հարություն առավ մեռելներից, մահվամբ մահին հաղթեց, և իր հարությամբ մեզ կյանք պարգևեց:

■ Նայի՛ր Սբ Հարության սրբապատկերին, որը խորհրդանշում է նաև Քրիստոսի էջքը դժոխք: Տե՛ս 16-րդ դասի Կյանքը Եկեղեցում բաժինը: Նկարագրի՛ր սրբանկարի մասերը, որոնք համապատասխանում են շարականի հետևյալ մասերին:

✚ մահվամբ մահին հաղթեց

✚ իր հարությամբ մեզ կյանք պարգևեց

.....

.....

.....

.....

ԶԱՏԿԱԿԱՆ ԹԱՓՈՐԸ

Մեր Տիրոջ Հարությունը կամ Զատիկը Եկեղեցու մեծագույն տոնն է: Այն նշվում մեծ ուրախությամբ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունից ի վեր, երբ մեր Տերը ջախջախեց մահը խաչի վրա իր մահվամբ:

Սուրբ Հարության տոնի նախօրեին երեկոյան մատուցվում է Ճրագալույցի Սբ Պատարագ, որի ավարտին պատարագիչ քահանան սուրբ սեղանը սպասավորող սարկավագների ու դպիրների ուղեկցությամբ՝ մոմերով, բուրվառով, հարության պատկերով խաչվառով, քշոցներով ու ծնծղաներով հանդիսավոր թափոր կազմած իջնում է խորանից և ատյանում կատարվում է նախատոնակի արարողություն: Ավետարանի ընթերցումից հետո հանդիսապետ հոգևորականը «Այսօր հարյավ» և «Քրիստոս հարյավ» շարականների, տաղերի ու հոգևոր երգերի երգեցողության ներքո բուրվառով խնկարկում է եկեղեցում հավաքված հավատացյալներին՝ ավետելով Հիսուս Քրիստոսի Հարության լուրը: Վերջում հավատացյալները խորանի մոմից վառում են իրենց մոմերը և տանում իրենց տները՝ իբրև զատկական լույս:

Ավագ Շաբաթվա երեկոյան Ճրագալույցի արարողության ընթացքում մենք պայծառ վառում ենք եկեղեցու մոմերն ու ճրագները և միասին երգում *«Լուսավորեա Երուսաղեմ»* ԳՉ շարականը: Այն հիշեցնում է մեզ **Եսայի 60.1-3** հատվածը: Աստվածաշնչիդ մեջ գտի՛ր հիշյալ տողերը և դրանք համեմատի՛ր այս շարականի հետ:

Լուսավորվի՛ր Երուսաղեմ, քանզի հասել է քո լույսը. զարդարի՛ր քո ամրությունները. և Տիրոջ փառքը քո վրա կծագի:

Բառարան

ՍԻՈՆ՝
խորհրդանշում է Աստծո սուրբ լեռը Երուսաղեմում կամ Երուսաղեմն ինքնին: Փոխաբերական իմաստով այդպես է կոչվում եկեղեցին՝ Նոր Երուսաղեմը:

ԵՐԱՆԵԼԻ ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՆ ԳՐՈՒՄ Է ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներսես Լամբրոնացին (ավազանի անունը՝ Սմբատ) ծնվել է 1153թ.: Նա որդին էր Լամբրոնի բերդատեր, Հեթումյան իշխան Օշին Բ-ի և Սբ Ներսես Շնորհալու Շահան եղբոր դուստր Շահանդուխտ Պահլավունու: Առաջին ուսուցիչն ու դաստիրարակը եղել է մայրը, որից էլ սովորել է հունարեն: Սովորել է Սկևռայի վանքում, ապա Հռոմկլայի կաթողիկոսարանի բարձրագույն դպրոցում՝ Հայոց կաթողիկոսներ Գրիգոր Գ Պահլավունու և Սբ Ներսես Շնորհալու հովանավորությամբ: Վերջինս նրան 16-ամյա հասակում ձեռնադրում է կուսակրոն քահանա՝ տալով իր անունը: 1175թ. Գրիգոր Դ Տղա Հայրապետը Ներսեսին ձեռնադրում է Տարսոն քաղաքի արքեպիսկոպոս: Կյանքի վերջին տարիներին Լամբրոնացին պաշտոնավարել է Լևոն Բ Մեծագործի արքունիքում՝ որպես ատենադպիր, խորհրդատու և թարգմանիչ:

Ներսես Լամբրոնացին 12-րդ դարի 2-րդ կեսի Մերձավոր Արևելքի ամենահայտնի եկեղեցական գործիչներից է: Մասնակցել է 1178թ-ի Հռոմկլայի եկեղեցական ժողովին և նպաստել է Կիլիկյան Հայաստանի արտաքին գործերի կարգավորմանը և հոգևոր-մշակութային կյանքի վերելքին: Եղել է Հայ Եկեղեցու ինքնուրույնության և պետականության մեծ գաղափարախոսներից: Շնորհիվ իր ճարտասանական կարողության՝ հայ և օտար հեղինակները նրան համեմատել են Դեմոսթենեսի, Կիկերոնի, Հովհան Ոսկեբերանի և այլոց հետ: Երկար տարիներ ճգնել է Տավրոսի, Սեպուհ, Սև լեռների վանքերում, հռչակվել իր սրբակրոն վարքով և իմաստությամբ: Նրան անվանել են «երկրորդ Պողոս Տարսոնացի առաքյալ»: Հանկարծամահ է եղել քարոզի ժամին 1198թ.:

- Կարդա՛ Ներսես Լամբրոնացու խոսքը Հարության մասին: Քո խմբի հետ Աստվածաշնչում բացի՛ր **Ա Կր 15.20 և Եբ 2.9** համարները և գտի՛ր համանուն գաղափարները:

Աստվածաշունչը խոսում է Աստծո Խոսքի՝ իբրև մարդ չարչարվելու մասին, որպեսզի խոստովանվի, որ մեր փրկությունն Աստծով է իրականացել: Ինչպես Քրիստոսը, որի մարդկությունն անբաժանելի է աստվածությունից, մեռելների միջից հարություն առավ, այդպես էլ մենք ենք կյանքի նորոգություն ստանալու: Եվ քանի որ միշտ կենդանի է Հոր Ծնունդը, ննջեցյալների առաջին պտուղը, Իր մարմինը մահն ընդունող դարձրեց և ամենքի համար մահ ճաշակեց մարմնով: Նա, Ով չարչարանքի մեջ անչարչարելի է, Նույնը նաև մահվան մեջ էր կենդանի և թաղվելիս մահվան անենթակա, իսկ հարություն առնելով՝ մահվանն ու ապականությանը հաղթեց ու խափանեց: Նույն Ինքը հաջորդ անգամ Հոր փառքով գալու է՝ նորոգելու մեր ապականված բնությունը:

Խորհենք ու կիսենք մեր մտածումները

1. Ոմանք ասում են, թե միայն մեր հոգիներն են կարևոր: Մեր մարմինները նման են «պատյանների», որոնք բանտարկում են հոգուն, և դրանք պիտի ազատվեն հանդերձյալ կյանքում: Քրիստոսի Հարության օրինակով Ներսես Լամբրոնացու խոսքերն ի՞նչ են խրատում մեզ հոգու և մարմնի հարաբերության մասին:
2. Ո՞ր խոսքերն են նկարագրում, թե ինչպիսի՞ն պիտի լինի մեր գոյավիճակը Տիրոջ երկրորդ գալստյան ժամանակ՝ ըստ Ներսես Լամբրոնացու:

ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Ո՞րը կլիներ քո արձագանքը Ներսես Լամբրոնացու խոսքերին՝ կապված մեր հարության հետ: Ինչպե՞ս դա կփոխեր քո մոտեցումները կյանքում ուրախությունների ու պայքարների նկատմամբ: Գրի՛ր մտածումներիդ մասին:

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳՈՎ ՄԵՁԱՐԵՆՔ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Միասի՛ն երգենք Սուրբ Հարության Ալելուքի հետևյալ տները, որոնք երգվում են Գիշերային ժամերգության վերջում:

Հարյավ Աստված, և իր բոլոր թշնամիները ցրվեցին. նրան ատողները փախան իր ներկայությունից:

Տերը թագավորեց, վայելչություն հագավ, զորություն հագավ Տերն ու զորեվորվեց:

ԱԼԵԼՈՒՔ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ «ԲՁ»



ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասում կենտրոնական տեղ էր գրավում Հիսուսի Հարության և դրան հաջորդած երևումների նկարագրությունն ըստ Հովհաննեսի Ավետարանի: Աշակերտները ծանոթացան Զատկական թափորին, որի ավարտին հավատացյալները զատկական լույսը մոմերով տանում են իրենց բնակարանները: Շարականների, Հարության սրբապատկերի և եկեղեցու հայրերի գրվածքների ուսումնասիրությամբ աշակերտներին առիթ տրվեց մտորել Քրիստոսի Հարության նշանակության շուրջ, թե ինչ արժեք ունի այն բոլոր հավատացյալների համար:

Ինքներդ առիթներ ստեղծեք, որ ձեր զավակն ապրի իր սովորածը: Միասի՛ն հաճախեք եկեղեցի՝ մասնակցելով զատկական Սբ Պատարագի արարողությանը:

18. ՀԱՄԲԱՐՁՎԵՑ ԱՌ ՀԱՅՐ

«Հիսուսը երկինք համբարձվեց, և մի ամպ նրան ծածկեց նրանց տեսողությունից»:

Գործք առաքելոց 1.9

Հայտնագործենք

ԱԿՆԿԱԼԻՔ. ԻՆՉԻ՞ ԵՆՔ ՍՊԱՍՈՒՄ

Հիշո՞ւմ ես մի պահ քո կյանքում, երբ ստիպված ես եղել երկար սպասել որևէ կարևոր իրադարձության: Այդպիսին կարող էր լինել քո ծննդյան 16-րդ տարեդարձի խնջույքը կամ ուսուցչիդ կողմից հայտարարված ստուգողական քննությունը:

- Եթե պատրաստվեիր մասնակցել մի բանավեճի, ստորև նշված երկու հակադիր ակնկալիքներից ո՞ր մեկը կընտրեիր: Արձանագրի՛ր քո բանավեճի տեսակետը ներքևի տետրակի դատարկ էջերում:

1. Ավելի լավ է ունենալ երկար ժամանակ կարևոր մի իրադարձության սպասելու համար, որպեսզի կարողանանք նախապատրաստվել դրան:
2. Ավելի լավ է ունենալ կարճ ժամանակ կարևոր մի իրադարձության սպասելու համար, որովհետև չենք կարող այդքան համբերել և չմտածել դրա մասին:



Աստվածաշնչի հատվածում պարզի՛ր, թե ինչի էին սպասում առաքյալները, երբ Հիսուսը կրկին երևաց նրանց Հարությունից հետո:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՎ ՍՊԱՍՈՒՄ

Գործք առաքելոց 1.1-14

Հետևյալ հատվածները պատմում են մեզ այն հրաշալի դեպքերի մասին, թե ինչպես առաքյալներին պատվիրվեց սպասել ավելի հիասքանչ պարգևների:

Իմ առաջին գրքում, ո՛վ Թեոֆիլոս, գրեցի այն ամենի մասին, ինչ Հիսուսը կատարեց և սովորեցրեց սկզբից մինչև այն օրը, երբ Սուրբ Հոգու զորությամբ իր պատվերներն իր ընտրած առաքյալներին տալուց հետո երկինք վերացավ: Իր չարչարանքներին հաջորդող քառասուն օրերի ընթացքում նա քանիցս երևաց նրանց՝ շատ կերպերով ցույց տալով, թե ինքը ողջ է և խոսեց Աստծո արքայության մասին: Եվ մի առիթով, երբ նրանց հետ հաց էր ուտում, պատվիրեց նրանց ասելով.

- Երուսաղեմից մի՛ հեռացեք, սպասեցե՛ք, մինչև որ ստանամ Հոր խոստումը, որի մասին խոսեցի ձեզ հետ: Հովհաննեսը ջրով մկրտեց, բայց դուք մոտ օրերս պիտի մկրտվեք Սուրբ Հոգով:

Մի ուրիշ անգամ, երբ դարձյալ հավաքվել էին, առաքյալները հարցրին նրան.

- Տե՛ր, արդյոք հիմա՞ է ժամանակը, երբ վերականգնելու ես Իսրայելի թագավորությունը:

Հիսուսը պատասխանեց.

- Դուք չեք կարող իմանալ այն ժամերն ու ժամանակները, որ Հայրը որոշել է իր իշխանությամբ: Բայց երբ Սուրբ Հոգին իջնի ձեզ վրա, զորությամբ կլցվեք և իմ վկաները կլինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև աշխարհի ծայրամասերը:

Այս խոսքերից հետո, երբ նրանք դեռ նայում էին նրան, Հիսուսը երկինք համբարձվեց և մի ամպ նրան ծածկեց նրանց տեսողությունից: Եվ երբ առաքյալները, իրենց աչքերը հառած, նրա երկինք գնալն էին դիտում, ահա երկու սպիտակազգեստ մարդիկ երևացին նրանց և ասացին.



- Ով գալիլեացիներ, ինչո՞ւ եք կանգնել նայում: Այս Հիսուսը, որ երկինք վերացավ, մի օր դարձյալ կգա այնպես, ինչպես տեսաք նրա երկինք գնալը:

Ապա առաքյալները Ձիթենյաց լեռից վերադարձան Երուսաղեմ, որն այդ լեռից հեռու է գտնվում հազիվ մեկ կիլոմետր: Եկան քաղաք և գնացին այն վերնատունը, որտեղ մնում էին: Նրանք էին՝ Պետրոսն ու Հակոբոսը, Հովհաննեսն ու Անդրեասը, Փիլիպպոսն ու Թովմասը, Բարթուղիմեոսն ու Մատթեոսը, Ալփեոսի որդի Հակոբոսն ու Նախանձահույզ Շմավոնը և Հակոբոսի որդի Հուդան: Բոլորը միասնաբար, հարատև աղոթքով էին անցկացնում օրերը շատ կանանց հետ, Հիսուսի մոր՝ Մարիամի և Հիսուսի եղբայրների հետ:

Բառարան

ՇԱԲԱԹ ՕՐՎԱ ՃԱՆԱՊԱՐՀ՝
հազիվ 1կմ. հրեաներին թույլատրվում էր շաբաթ օրով միայն այդքան ճանապարհ գնալ:

Քննենք Սուրբ Գիրքը

Հիսուս Քրիստոսի դեպի երկինք վերանալը նկարագրվում է Ղուկաս ավետարանչի երկու գրքերում՝ իր Ավետարանում և ավելի ընդարձակ՝ Գործք առաքելոցի 1-ին գլխում: Բացի Ղուկասից, Մարկոսը միակ ավետարանիչն է, որ հակիրճ նկարագրում է Համբարձումը:

■ Համաբարբառի օգնությամբ Ղուկասի և Մարկոսի ավետարաններից գտի՛ր այդ հատվածները և ամրագրի՛ր ներքևի տողերին: Կարդա՛ և համեմատի՛ր յուրաքանչյուր հատվածը Գործք առաքելոցինի հետ, այնուհետև իրար հետ: Լրացրո՛ւ խաչբառը՝ ըստ հարակից նախադասությունների պատասխանների:



Ուղղահայաց

1. Ո՞վ հաստատեց նրանց ստացած պատվերը:
2. Ըստ Մարկոսի՝ ի՞նչ արեցին առաքյալները Համբարձումից անմիջապես հետո:
4. Ո՞ւմ անունն է տրվում Համբարձումից հետո վերնատանը մնացած տղամարդկանցից:
6. Ո՞վ հայտնեց առաքյալներին, թե Հիսուսը դարձյալ պիտի գա այնպես, ինչպես տեսաք նրա երկինք գնալը:

Հորիզոնական

3. Վերնատանը մնացող կանանց մեջ միայն մեկ հոգու անունն է նշվում: Դա Մարիամն էր՝ Հիսուսի .....:
5. Ո՞ր գրքում ենք կարդում հրեշտակների երևման մասին:
7. Ո՞վ է հիշատակվում Բարթուղիմեոսից հետո:
8. Ո՞ր գրքում է հիշատակվում, թե Հիսուսը երկինք վերանալուց առաջ օրհնում է առաքյալներին:

■ Ընթերցի՛ր Պողոս առաքյալի՝ Եբրայեցիներին ուղղված նամակից քաղված հետևյալ հատվածը Հիսուս Քրիստոսի համբարձման մասին, որում մեջբերվում է Հայր Աստծո խոսքը. «Դու իմ Որդին ես, այսօր ես ծնեցի քեզ»: Համաբարբառի օգնությամբ գտի՛ր երկու այլ հղումներ ավետարաններում, որտեղ Աստված խոսում է Հիսուսի մասին որպես իր Որդու: Բացի՛ր այդ հատվածները Աստվածաշնչում, կարդա՛ դրանք, ապա արտագրի՛ր ներքևի տողերին:

...իր անձով մեր մտքերը սրբելուց հետո նստեց երկնքում, Աստծո՝ գերագույն զորության աջ կողմում: Նա ավելի բարձր է հրեշտակներից, ինչպես ցույց է տալիս Աստծո կողմից նրան տրված գերազանց անունը. որովհետև ո՞ր հրեշտակից Աստված երբեիցե ասաց. «Դու իմ որդին ես, այսօր ես ծնեցի քեզ»: Կամ ո՞ր հրեշտակին ասաց. «Ես նրան հայր եմ լինելու, և նա՝ ինձ որդի»:

Եբրայեցիներին 1.3-5

.....

.....

.....

.....

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՍՈՒՐԲ ՂՈՒԿԱՍԸ՝ ՊԱՏՄԱԳԻՐ ԱՎԵՏԱՐԱՆԻՉԸ



Գործք առաքելոցից քո կարդացած հատվածը ներկայացնում է Հիսուս Քրիստոսի՝ երկինք համբարձվելու ամենաընդգրկուն նկարագրությունը: Այն գրվել է Սբ Ղուկաս ավետարանչի կողմից, ով հունախոս բժիշկ էր, միակ հեթանոսը չորս ավետարանիչների մեջ: Ղուկասը ճամփորդել է Սբ Պողոսի հետ և օգնել նրան քարոզելու քրիստոնեական հավատքը շատերին: Պողոսի առաքելական երրորդ ուղևորության ժամանակ Ղուկասը 57 տարեկան էր: Չնայած այդ տարիքում շատերը չէ, որ կհամաձայնվեին համարձակորեն բաց ծովով նավարկել, բայց և Ղուկասը պատրաստակամ ուղեկցեց Պողոսին՝ Փիլիպպեից մինչև Երուսաղեմ երկարատև ճամփորդության ամբողջ ընթացքում:

Ճամփորդելիս Ղուկասը զրուցում էր ամեն տեսակի մարդկանց հետ: Նրան հանդիպած մարդիկ պատմում էին իրենց փորձառությունների մասին որպես Եկեղեցու անդամներ և Հիսուս Քրիստոսի հետևորդներ: Նա նաև հավաքում էր տեղեկություններ փաստաթղթերից, կարդում էր Մարկոսի և Մատթեոսի ավետարանները և կատարում էր շատ կարևոր նշումներ: Շուրջ 60 տարեկանում Ղուկասը գրում է իր Ավետարանը (Գործք առաքելոցի սկզբում դրա մասին նա ակնարկում է որպես «առաջին գիրք»): Այն պարունակում է շատ մանրամասներ Հիսուս Քրիստոսի կյանքի և գործի մասին, որոնց չենք հանդիպում այլ գրքերում:

Այնուհետև, մոտ 63 տարեկանում Ղուկասը գրում է Գործք առաքելոց գիրքը, որում ներկայացնում է վաղ Եկեղեցու պատմությունը և արձանագրում Սբ Պողոսի գործունեությունը: Քրիստոսի համբարձումն ամենաառաջին իրադարձությունն է, որ Ղուկասը նկարագրում է՝ ներկայացնելով առաջին քրիստոնյաների պատմությունը և այն դժվարությունները, որոնց հանդիպում էին թշնամաբար տրամադրված հասարակության մեջ: Սակայն Ղուկասը նաև ուրախությամբ գրում է այն սիրո մասին, որ իրենք ցուցաբերում էին իրար նկատմամբ և բոլոր մարդկանց հանդեպ՝ վճռակամորեն քարոզելով ճշմարիտ հավատը յուրաքանչյուր մարդու:

1. Ղուկասը երկու անգամ հիշատակվում է Սբ Պողոսի նամակներում՝ **Կողոսացիներին 4.14 և Բ Տիմոթեոսին 4.11**: Կարդա՛ այդ համարները: Նամակներից ո՞ր մեկում է նշվում, որ Ղուկասը մինչև վերջ եղել է Պողոսի հետ:
2. Քո կարծիքով Ղուկասն ինչպիսի՞ հարցումներ է տվել ճամփորդության ընթացքում իրեն հանդիպած մարդկանց:
3. Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ էր Ղուկասը կարևորում Պողոսի գործերն արձանագրելը՝ գրելով Գործք առաքելոցը: Վերընթերցի՛ր Գործք առաքելոցից քաղված Աստվածաշնչի դասը և որոշի՛ր, թե որ պարբերության մեջ է Ղուկասը նշում առաքյալների գործերի մասին գիրք գրելու պատճառը:

.....

.....

.....

.....

.....

.....

ԵՐԳԵՆՔ ԵՎ ՏԵՍՆԵՆՔ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Ահա Քրիստոսի Համբարձման տոնի Ճաշու ԱՁ շարականը.

Աստվածային իշխանությամբ այսօր Տերը բարձրացավ հայրական կառքերի վրա. նրան սպասարկում էին հրեշտակների դասերը, որոնք երգում էին ասելով. «Բարձրացրե՛ք, ո՛վ իշխաններ, դռները ձեր, թող ներս մտնի փառքերի թագավորը»:

Վերնական իշխանությունները հիացմունքով և սոսկալի ձայնով ասում էին իրար. «Ո՞վ է այս փառքերի թագավորը, որ գալիս է մարմնով և սքանչելի զորությամբ. բարձրացրե՛ք, ո՛վ իշխաններ ...»:

Հրաշալի ձայնով երգում էին պետությունները վերնական, նոր երգեր էին երգում ասելով. «Ահա սա՛ է փառքերի թագավորը, աշխարհի փրկիչը և ազատարարը մարդկության. բարձրացրե՛ք, ո՛վ իշխաններ ...»:

1. Շարականն ինչպե՞ս է նկարագրում Քրիստոսի Համբարձումը:
2. Հրեշտակների ո՞ր դասերն են «գործակցում» Հիսուսի Համբարձմանը:
3. Ի՞նչ «անուններով» է բնութագրվում Համբարձյալ Քրիստոսը, և ո՞ր բառերն են հայտնում մեզ դրանց մասին:

■ Ներքևի տողերին գրի՛ր քո մտածումները:

.....

.....

.....

.....

ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՀԱՎԱՏՔԻ ՄԱՍԻՆ

1. Մանրանկարում ինչպե՞ս է ցույց տրվում, թե որտեղ տեղի ունեցավ Համբարձումը:
2. Ի՞նչ են անում հրեշտակները:
3. Ո՞վ է մանրանկարի ներքևի շարքի կենտրոնում պատկերված կինը:

■ Ներքևի տողերին գրի՛ր քո մտածումները:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

ՏՈՆԻ ՇԱՐԱԿԱՆԸ

Դասարանի հետ միասին սովորի՛ր և երգի՛ր Համբարձման տոնի Օրհնության կանոնը:

Համբարձվեց մեր Տերը երկինք՝ աշակերտներին ասելով. «Նստե՛ք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ երկնքից զորություն կստանաք»:

Մտավ երկինք բյուրավոր զորքով և հրեշտակների բազմությամբ, որոնք աղաղակում էին և ասում. «Օրհնյալ ես դու, որ գալիս ես Տիրոջ անունով»:

Նստելով Ծնողի աջ կողմում՝ կատարեց խոստացած պարգևը, թե Սուրբ Հոգին կիջնի ձեզ վրա՝ բերելով մեծ ողորմություն:



ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ

Քրիստոսն ասաց առաքյալներին. «Դուք իմ վկաները կլինեք»: Այս խոսքերն ինչպե՞ս են ազդում քեզ վրա: Ի՞նչ եղանակով ես ցանկանում լինել Տիրոջ վկան: Ինչպե՞ս ես պատրաստվում լինել նրա վկան հենց հիմա: Ինչպե՞ս ես ակնկալում հանդիպել Տիրոջը և ներկայացնել նրան վկա դառնալու քո պատրաստակամությունը: Ըստ ցանկության կարող ես գրել կամ նկարել:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասի առանցքը Քրիստոսի Համբարձումն էր և առաքյալների սպասումը Տիրոջ խոստման կատարմանը՝ կապված Սուրբ Հոգու ուղարկման հետ: Աշակերտները նաև ծանոթացան Սբ Ղուկաս ավետարանչի մասին որոշ տեղեկությունների, ով մեզ է ավանդել Համբարձման մասին ամենաամբողջական նկարագրությունը: Միաժամանակ սովորեցին Համբարձմանը նվիրված շարականներ: Թող ձեր զավակը պատմի Ղուկասի, ապա Համբարձման տոնի մասին:

Միասի՛ն զրուցեք ձեր սպասումների շուրջ, թե ինչպես է դա առնչվում որպես քրիստոնյաներ մեր ապրելակերպին՝ մանավանդ Երկնքի արքայության ակնկալիքի հույսով: Ձեր զավակի հետ գտե՛ք եղանակներ, որոնցով կկարողանաք առաքյալների օրինակով դառնալ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի վկաները ձեզ հանդիպող մարդկանց առաջ:

Ա Ղ Ո Թ Ք Ն Ե Ր

16 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ԿՆԻՔ ՀԱՎԱՏՈ (ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ)

Հավատում ենք մեկ Աստծո՝ Ամենակալ Հորը, երկնքի և երկրի, երևելի և աներևույթ էակների Արարչին:

Եվ մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն, ծնված Հայր Աստծուց, Միածին, այսինքն՝ Հոր նույն էությունից: Աստված՝ Աստծուց, Լույս՝ Լույսից, Ճշմարիտ Աստված՝ Ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ թե արարած: Բնությամբ Հոր հետ նույնը, որի միջոցով գոյացան ամեն ինչ երկնքում և երկրի վրա, տեսանելիներն ու անտեսանելիները: Ով մեզ՝ մարդկանցս, և մեր փրկության համար երկնքից իջնելով՝ մարմնացավ, մարդացավ, կատարելապես ծնվեց Սուրբ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգու զորությամբ, որի միջոցով առավ մարմին, հոգի և միտք և այն ամենը, ինչ մարդկային բնությունն ունի ճշմարտապես և ոչ թե առերևույթ. չարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով համբարձվեց երկինք և նստեց Հոր աջ կողմում: Գալու է նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու ողջերին ու մեռածներին, և նրա թագավորությունը վախճան չպիտի ունենա:

Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն, որ անստեղծ է և կատարյալ, ով խոսեց Օրենքի, մարգարեների և Ավետարանի մեջ, իջավ Հորդանան գետ, քարոզվեց առաքյալների կողմից և բնակվեց սուրբերի մեջ:

Հավատում ենք նաև մեկ, ընդհանրական և առաքելական սուրբ Եկեղեցուն, մեկ մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության և թողության, մեռածների հարության, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանին, երկնքի արքայությանը և հավիտենական կյանքին:

2. ՊԱՀՊԱՆԻՉ ԱՂՈԹՔ

Բարձրյալ Քրիստոսին դարձնենք մեզ ապավեն, որպեսզի չարը չմոտենա մեզ և բոլոր ցավերն ու տանջանքները հեռու մնան մեր բնակարաններից. Ամեն:

3. ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ ԱՊԱՎԻՆԵԼՈՒ ԱՂՈԹՔ

Քո խաչը թող մեզ ապավեն լինի, Տե՛ր Հիսուս, երբ գաս Հոր փառքով լուսավոր ամպերի միջով: Այնժամ թող մենք՝ քեզ հուսացողները, չամաչենք, այլ քո զորությամբ մեծապես ուրախանանք քո Սուրբ Աջի ներքո՝ որպես լույսի որդիներ և ցերեկվա որդիներ:

4. ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ՀԱՄԱՐ

(Հատվածներ Սբ Ներսես Շնորհալու աղոթքից, որ կազմված է 24 տնից՝ ըստ օրվա ժամերի)

1. Հավատով խոստովանում և երկրպագում եմ Քեզ՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի, անստեղծ և անմահ բնություն, Արարիչ հրեշտակների և մարդկանց և բոլոր ստեղծվածների. և ողորմի՛ր Քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:

2. Հավատով խոստովանում և երկրպագում եմ Քեզ՝ անբաժանելի լույս, միասնական Սուրբ Երրորդություն և մեկ Աստվածություն, Արարիչ լույսի և հալածիչ խավարի, հալածի՛ր իմ հոգուց մեղքերի և տգիտության խավարը. և լուսավորի՛ր միտքս այս ժամին աղոթելու Քեզ հաճույքով և Քեզնից ստանալու իմ խնդրանքները. և ողորմի՛ր Քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:

3. Հա՛յր երկնավոր, Աստվա՛ծ ճշմարիտ, որ առաքեցիր Քո սիրելի Որդուն փնտրելու մոլորված ոչխարի, մեղավոր եմ երկնքի և Քո առջև, ընդունի՛ր ինձ, ինչպես անառակ որդուն, և հագցրո՛ւ ինձ առաջին պատմուճանը, որից զրկվեցի մեղքի պատճառով. և ողորմի՛ր Քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:

4. Որդի՛ Աստծո, Աստվա՛ծ ճշմարիտ, որ խոնարհվեցիր հայրական ծոցից և մեր փրկության համար մարմին առար սուրբ Կույս Մարիամից. խաչվեցիր, թաղվեցիր և հարություն առար մեռելներից և փառքով համբարձվեցիր Հոր մոտ. մեղավոր եմ երկնքի և Քո առջև, երբ Քո արքայությամբ գաս, ինձ էլ հիշի՛ր ինչպես ավազակին. և ողորմի՛ր Քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:

5. Հոգի՛ Աստծո, Աստվա՛ծ ճշմարիտ, որ իջար Հորդանան գետ և վերնատուն, և լուսավորեցիր ինձ սուրբ Ավազանի մկրտությամբ, մեղավոր եմ երկնքի և Քո առջև, մաքրի՛ր ինձ վերստին աստվածային Քո հրով, ինչպես սուրբ առաքյալներին՝ հրեղեն լեզուներով. և ողորմի՛ր Քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:

6. Ողորմություն պարգևող, պարգևի՛ր ինձ ուղղափառ հավատով և բարի գործով և Քո սուրբ մարմնի և արյան հաղորդությամբ գալ դեպի Քեզ. և ողորմի՛ր Քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:

7. Փառավորյա՛լ Տեր, ընդունի՛ր Քո ծառայի աղաչանքները և բարությամբ կատարի՛ր իմ խնդրանքները՝ բարեխոսությամբ Սուրբ Աստվածածնի, Հովհաննես Մկրտչի, Սուրբ Ստեփանոս Նախավկայի, Սուրբ Գրիգոր մեր Լուսավորչի, սուրբ առաքյալների, մարգարեների, վարդապետների, մարտիրոսների, հայրապետների, ճգնավորների, կույսերի, մենակյացների և երկնավոր ու երկրավոր բոլոր սուրբերի: Եվ Քեզ փառք և երկրպագություն անբաժանելի Սուրբ Երրորդությանդ հավիտյանս հավիտենից. ամեն: